

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅՔՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԻԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ 2020
YEREVAN "HAYBUSAK" UNIVERSITY SCIENTIFIC AND SCIENTIFIC-METHODOLOGICAL JOURNAL



**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ECONOMICS
PEDAGOGY AND PSYCHOLOGY
JURISDICTION**

ԵՐԵՎԱՆ - YEREVAN - 2020

ՀՏԴ 33:34:159.9:37
ԳՄԴ 65+67+88+74
Ե 813

*Երաշխավորված է Երևանի «Հայրուսակ» համալսարանի գիտական
խորհրդի որոշումով*

Խմբագրական կոլեգիա.

Աբրահամյան Մարտին – ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆ,
գլխավոր խմբագիր

Բոստանջյան Վարդան – տնտեսագիտության դոկտոր, պրոֆ,

Գրիգորյան Սասուն – բժշկագիտության դոկտոր, պրոֆ,

Պետրոսյան Հայկ – մանկավարժական գիտ. դոկտոր, պրոֆ,

Պողոսյան Էդուարդ – պատմական գիտ. դոկտոր, դոց,

Սաֆարյան Գառնիկ – իրավագիտության դոկտոր, պրոֆ,

Վահրադյան Հասմիկ – կենսաբանական գիտ. դոկտոր, պրոֆ,

Օտարերկրյա անդամներ՝

Բաբայան Արսեն – բժշկագիտ. դոկտոր, պրոֆ, առաջադարձ
մասնագետ, OrthoLiga Spine and Joint Center in Munich,
Գերմանիա,

Բալասանյան Դիանա – բանասիրության դոկտոր, Լա
Լագունայի համալսարան, Թեներիֆե, Իսպանիա

Մարիա Անջելո-Հաթար, բժշկագիտության դոկտոր, Ծերացման
դեմ ամերիկյան բժշկության ակադեմիայի տնօրեն, Քուվեյթ,

Ե 813 Երևանի «Հայրուսակ» համալսարանի գիտական և գիտամեթոդական
հանդես – 2020, Երևան: Էդիթ Պրինտ, 2020, 128 էջ:

*Հանդեսը պարունակում է 2019-2020 ուստարում Երևանի «Հայրուսակ»
համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի, ինչպես նաև
խմբագրական կոլեգիայի օտարերկրյա անդամների գիտական և գիտամե-
թոդական աշխատանքները՝ տնտեսագիտություն, մանկավարժություն և հոգե-
բանություն, իրավագիտություն ոլորտներում:*

ՀՏԴ 33:34:159.9:37
ԳՄԴ 65+67+88+74

ISBN 978-99930-805-7-2

© «Հայրուսակ» հրատ., 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ	5
----------------------------------	---

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բոստանջյան Վ.Բ.

Ֆինանսական կայունությունը որպես տնտեսական զարգացման կարևորագույն պայման	6
---	---

Հարությունյան Ն.Ս.

Կայուն գյուղատնտեսությունը հայաստանում	14
--	----

Գևորգյան Գ.

Ինքնակատարելագործման սկզբունքները	21
---	----

Ասատրյան Ս., Ասատրյան Լ.Ս.

Հակամենաշնորհային կարգավորման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում	27
---	----

Գևորգյան Գ., Դանիելյան Հ.

ՀՀ հանրային ծառայությունների հիմնախնդիրները (գազամատակարարման ոլորտի օրինակով)	32
---	----

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պեպրոսյան Հ.Հ.

Մանկավարժական պրոֆեսիոնալիզմը կոմպետենտային մոտեցման և դասավանդման ռազմավարությունների համատեքստում	39
---	----

Պեպրոսյան Հ.Հ.

Մանկավարժական կրթության զարգացման ուղղությունները	48
---	----

Balasanayan D.G.

Lexical Bundles in Psychology Research Articles: a Corpus-Driven Study	56
--	----

Վահանյան Ա.Վ., Մխիթարյան Ի.Ս.

Հոգեբանական գործոնը ռազմական հետախուզությունում	76
---	----

Խուզեյան Ա.Վ., Հովհաննիսյան Գ.Վ.

Ստեղծագործական մտածողության զարգացումը կրտսեր դպրոցում՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ	84
---	----

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սաֆարյան Գ.Հ., Հարությունյան Լ.Ս.

Իրավունքի աղբյուրների հասկացությունը և ընդհանուր բնութագրականը91

Սաֆարյան Գ.Հ., Գրիգորյան ԱԴ

Արևմտահայերի 1863 թվականի ազգային սահմանադրության
իրավաքաղաքական գաղափարները 96

Գրիգորյան Ս.Ս.

Պետական կառավարման որոշ հարցերի շուրջ104

Գրիգորյան Գ.Մ.

«Գույք» հասկացության որոշ հարցեր110

Գրիգորյան Գ.Մ., Սահակյան Ս.

Վարձակալական պայմանագրի կազմման առանձնահատկությունները 115

Գրիգորյան Ս.Ս., Տերոյան Ս.

Փախստական հասկացության կարգավորումները ազգային և
միջազգային օրենսդրությամբ 123

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Հարգելի ընթերցող

Երևանի Հայրուսակ համալսարանը շուրջ կնշի իր հիմնադրման 30 ամյակը, որը նաև մեր Երրորդ Հանրապետության տարիքն է: Այս ընթացքում, Հանրապետությանը համընթաց, դիմակայել ենք բազում օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունների, անցել ենք որոնումների, վերելքների ու վայրէջքների, հիասթափությունների ու հաջողությունների ուղիով: Սակայն նույնիսկ ամենադժվարին պահերին չենք կորցրել հավատը թե՛ Հանրապետության, և թե՛ մեր համալսարանի վառ ապագայի նկատմամբ...

Այսօր Երևանի «Հայրուսակ» համալսարանի շուրջ 70 ուսումնագործնական բազաներում կրթություն են ստանում հազարավոր երիտասարդներ՝ մեր հանրապետությունից և արտերկրից...

Այս տարիների ընթացքում համալսարանը ունեցել է նկատելի ձեռքբերումներ՝ 2018-2019թ անցել է միջազգային հավատարմագրման գործընթացը և եվրոպական հեղինակավոր EKA կազմակերպության հանձնաժողովի կողմից ստացել ինստիտուցիոնալ հավատարմագրում... Սակայն առավել տպավորիչ են համալսարանի մտպակա և հեռահար ծրագրերը՝ գիտահետազոտական, կրթության բարեփոխումների, եվրոպական գիտակրթական տարածքում ինտեգրվելու ոլորտներում:

Հետազոտությունների զարգացման 2021-2025 թ ռազմավարական ծրագրով նախատեսված է ժամանակակից սարքավորումներով հագեցած «Ավանդական բժշկության գիտահետազոտական կենտրոն»-ի հիմնումն ու գործարկումը: Այդ նպատակով հայտարարվել է միջազգային մրցույթ, առանձնացվել է Կենտրոնի համար անհրաժեշտ տարածք...

Ընդունված են ՊԴ կազմի գիտական աշխատանքները միջազգային գրախուսվող հանդեսներում տպագրման, միջազգային գիտաժողովներում զեկուցումների խրախուսման տարբեր միջոցառումներ...

Բուհի հիմնադիրների խորհուրդը, համալսարանը սեփական կադրերով համալրելու նպատակով, որոշել է ապահովել նպատակային առկա, անվճար ուսուցման ասպիրանտների ուսման ծախսերը...

Համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմը 2019/2020 ուստարում հրատարակել է ավելի քան հարյուր գիտական հոդվածներ և գիտամեթոդական աշխատանքներ:

Ներկա Հանդեսում ներկայացված են ստացված օրիգինալ գիտական և գիտամեթոդական արդյունքների ոչ ամբողջական պատկերը: Նրանում հիմնականում ներառված են երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների մասնակցությամբ կատարված աշխատանքները:

ԵՀՀ ռեկտոր՝

Ս.Լ. Հարությունյան
20.08.2020

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆ

^{1,2}ԲՈՍՏԱՆՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

¹ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ

²Երևանի «Հայրուսակ» համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ

Ամփոփում՝ Հոդվածը նվիրված է ֆինանսական կայունությանը՝ որպես տնտեսական զարգացման կարևորագույն պայմանի ապահովման հիմնավորմանը, վերջինիս առանձնահատկությունների ուսումնասիրությանը և նշված խնդրի լուծման արդյունավետ ուղիների բացահայտմանը: Հեղափոխությունում ներկայացված է ՀՀ դրամային իշխանությունների դերը ֆինանսական համակարգի զարգացման համար անհրաժեշտ քաղաքականության մշակման, ինչպես նաև հանրապետության տնտեսությունում ֆինանսական կայունության ապահովման գործում:

Հիմնաբառեր. Տնտեսական համակարգ, ֆինանսական կայունություն, դրամավարկային քաղաքականություն, բանկային գաղտնիք, արդյունավետություն, զարգացում:

Ժամանակակից աշխարհում ընթացող զարգացումների պայմաններում մեծապես կարևորվում է ֆինանսական համակարգի կայունության ապահովման խնդրի լուծումը: Դրա գլխավոր պատասխանատուն, որպես կանոն, լինում են երկրների կենտրոնական բանկերը, քանի որ ֆինանսական շուկաների և բանկային համակարգի կայունության ապահովմանն ուղղված դրամավարկային քաղաքականության իրականացումը համարվում է այդ կառույցների հիմնական նպատակը:

Ֆինանսական կայունությունը ենթադրում է ֆինանսական համակարգի փլուզման կամ խափանման բացառում, որի պարագայում ապահովվում է անհրաժեշտ իրացվելիության մակարդակ, գործարքների անխափան իրականացում, խնայողությունների ռացիոնալ մոբիլիզացում և դրանց արդյունավետ ներդրում: Ամենապարզ սահմանմամբ ֆինանսական կայունությունը այն է, երբ ֆինանսական ակտիվների գները չեն ենթարկվում մեծ տատանումների, ֆինանսական կազմակերպությունները ունակ են կատարելու իրենց ստանձնած պարտականությունները ավանդների ներգրավման և վարկերի տեղաբաշխման, վճարումների և հաշվարկների իրականացման, ֆինանսական ռիսկերի արդյունավետ կառավարման, ինչպես նաև շոկային իրավիճակներում

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հնարավոր բացասական զարգացումների զսպման գործառույթներում:


Ֆինանսական կայունությունն ընդհանրական հասկացություն է, որը վերաբերում է միմյանց հետ փոխկապակցված ֆինանսական համակարգի բաղկացուցիչներին՝ ֆինանսական հաստատություններին, ֆինանսական ենթակառուցվածքներին և ֆինանսական շուկաներին:

Ֆինանսական կայունությունը կարող է խաթարվել, եթե նշված համակարգի բաղկացուցիչներից որևէ մեկում անբարենպաստ զարգացումներն էական անդրադարձ ունենան ամբողջ ֆինանսական համակարգի բնականոն գործունեության վրա: Ցնցումները ֆինանսական համակարգի բաղկացուցիչներում կարող են առաջացնել մակրոտնտեսական տատանումներ, և հակառակը: Նման զարգացումները բացառելու նպատակով մշակվում է համապատասխան քաղաքականություն: Այն մեխանիզմների և գործընթացների մի ամբողջություն է, որի հիմնական տարրեր են հանդիսանում մշտադիտարկումը, վերլուծությունը, գնահատումը և որպես վերջնական արդյունք՝ անհրաժեշտ քաղաքականության կիրառումը (Գծապատկեր 1): Ֆինանսական կայունության ապահովման առաջնային խնդիր է ֆինանսական համակարգի և մակրոմիջավայրի մշտադիտարկումն ու վերլուծությունը: Այդ ուղղությամբ աշխատանքները ենթադրում են՝ հավանական ռիսկերի բացահայտում, դրանց վերլուծություն և գնահատում: Հավանական ռիսկերի բացահայտման ուղղությամբ կատարված վերլուծությունների արդյունքները կիրառվում են ֆինանսական համակարգի բաղկացուցիչների և մակրոտնտեսական անբարենպաստ տատանումների վաղ ահազանգման համար:

Հավանական ռիսկերի բացահայտման համար որպես վերլուծության օբյեկտ դիտարկվում են ինչպես ֆինանսական համակարգի բաղադրիչները (ֆինանսական հաստատությունները, ֆինանսական ենթակառուցվածքները և ֆինանսական շուկաները), այնպես էլ մակրոտնտեսության հիմնական ոլորտները: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրվում են բոլոր այն գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական համակարգի կայունության վրա: Հավանական ռիսկերի բացահայտմանը հաջորդում է դրանց ազդեցության չափի գնահատումն ամբողջ ֆինանսական համակարգի կայունության վրա:

Ֆինանսական կայունության խոցելիությունը գնահատելու նպատակով ֆինանսական համակարգի տարբեր բաղադրիչների և դրանց տարրերի, ինչպես նաև մակրոտնտեսական համապատասխան ցուցանիշների համար սահմանվում են տատանումների թույլատրելի միջակայքեր, որոնց սահմանները հիմք են հանդիսանում այս կամ այն տիպի քաղաքականության կիրառման համար: Կախված ֆինանսական համակարգի կայունությունը բնութագրող գործոնների տատանումներից և դրանց ազդեցության չափից, առանձնացվում են կենտրոնական բանկերի կողմից ֆինանսական կայունության ապահովման նպատակով իրականացվող կանխարգելիչ, շտկող կամ վերականգնող քաղաքականություններ:

Գծապատկեր 1. Ֆինանսական կայունության ապահովման համակարգը



Երբ ֆինանսական համակարգը գնահատվում է կայուն կամ ցուցանիշների տատանումները թույլատրելի միջակայքում են, ապա համապատասխան քաղաքականությունը կրում է կանխարգելիչ բնույթ: Կանխարգելիչ միջոցառումներն ուղղված են կայունության պահպանմանը և իրականացվում են վերահսկողական ու կարգավորող գործիքների կիրառման միջոցով: Կանխարգելիչ քաղաքականության գործիքները շուկայի զարգացումներին ու պահանջներին զուգահեռ մշտապես վերանայվում և արդիականացվում են: Մասնավորապես, ֆինանսական նորամուծությունները, ինչպիսիք են ակտիվների արժեթղթավորումը և ածանցյալ գործիքները, կարող են զգալիորեն փոխել ֆինանսական շուկաների մասնակիցների միջև ռիսկերի բաշխվածությունն, ինչը պահանջում է իրականացվող վերլուծությունների և գնահատման մեխանիզմների ճշգրտումներ: Այս տեսանկյունից ֆինանսական համակարգի և ֆինանսական գործիքների արդիականացմանը զուգահեռ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

անհրաժեշտ է իրականացնել նաև համակարգի թափանցիկության բարձր աստիճանի ապահովմանն ուղղված վերահսկողական քաղաքականություն:

Ֆինանսական ցուցանիշների տատանումները կարող են լինել թույլատրելի միջակայքում, սակայն ունենալ այդ միջակայքից դուրս գալու որոշակի հավանականություն: Դա կարող է ֆինանսական համակարգի ինչ-որ մի հատվածի, կամ ոչ ֆինանսական հատվածի, տատանումների արդյունք լինել: Մասնավորապես, հարևան կամ հիմնական առևտրային գործընկեր երկրում ֆինանսական միջավայրի փոփոխությունը կամ ճգնաժամային տատանումները կարող են ի սկզբանե առողջ ներքին ֆինանսական համակարգը լուրջ դժվարությունների առջև կանգնեցնել: Ֆինանսական կայունության ապահովման նպատակով իրականացվող քաղաքականությունն այս դեպքում ընդունում է շտկող ուղղվածություն:

Ֆինանսական ցուցանիշների տատանումները կարող են լինել տատանումների թույլատրելի միջակայքից դուրս և հետևաբար համակարգը կարող է ի վիճակի չլինել իրականացնել իր ֆինանսական միջնորդի և վճարահաշվարկային գործառույթները: Այս դեպքում քաղաքականությունը պետք է ստանա վերականգնողական ուղղվածություն, ինչը սովորաբար ներառում է ճգնաժամերի հաղթահարման գործընթացների մի ամբողջություն: Ընդ որում, այս դեպքում քաղաքականություն իրականացնողներ կարող են լինել ինչպես տվյալ երկրի, այնպես էլ այլ երկրների ֆինանսական կարգավորման համար պատասխանատու մարմինները և միջազգային ֆինանսական կազմակերպությունները: Գործնականում նշված քաղաքականությունները հստակ տարանջատելու նպատակով և անցումը մեկ տեսակի քաղաքականությունից մյուսին ապահովելու համար ֆինանսական կայունության վրա ազդող գործոնները բաժանվում են ըստ բուն ֆինանսական համակարգում և դրանից դուրս ծագած ներքին ու արտաքին ազդակների: Վերջիններով պայմանավորված ռիսկերի գնահատման համար Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակվել է Ֆինանսական կայունության բնութագրիչների ցանկ: Այն ընդգրկում է ինչպես ֆինանսական, այնպես էլ տնտեսական համակարգերին վերաբերող ցուցանիշներ: Սակայն, յուրաքանչյուր երկիր, ելնելով իր տնտեսության առանձնահատկություններից, պետք է մշակի ֆինանսական կայունության այնպիսի ցուցանիշներ, որոնք թույլ կտան նախապես բացահայտել տվյալ երկրի տնտեսության և ֆինանսական համակարգի առավել խոցելի ոլորտների հիմնական ռիսկերը: Դրանց կառավարումը կարող է իրականացվել պետական տարբեր կառույցների կողմից, սակայն ֆինանսական կայունության գործառույթը կենտրոնական բանկերին վերագրելը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ կառույցների հիմնական խնդիրը դրամավարկային քաղաքականության իրականացումն է, որոնք ֆինանսական կայունության ապահովման առումով օրենքով սահմանված կարգօժտված են բավարար լիազորություններով:

Ֆինանսական համակարգի բաղադրիչների վերահսկող կարող են լինել տարբեր հաստատություններ, սակայն Կենտրոնական բանկը միակ կարգա-

վորող օղակն է, որն ունակ է գնահատել իրական և ֆինանսական հատվածների փոխազդեցությունները, կապել դրանք միկրոմակարդակի զարգացումների հետ և մշակել ֆինանսական կայունության ապահովման արդյունավետ քաղաքականություն: Կենտրոնական բանկը պատասխանատվություն է կրում ֆինանսական կայունության ապահովման համար նաև այն առումով, որ այն վճարամիջոցների միակ թողարկողն է և միաժամանակ հանդիսանում է վերջին ատյանի վարկատու բանկային հաստատությունների համար: Անկայունության պայմաններում ֆինանսական հատվածում կարող է առաջանալ իրացվելիության խնդիր, որի միակ լուծողն է հանդիսանում Կենտրոնական բանկը: Նման պայմաններում կենտրոնական բանկը հնարավորություն ունի ճգնաժամային տարբեր իրավիճակներում իրացվելիության առաջարկի ավելացման կամ կրճատման միջոցով մեղմել հնարավոր տնտեսական կորուստները:

Կենտրոնական բանկի՝ որպես ֆինանսական կայունություն ապահովող մարմնի օգտին է խոսում նաև այն փաստը, որ այն պատասխանատու է վճարահաշվարկային համակարգի անխափան գործունեության համար և կարող է միջոցներ ձեռնարկել համակարգային ռիսկերը կանխելու համար: Տվյալ հիմնավորումը կարևոր է, քանի որ հենց կենտրոնական բանկն է հանդիսանում վճարահաշվարկային ծառայություններ մատուցող և զարգացնող հիմնական օղակը: Երկրներում, որոնցում վերահսկողության գործառույթը նույալս պատկանում է կենտրոնական բանկերին, ունենում են իրական և ազդեցիկ լծակներ ֆինանսական հաստատությունների ֆինանսական կայունության վրա ազդելու համար: Վերահսկողության գործառույթը հնարավորություն է տալիս ճշգրտող միջոցառումների շնորհիվ ժամանակին չեզոքացնել որևէ ֆինանսական հաստատությունում առաջացած անհավասարակշռությունները և կանխել դրանց հետագա տարածումը: Այն երկրներում, որտեղ վերահսկող մարմինն անջատ է գործում կենտրոնական բանկից, ֆինանսական կայունության ապահովման շրջանակներում դրամավարկային և վերահսկող մարմինների միջև կնքվում են համապատասխան փոխհամաձայնագրեր տնօրինվող տեղեկատվության անխափան հոսքն ապահովելու նպատակով:

Հարկ է նշել նաև, որ ֆինանսական կայունության ապահովման համար կենտրոնական բանկերի կողմից դրամավարկային կայունության և վճարահաշվարկային համակարգերի բնականոն գործունեության ապահովման համար իրականացվող միջոցառումների հիմնական մասը նույնական են: Ավելին, դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմի միջոցով կենտրոնական բանկը ունակ է ազդել իրական հատվածի զարգացումների վրա ևս, և հետևաբար ֆինանսական կայունության ապահովման դեպքում միայն իրականացվող դրամավարկային քաղաքականությունը կարող է առավել արդյունավետ լինել: Ֆինանսական կայունության ապահովման պատասխանատվությունը կրելով, Կենտրոնական բանկերը համագործակցում են Կառավարության (Գանձապետարան, Ֆինանսների նախարարություն) և Ֆինանսական կարգավորման համար պատասխանատու

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

այլ մարմինների հետ, եթե այդպիսիք գոյություն ունեն:

Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆինանսական կայունության ապահովման իրականացման գործընթացում էական են.

- կենտրոնական բանկերում ֆինանսական կայունության համար պատասխանատու կառուցվածքային միավորների առկայությունը,
- վերջինիս գործառույթների տարանջատումը և համագործակցության ապահովումը Կենտրոնական բանկի այլ ֆունկցիոնալ ստորաբաժանումների հետ:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ Կենտրոնական բանկերի կառուցվածքներում ֆինանսական կայունության և դրամավարկային կայունության համար պատասխանատու ստորաբաժանումները պետք է տարանջատված լինեն ըստ գործառույթների: Դա հիմնականում բացատրվում է այն փաստով, որ ֆինանսական կայունության համար պատասխանատու ստորաբաժանումը պետք է տիրապետի այնպիսի տեղեկատվության, որին չեն տիրապետում առանձին վերցրած դրամավարկային քաղաքականության, մակրովերլուծությունների, վճարահաշվարկային համակարգի կարգավորման կամ վերահսկողության ստորաբաժանումներն առանձին վերցրած: Ֆինանսական կայունության համար պատասխանատու ստորաբաժանումը վերլուծությունները և հետազոտությունները հիմնականում իրականացնում է ֆինանսական կայունության պահպանման տեսանկյունից՝ ապահովելով տնտեսության տարբեր հատվածների միջև կապերի ու փոխազդեցությունների առավել համապարփակ վերլուծություն: Որոշ դեպքերում Կենտրոնական բանկերում գոյություն ունեն նաև Ֆինանսական կայունության համար պատասխանատու առանձին խորհուրդներ և կոմիտեներ, որոնք առկա իրավիճակի և նախատեսվող միջոցառումների վերաբերյալ կարող են իրականացնել լրացուցիչ քննարկումներ:

Ֆինանսական կայունության ապահովման գործառույթներ իրականացնող երկրները, որպես կանոն, կիսամյակային կամ տարեկան կտրվածքով հրատարակում են «Ֆինանսական կայունության հաշվետվություններ», որտեղ ներկայացվում են ինչպես համաշխարհային, այնպես էլ ներքին տնտեսական զարգացումները նահատելով դրանց հավանական ազդեցությունը ֆինանսական կայունության վրա: Ֆինանսական կայունության հաշվետվությունների հիմնական նպատակը ոչ միայն հասարակայնության, ֆինանսական համակարգի մասնակիցների և ֆինանսական քաղաքականություն իրականացնողների տեղեկացվածության ապահովումն է, այլ նաև կայունության հասնելուն ուղղված միջոցառումների ամրագրումն է: Այլ խոսքով, Կենտրոնական բանկերն իրենց հաշվետվություններում վերլուծում և համախմբում են այն բոլոր գործոններն ու ազդակները, որոնք կարևոր են երկրի ֆինանսական կայունության համար:

Գլոբալ մասշտաբով ֆինանսական կայունության միտումները գնահատելու

նպատակով հատկապես զարգացած երկրների կենտրոնական բանկերը շատ են կարևորում միջազգային շուկաներում ընթացող փոփոխությունները: Մասնավորապես, մշտական մոնիտորինգի են ենթարկվում նավթամթերքի, պարենային ապրանքների գները, տարբեր տարածաշրջանների ֆոնդային շուկաների զարգացումները, պետական պարտքի դինամիկան, արժույթների տատանումները: Սա հատկապես կարևորվում է, երբ երկրի տնտեսությունը առավել զգայուն է նմանատիպ տատանումների նկատմամբ, և դրանց ժամանակին չարձագանքելը կարող է բացասական ազդեցություն ունենալ երկրում ընթացող զարգացումների վրա: Ուսումնասիրվում են նաև հարևան և հիմնական առևտրային գործընկեր երկրներում տեղ գտած զարգացումները, քանի որ դրանցում ծագած ճգնաժամային իրավիճակները կարող են տարածվել տարածաշրջանի մյուս երկրներում: Ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից չափազանց կարևոր է տնտեսության մասնավոր հատվածի՝ տնային տնտեսությունների և կազմակերպությունների պարտքային հարաբերությունները բնութագրող ցուցանիշների վիճակը: Դա մշտապես գտնվում է կենտրոնական բանկերի ուշադրության կենտրոնում, քանի որ տնային տնտեսությունների եկամուտների նկատմամբ պարտքի մակարդակի առաջանցիկ աճը կարող է դառնալ ֆինանսական անկայունությունների ստեղծման գործոն:

Ֆինանսական կայունության ապահովմանն ուղղված քաղաքականությունը մշակելիս ու իրականացնելիս անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել տնտեսության տարբեր հատվածների զարգացումներին, հիմնականում ելնելով այն հանգամանքից թե որ ճյուղերն են հանդիսանում համակարգաստեղծ տվյալ տնտեսությունում և որոնք են ապահովում տնտեսության հիմնական ֆինանսական հոսքերը: Այդառումով, զարգացած երկրները, որոնք միաժամանակ հանդիսանում են ֆինանսական միջազգային կենտրոններ, իրենց ֆինանսական կայունությանն ուղղված քաղաքականությամբ առավել հետևողական են ֆինանսական և ֆոնդային շուկաներում հնարավոր զարգացումներին:

Ֆինանսական կայունության գնահատման տեսանկյունից կարևոր է անշարժ գույքի շուկայում ընթացող զարգացումների ուսումնասիրությունը: Դրանք նույնպես կարող են հանգեցնել անցանկալի զարգացումների: Հայտնի է, որ անշարժ գույքի գները պատմականորեն ունեցել են կայուն աճի միտում, արդ առավել վառ արտահայտված է զարգացող կամ անցումային շրջանում գտնվող երկրներում: Դա պայմանավորված է այդպիսի երկրներում եկամուտների աճի բարձր տեմպերով, ինչն էլ գնային ճնշումներ է առաջացնում անշարժ գույքի շուկայում: Այս հանգամանքը ևս կարող է հանգեցնել անշարժ գույքի գնի անցանկալի տատանումների, որոնք էլ իրենց հերթին կարող են խաթարել ֆինանսական կայունությունը:

Վճարային հաշվեկշռի հողվածների մանրամասն ուսումնասիրությունը և նրանց տատանումների դեպքում ֆինանսական կայունության վրա ազդեցության բացահայտումը նույնպես ֆինանսական կայունության գնահատման

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կարևոր գործառույթներից են: Վճարային հաշվեկշռի վերլուծությունը կարևորվում է հատկապես այն երկրներում, որտեղ արտարհանումը և/կամ ներմուծումը թե ճյուղային և թե երկրների առումով ունեն կերտրոնացման բարձր աստիճան:

Տնտեսությունում ենթադրվող զարգացումները ճիշտ կանխատեսելու և գնահատելու նպատակով մի շարք երկրների կենտրոնական բանկեր կազմակերպում են պարբերական հանդիպումներ այդ ուղղությամբ քաղաքականություն իրականացնողների, տնտեսության կարևորագույն արդյունաբերական և արհեստակցական միությունների հետ: Այդ իսկ պատճառով, ֆինանսական կայունությանն ուղղված քաղաքականության մշակման ժամանակ կենտրոնական բանկերի կարևոր խնդիրներից է հանդիսանում տնտեսության տարբեր հատվածների միջև կապերի բացահայտումը և տնտեսության կայունության վերաբերյալ ամբողջական գնահատականի ձևավորումը: Ընդ որում, անհրաժեշտ է գնահատել այն բոլոր գործոնները և դրանց հանդես գալու հավանականությունները, որոնք ինչ-որ կերպ կարող են վտանգել երկրի ֆինանսական կայունությունը:

Մասնավորապես, այդպիսին պետք է համարել Բանկային գաղտնիքի մասին օրենքում վերջերս կատարված փոփոխությունները, որոնցով նախատեսվում է կոռուպցիոն ռիսկերի քննության ժամանակ նախաքննական մարմնին տալ հնարավորություն ստանալու բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները՝ առանց սուբյեկտային սահմանափակման: Այդպիսով, նախաքննական մարմնի համար մատչելի կդառնային ոչ միայն որպես կասկածյալ կամ մեղադրյալներ գրավված անձի, այլ նաև նրա ընտանիքի անդամների կամ փոխկապակցված այլ անձանց վերաբերյալ ֆինանսական տվյալները, երբ կա կասկած, որ վերջիններս մասնակցել կամ օժանդակել են կոռուպցիոն ռիսկերի առաջացմանը: Փոփոխություններով նախատեսվում էր նաև գաղտնալսել վերոնշյալ անձանց: Անշուշտ, դա կարող է հանգեցնել մարդու սահմանադրական իրավունքների խախտմանը և հանրային սահմանադրական շահ հանդիսացող ֆինանսական կայունության պահպանման նպատակի վտանգմանը: Այս հանգամանքով էլ պայմանավորված, այդ փոփոխությունները ճանաչվեցին հակասահմանադրական:

Ֆինանսական կայունության ապահովման համար ֆինանսական արաբերությունների, մասնավորապես բանկային գաղտնիքի պահպանության իրավական ռեժիմը կանոնակարգելիս անհրաժեշտ է նախևառաջ առաջնորդվել անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական պահանջի պահպանմամբ: Հակառակ դեպքում կտրուկ կմեծանա Հայաստանի մրցակցային դիրքի խաթարման հավանականությունը, կավելանա կանխիկի շրջանառությունը, մարդիկ կդադարեն գործարքները անկանխիկ կատարել և խնայողությունները ավանդների տեսքով բանկերում պահել և, ընդհանուր առմամբ, կստեղծվեն նախադրյալներ կոռուպցիոն ռիսկերի առաջացման համար:

**Финансовая устойчивость как важнейшее условие
экономического развития**

^{1,2}**Բոստանջյան Վարդան**

¹Профессор кафедры финансового учета ЕГУ,

²Профессор кафедры экономики ЕУА, доктор экономич. наук

Статья посвящена обоснованию обеспечения финансовой устойчивости как ключевого условия экономического развития, изучению ее особенностей и определению эффективных путей решения указанной проблемы. В исследовании представлена роль органов денежно-кредитного регулирования Республики Армения в разработке необходимой политики развития финансовой системы, а также в обеспечении финансовой стабильности в экономике республики.

**Financial Sustainability As the Most Important Condition of Economic
Development**

^{1,2}**Bostanjyan Vardan**

¹Professor at the Chair of Financial Accounting at YSU,

²Professor at the chair of Economics at YHU, doctor of Economics

The article is devoted to the substantiation of ensuring the financial stability as a key condition for economic development, the study of its features and the determination of effective ways to solve this problem. The study presents the role of the monetary authorities of the Republic of Armenia in the development of the necessary policy for the development of the financial system, as well as in ensuring of financial stability in the economy of the republic.

ԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Երևանի «Հայրուսակ» համալսարան, իրավաբանական ֆակուլտետ

Ամփոփում Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ոլորտի զարգացումը մեկնարկել է երկու փասնամյակ առաջ: Սույն հոդվածը նպատակ ունի վերլուծել Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ոլորտում իրավիճակը՝ դիտարկելով այն դինամիկայի մեջ. նոր հազարամյակի առաջին փուլերից ի վեր: Ուսումնասիրությունը հիմնված է գրասեղանային և դաշտային աշխատանքների մոտեցումների՝ ներառյալ շահագրգիռ կողմերի հարցազրույցների և գրականության

ուսումնասիրության վրա:

Հիմնաբառեր՝ կայուն զարգացում, կայուն գյուղատնտեսություն, օրգանական գյուղատնտեսություն, օրգանական արտադրություն, Հայաստան

Ներածություն

Կայուն զարգացման նպատակներից (ԿԶՆ) շատերը ուղղակի կամ անուղղակի առնչվում են գյուղատնտեսության հետ: Մինչև 2030 թվականը կայուն զարգացման նպատակների հասնելու բազմաթիվ եղանակների շարքին է դասվում անցումը՝ դեպի ավելի կայուն գյուղատնտեսական գործառույթների, ինչպիսին է օրգանական գյուղատնտեսությունը, որը կարող է նպաստել աշխարհի սնուցման հարցի լուծմանը՝ առանց շրջակա միջավայրը ոչնչացնելու և մարդու առողջությանը սպառնալու (Wilde 2019): Ըստ Schaezen (2019) ուսումնասիրության, ավելի քան 50 գիտական հրապարակումների մետավերլուծությունը ցույց է տալիս, որ օրգանական գյուղատնտեսությունը նպաստում է հասնել տասնյոթ ԿԶՆ-ներից առնվազն ութին:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) սահմանում է օրգանական գյուղատնտեսությունը որպես համակարգ, որը ապավինում է էկոհամակարգերի կառավարմանը, այլ ոչ թե գյուղատնտեսական ռեսուրսների ներդրմանը՝ վերացնելով սինթետիկ հավելումների (օրինակ՝ սինթետիկ պարարտանյութեր և թունաքիմիկատներ, անասնաբուժական դեղեր, գենետիկորեն ձևափոխված սերմեր և ցեղատեսակներ և այլն) օգտագործումը, դրանք փոխարինելով տեղանքին հատուկ կառավարման գործառույթներով, որոնք պահպանում և զարգացնում են հողի բերրիությունը և կանխում վնասատուների ու հիվանդությունների տարածումը:

Ընդհանուր առմամբ, օրգանական գյուղատնտեսությունն առաջարկում է մի շարք տնտեսական, բնապահպանական և սոցիալական օգուտներ, ինչպես օրինակ՝ հողերի որակի պահպանում, կենսաբազմազանության խթանում, էներգիախնայողություն, ազոտի հոսքից աղտոտվածության նվազեցում, ծանր թունաքիմիկատների և հերբիցիդների օգտագործումից խուսափում (Singer and Mason 2006): Օրգանական արտադրանքը ունի նաև առողջապահական օգուտներ, ինչպիսիք են թունաքիմիկատների նկատմամբ մարդու ենթարկվածության նվազումը և հակաբիոտիկների ոչ բուժական օգտագործումը (AAP 2019): Ներկայումս ամբողջ աշխարհում գյուղատնտեսական նշանակության հողերի ավելի քան 1% -ը մշակվում է օրգանական եղանակով:

Ավելին, ըստ փորձագիտական գնահատականների, օրգանական սննդի համաշխարհային շուկան 2020 թվականին կընդլայվի մինչև 211,44 միլիարդ դոլարի՝ 16% աճ հաստատելով 2014թ համեմատ (Haakon 2014): Հյուսիսային Ամերիկան և Եվրոպան կիսում են համաշխարհային շուկայի եկամուտների ամենամեծ բաժինը և գերիշխում են օրգանական սննդի շուկայում: Բացի այդ, ակնկալվում է, որ Եվրասիական տնտեսական միության երկրները,


որոնց կազմում ընդգրկված է նաև Հայաստանը, կարող են կլանել ամբողջ աշխարհում օրգանական արտադրանքի շուկայի 20% -ը (EEC 2017):

Սույն հոդվածը նպատակ ունի վերլուծել Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ոլորտում իրավիճակը՝ դիտարկելով այն դինամիկայի մեջ. նոր հազարամյակի առաջին տարիներից ի վեր: Ուսումնասիրությունը հիմնված է գրասեղանային և դաշտային աշխատանքների մոտեցումների՝ ներառյալ շահագրգիռ կողմերի հարցազրույցների, գրականության ուսումնասիրության և սպառողների հետազոտությունների վրա:

Օրգանական արտադրություն և շուկայավարում

Վերջին երկու տասնամյակների ընթացքում օրգանական սննդի արտադրությունն ու մատակարարումը Հայաստանում աճ է ապրում: Համաձայն Օրգանական գյուղատնտեսության հետազոտական ինստիտուտի (FiBL) և IFOAM-ի (Organics International), որոնք տրամադրում են աշխարհում օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ առկա ամենավերջին համապարփակ տվյալները, 2017 թվականին Հայաստանում օրգանական կառավարման համար գրանցված է եղել 6205 հա գյուղատնտեսական նշանակության հող (Նկար 1):

Նկար 1. Հայաստանի օրգանական գյուղատնտեսական նշանակության հողատարածքը (հա)



Աղբյուր. կառուցել է հեղինակը՝ FiBL և IFOAM զեկույցների տվյալների հիման վրա

Հայաստանում օրգանական սննդի մեծ մասը տեղական արտադրման և վերամշակման ծագում ունի՝ խոշոր և փոքր արդյունաբերական ընկե-

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րությանների, անհատ ֆերմերների և ֆերմերային խմբերի կողմից: Այն բաշխվում է հիմնական վաճառքի ուղիներով, հիմնականում սուպերմարկետներում, մասնագիտացված խանութներում և տոնավաճառներում՝ տեղական և միջազգային: Դրանք ներառում են Greed Day օրգանական խանութը իր ավելի քան 200 օրգանական արտադրանքով, Organic Shop Armenia, Fresh Lines օրգանական խանութը ավելի քան 80 օրգանական կոսմետիկ արտադրանքով, Երիցյան և SAS սուպերմարկետները: Այս թիվը թերզնահատված է, քանի որ շատ սուպերմարկետներ և խանութներ վաճառում են օրգանական արտադրանքներ, բայց հատուկ չեն դասակարգում կամ հատուկ դարակաշարերի մեջ դրանք չեն նշում որպես «օրգանական»:

Օրինակ՝ շուկայավարման վերլուծության արդյունքում պարզվեց, որ «Երևան Սիթի» խանութների ցանցը վաճառում է օրգանական թեյեր և հյութեր: Կա նաև Carrefour-ը, որը Հայաստանում ունի երկու խանութ և պնդում է, որ իր «Օրգանական անկյունում» առաջարկվում են օրգանական, բիո և սնձանազերծված արտադրանքներ Ֆրանսիայից և ամբողջ Եվրոպայից: Carrefour-ը իր ցանցերով նաև արտահանում և վաճառում է հայկական վերամշակված օրգանական արտադրատեսակներ (օրինակ՝ դեղձի ջեմը և հյութերը) Մալայզիայում և Սինգապուրում (Shen 2017):

Հայաստանի օրգանական շուկան մատակարարում է ավելի քան 30 օրգանական բերքի տեսակ (Shen 2016): Ընդհանուր առմամբ, օրգանական արտադրությունը կենտրոնացած է հետևյալ արտադրանքի վրա. մրգեր և հատապտուղներ (ծիրան, դեղձ, սալոր, բալ, խաղող, սերուցք, նուռ, տանձ, խնձոր, ազնվամորու և հապալաս); բանջարեղեն (լոլիկ, պղպեղ, սմբուկ, ցուկկինի, վարունգ, գազար, կաղամբ, կարտոֆիլ և ճակնդեղ); հացահատիկային ապրանքներ (ցորեն, ուղղագրավ, գարու և եգիպտացորեն) և վայրի հավաքման մշակաբույսեր և բանջարեղեն (հնդկաձավար, գորշ, անանուխ, անանուխ, անմահ և այլն): Սերտիֆիկացված օպերատորների Ecoglobe տվյալների բազայի համաձայն, 2019 թվականի դրությամբ, իննսուն սննդի վերամշակմամբ զբաղվող հայկական ընկերություններ զբաղվում են հայկական օրգանական սննդամթերքի վերամշակմամբ և արտադրությամբ:

Ինչ վերաբերում է Հայաստանում օրգանական արտադրանքների տեղական պահանջարկին, ճշգրիտ գնահատականներ չկան: Գրականության ուսումնասիրության և փորձագիտական գնահատականների համաձայն՝ տեղական օրգանական արտադրանքի շուրջ 30%-ը սպառում է ներքին շուկան, իսկ սերտիֆիկացված օրգանական արտադրության ավելի քան 70%-ը նախատեսված է Եվրոպայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ասիայի շուկաներ արտահանման համար (Hovhannisyann 2018): Իրականում, օրգանական ոլորտի զարգացմանը պետական աջակցության բացակայության պատճառով, արտահանման շուկայի հնարավորությունը ընկալվում է որպես տեղական արտադրողների հիմնական շարժիչ ուժը այս բիզնեսում:

Օրգանական արտադրանքի արտահանումը խթանվում է նաև միջազգային և տեղական օրգանական արտադրանքի տոնավաճառների միջոցով, որտեղ հայկական օրգանական արտադրողները հաջողությամբ ներկայացնում են իրենց արտադրանքը: Օրինակ, «Հայկական լեռան թեյ» ընկերության օրգանական թեյերն արդեն ցուցակված են առցանց կայքում և վաճառվում են գերմանական TeeGeschwendner խանութներում (Arminfo 2019):

Օրգանական ոլորտի զարգացման խոչընդոտները

Ի լրումն օրգանական արդյունաբերության առանձնահատուկ խնդիրների՝ Հայաստանի օրգանական ոլորտը բախվում է նաև Հայաստանում գյուղատնտեսական ոլորտի այլ հիմնական մարտահրավերների, ինչպիսիք են՝ բնական աղետները, ենթակառուցվածքների ցածր հասանելիությունը, շուկայի և գների անկայունությունը, սարքավորումների և տեխնիկայի բացակայությունը, շուկաներ մուտք գործելու դժվարությունները և այլն (Shen 2016): Ընդհանուր առմամբ, Հայաստանում օրգանական ոլորտի զարգացման մարտահրավերները հերկյալ են

Արտադրության և վերամշակման խոչընդոտները

Փոքր մասշտաբի, որակի և արտադրության և վերամշակման հատուկ պահանջների պատճառով (օրինակ՝ սերտիֆիկացման ծախսատար ծառայությունների), օրգանական արտադրողները ավելի են ենթակա ենթակառուցվածքների և շուկայավարման թերությունների և ավելի բարձր ծախսեր են կրում (Darbinyan and Rundgren 2018):

Առկա է նաև օրգանական հետազոտությունների և աջակցման ծառայությունների պակասը: Կայունության համար օրգանական գյուղատնտեսության համակարգը պետք է լինի շահավետ երկարաժամկետ հեռանկարում (Gian and Baker 2012):

Հետևաբար հետազոտական ջանքերը պետք է կենտրոնանան օրգանական արտադրության համակարգի կայունության, արտադրողականության զարգացման, չափման և մոնիտորինգի վրա, ինչպես նաև հատուկ տեխնոլոգիաների զարգացման վրա, օրինակ մոլախոտերի կառավարման, ավելի բարձր բերքատու սերմերի, հողերի պտղաբերության վերականգնման, կենսաբանական վերահսկողության վրա ...:

Շուկայի հասանելիության խոչընդոտները

Հայաստանի օրգանական գյուղատնտեսության ոլորտի առջև ծառայած շուկայի մուտքի խոչընդոտները ստեղծվում են սպառողների նախասիրությունների, տնտեսական միջավայրի և առկա միջազգային առևտրի խոչընդոտների պատճառով: Թեև աստիճանաբար աճող միտումով, օրգանական արտադրանքի սկզբունքների և առավելությունների վերաբերյալ սպառողների տեղեկացվածությունը Հայաստանում դեռ ցածր է: Օրգանական արտադրանքների ցածր սպա-

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ռողական նախապատվությունը պայմանավորված է նաև այնպիսի գործոններով, ինչպիսիք են սպառողների ցածր գնողունակությունը, շուկայի մատչելիության թերի գործիքները, ամբողջ տարին օրգանական թարմ արտադրանքը գնելու անկարողությունը, սեզոնայնության պատճառով, խանութների վաճառքի անհարմար տեղակայումը և այլն:

Բացի այդ, իրենց արտադրանքը արտահանելու համար օրգանական արտադրողները պետք է համապատասխանեն գյուղատնտեսական սննդի ավելի բարձր պահանջների, ստանդարտների և գործեն միջազգային առևտրային ռեժիմներում, որոնք օրգանական արտադրության համար որևէ արտոնյալ վերաբերմունք չեն տալիս: Ավելին, օրգանական առևտրի ԵՄ-ԱՄՆ համարժեքության համաձայնագիր ունենալով, այդ երկրները դե ֆակտո դիսկրիմինացիայի են ենթարկում երրորդ երկրների արտադրողներին (Darbinyan and Rundgren 2018):

Եզրակացություն

Վերջին տասնամյակներում օրգանական գյուղատնտեսության ոլորտը զգալի զարգացում է ապրել Հայաստանում: Ներքին պահանջարկը նշանակալի չէ, և արտադրության ավելի քան երկու երրորդը արտահանվում է այլ երկրներ: Միննույն ժամանակ, օրգանական արտադրանքի պահանջարկը զգալիորեն աճում է աշխարհում, քանի որ սպառողները ավելի բարձր արժեք են դնում կայուն և առողջ ապրանքների վրա:

Հայաստանը Եվրասիական տնտեսական միության անդամ է, որտեղ մինչև 2020 թվականը ըստ փորձագետների գնահատման, օրգանական արտադրանքի շուկան նախատեսվում է ընդլայնել մինչև 200 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ օրգանական արտադրանքի սպառումը կարող է կազմել համաշխարհային սպառման մեկ հինգերորդը (EEC 2017): Բարձր արժեք ունեցող ապրանքների այս զգալի պահանջարկի կլանման համար հայ արտադրողներին անհրաժեշտ կլինի կառավարության աջակցությունը, որը մինչ այժմ շատ սահմանափակ եղել:

Գրականություն

1. American Academy of Pediatrics, AAP (2019). Organic Foods: Health and Environmental Advantages and Disadvantages. Clinical report.
2. Arminfo. 2019. Armenian organic tea already sold in Germany. Arminfo, Information Company. March 6, 2019. https://arminfo.info/full_news.php?id=39871&lang=3
3. Gian, N. and B., Baker. 2012. Challenges and opportunities for organic research and extension. Rural 21 – 03/2012. http://orgprints.org/23505/1/rural2012_03-S32-34.pdf
4. Darbinyan, N. and G., Rundgren. 2018. The Status and Potential of Organic Agriculture in Armenia. A background document for the Greening Economies in the Eastern Neighbourhood (EaP-GREEN) partnership programme.
5. Eurasian Economic Commission (EEC). 2017. The EAEU countries may take up to 20% of the world market of organic products, whose capacity will exceed 200 billion US

- dollars by 2020. Eurasian Economic Commission News. 3/31/2017.
6. FiBle and IFOAM. 2019. The World of Organic Agriculture. Statistics and Emerging Trends 2004-2019. FiBle and IFOAM Organic International.
 7. Haakon, J. (Ed.) (2014). Global Organic Food & Beverages Market to Reach USD 211.44 Billion by 2020. Grand View Research, Inc, San Francisco, California.
 8. Hovhannisyan, A. 2018. Expert: Demand for organic products grows in Armenia. Arm Info Financial Portal, Tuesday, July 10 2018. <https://finport.am/fullnews.php?id=35204&-lang=3>
 9. Schaetzen. S. (2019). Organic Agriculture and the Sustainable Development Goals: Part of the Solution. Nature and More. https://www.eosta.com/sites/www.eosta.com/files/documenten/nm19329_report_nm_lr.pdf
 10. Shen. 2017. The First Organic Fruit Producers' Cooperative (in Armenian). Yerevan: Shen NGO. <https://www.shen.am/file/1284/download?token=uQkpYUCB>
 11. Shen. 2016. Achievements of Organic Agriculture. Yerevan: Shen NGO. <https://www.shen.am/file/904/download?token=paT3X9Vq>
 12. Singer, P. and Mason, J. (2006). The six Most Important Environmental Benefits of Organic Farming. In *The Way We Eat: Why Our Food Choices Matter*. Rodale. ISBN 1-57954-889-X <https://tranquilmoney.com/environmental-benefits-organic-farming/>
 13. Wilde, M. (2019). Organic can be a Solution to Achieving the Sustainable Development Goals. IFOAM Organics International. <https://www.ifoam.bio/en/news/2019/09/24/organic-can-be-solution-achieving-sustainable-development-goals>

Sustainable Agriculture in Armenia

Harutyunyan N.S.

Yerevan “Haybusak” University, Faculty of Law

Among the many ways of achieving sustainable development goals (SDGs) by 2030 is the transition to more sustainable agriculture practices such as organic farming that can promote feeding the world without destructing the environment or threatening human health (Wilde 2019). In Armenia organic sector development kicked-off two decades ago. The aim of the present paper is to analyze the situation with the organic sector in Armenia in the dynamics: from the start in the first years of the new millennium. The study is based on desk research and fieldwork research approaches with face-to-face stakeholder interviews and literature review.

Устойчивое сельское хозяйство в Армении

Арутюнян Н.С.

Ереванский университет «Айбусак», юридический факультет

В Армении развитие органического сектора началось два десятилетия назад. Целью данной статьи является анализ ситуации с органическим

сектором в Армении в динамике: с начала в первые годы нового тысячелетия. Исследование основано на кабинетных исследованиях и подходах к полевым исследованиям с очными интервью с заинтересованными сторонами и обзоры литературы.

ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՅԱՆԵ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Երևանի «Հայրուսակ» Համալսարան, տնտեսագիտության ամբիոն

Ամփոփում. Անհատականության զարգացման, ինքնակատարելագործման սկզբունքները բնության հզոր օրենքներից բխող սկզբունքներ են, և անձը, որպես բնության բանական մասնիկ, չի կարող արդյունավետ գործել առանց դրանց օգտագործման: Դրա համար, եթե մարդն ուզում է ինչ-որ բան փոխել իր կյանքում, պետք է սկսի հենց իրենից: **Հիմնաբառեր.** հիմնարար սկզբունքներ, շարունակական կրթություն, ֆիզիկական չափանիշներ, մտավոր չափանիշներ, սոցիալական չափանիշներ, հոգևոր չափանիշներ, ինքնակատարելագործում

Գլոբալացման երևույթներով և թվային տեխնոլոգիաներով պայամանավորված հասարակական կյանքի կտրուկ փոփոխությունները անհատի զարգացման համար նոր մոտեցումներ են պահանջում: Սակայն մարդկանց կողմից օբյեկտիվ, բնական օրենքների վրա հիմնված սկզբունքների կիրառումը՝ բոլոր ժամանակներում, բոլոր կարգի հասարակություններում և մարդկանց գործունեության ցանկացած բնագավառում հզոր միջոցներ են հանդիսանում: Հայտնի է, որ մարդու էությունը արտահայտվում է չորս բնութագրիչներով՝ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սոցիալ-հուզական: Այդ բաղադրիչներից յուրաքանչյուրին տարբեր մոտեցումներ ցուցաբերելիս տարբեր արդյունքներ են ստացվում: Այսպես, երբ մարմինը առողջ ապրելակերպի կանոններին չի հետևում, անընդհատ բժշկական միջամտության կարիք է զգում, իսկ կանոնավոր մոտեցման դեպքում՝ հիվանդությունները կանխարգելվում են: Կամ, բանական մարդը, ժամանակը անտեղի վատնելու փոխարեն, անընդհատ զբաղվում է ինքնազարգացմամբ: Մարդը հաճախ հարաբերվում է այլ մարդկանց հետ իր սեփական հետաքրքրությունները բավարարելու համար, իսկ սկզբունքային մարդը բավարարվածություն է ստանում ուրիշներին ծառայելիս: Մարդու հոգին՝ որոշակի շահերից ելնելով կարող է ենթարկվել տարբեր աղանդների, սակայն միայն բնական օրենքներից բխող սկզբունքներին հետևելով է մարդը ներդաշնակություն զգում:

Սեփական ռեսուրսները զարգացնելու համար մարդը պետք է անընդհատ ազդի իր վրա այնքան ժամանակ, մինչև այն կդառնա օգտակար սովորություն՝

հմտություն: Մարդու ռեսուրսները գտնվում են իր ազդեցության շրջանում և ոչ մեկը, իրենից բացի չի կարող ապահովել նրա զարգացումը: Յուրաքանչյուրը պետք է հոգա իր մասին ինքնուրույն [2]: Դա ամենակարևոր ներդրումն է այն ամենից, ինչ անում է մարդը իր կյանքում: Այն ներդրում է այն գործիքի մեջ, որին տիրապետում է մարդը և որի վրա հենվում է կյանքի դժվարություններին դիմակայելիս: Մարդը ինքն է գործիք հանդիսանում իր գործողությունների համար և էֆեկտիվ լինելու համար պետք է ընդունի անընդհատ ինքնակատարելագործման անհրաժեշտությունը: Ինքնակատարելագործումը ենթադրում է «այսօր երեկվանից ավելի լավը լինել» [3]: Ինքնակատարելագործումը պահպանում և զարգացնում է մարդու ամենաարժեքավոր ռեսուրսը՝ հենց իրեն: Մարդը իր անձնական ռեսուրսն է, իր սեփական միջոցը [4]:

Ինքնակատարելագործման սկզբունքը կարևորում է անընդհատ ուշադրության կենտրոնացումը անձի էության բոլոր կողմերի վրա, առանց բացառության: Բոլորս Բարտոնն ասում է, «Ամեն անգամ, երբ ես տեսնում եմ , թե ինչ հետևանքներ են թողնում մանրուքները, մտածում եմ, որ մանրուքներ չկան» [1]:

Ինքնակատարելագործումը ներառում է մարդու էության չորս չափանիշները՝ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սոցիալ-հուզական: Կյանքի փիլիսոփայությունը ուղղակի կամ անուղղակի բխում է հենց այս չափանիշներից: Չափանիշները կարող են նաև այլ կերպ կոչվել, սակայն դրանից ոչինչ չի փոխվում: Այսպես, փիլիսոփա Գերբ Շեպերդը [1] պատկերում է մարդու էության բնութագիրը չորս արժեքների հավասարակշռումով՝

1. հեռանկարներ (հոգևոր չափանիշ)
 2. ինքնավարություն (մտավոր չափանիշ)
 3. կապվածություն (սոցիալական չափանիշ)
 4. տոնուս (ֆիզիկական չափանիշ):
- Ջորջ Շիխանը [1] առանձնացնում է մարդու չորս դերեր՝
1. լավ կենդանի (ֆիզիկական չափանիշ)
 2. լավ մասնագետ (մտավոր չափանիշ)
 3. լավ ընկեր (սոցիալական չափանիշ)
 4. սուրբ (հոգևոր չափանիշ):

Ինքնակատարելագործման համար պետք է շարունակաբար, հետևողականորեն զարգանալ, լինել պրոակտիվ, ժամանակ հատկացնել և կիրառել համապատասխան մեթոդներ:

Ֆիզիկական չափանիշները նախատեսում են հոգացություն ֆիզիկական վիճակի մասին՝ մշտական ֆիզիկական վարժություններ, սննդի ճիշտ ընտրություն և ընդունում, ճիշտ հագուստի կրում: Մշտական ֆիզիկական վարժանքը օգնում է առաջին հերթին պրոակտիվության դրսևորմանը: Երբ մարդը նոր է սկսում զբաղվել ֆիզիկական վարժանքով, նրա մարմինը սկսում է պայքարել իր դեմ՝ ձգտելով հանգստության և ոչ լարվածության: Սկզբից ծանրաբեռնվածությունը կարող է դուր չգալ, մինչև անգամ մարդը կարող է ատել այդ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վարժանքը: Բայց լինելով պրոակտիվ և շարունակելով մարզվել մինչև անգամ վատ եղանակին, ստանում է հսկայական արդյունք: Երկարատև ֆիզիկական վարժանքով զբաղվող մարդու սրտանոթային, շնչառական համակարգերը աշխատում են ավելի արդյունավետ՝ բարձրացնելով նրա օրգանիզմի հնարավորությունները ավելի շատ ծանրաբեռնվածությամբ աշխատելու, գործը նրա համար դառնում է հաճելի զբաղմունք, ավելանում է էներգիան և հոգնածություն չի զգում: Սակայն ամենամեծ ձեռքբերումը ֆիզիկական վարժանքով զբաղվելիս մարդու պրոակտիվություն հմտության ձեռքբերումն է, երբ նա ցանկացած իրավիճակում կատարում է ֆիզիկական վարժանքը, ինչը մեծ ազդեցություն է թողնում նրա պարադիգմայի, ինքնագնահատման, ինքնավստահության, և անձի ամբողջականության վրա:

Մարդու մտավոր զարգացումը ապահովում է կրթությունը: Այդ պատճառով մտքի ինքնակատարելագործման գործում կարևորվում է մարդու շարունակական կրթությունը: Պրոակտիվ մարդիկ կարողանում են ինքնակրթությամբ զբաղվել: Շատ կարևոր է, որ մարդը սեփական ծրագրերը վերլուծել ու գնահատել կարողանա: Շատ կարևոր է, որ մարդը իր կյանքի առաքելությունը կապի ուրիշների պարադիգմայի հետ: Այնպիսի կրթությունը, որը չի տանում մարդասիրական հակումների ճնշում է ինտելեկտը, և այդ ինտելեկտի մոտիվը դառնում է անհասկանալի: Դրա համար պետք է կարդալ լայն շրջանակ ընդգրկող գրականություն, պահպանել հեռակա կապ մեծագույն մտածողների հետ: Չկա ինտելեկտը զարգացնելու ավելի մեծ միջոց, քան գիրք կարդալը: Այն մարդը, ով չի կարդում, ոչնչով չի տարբերվում կարդալ չիմացողից: Միտքը զարգացնելու կարևոր միջոց է գրելը: Լավ շարադրված միտքը, որը արտահայտում է գաղափարներ և զգացմունքներ, շատ լավ է ազդում պայծառ մտածողության և տրամաբանության ու պարզ արտահայտվելու վրա: Մտքի կատարելագործումը հիմնվում է պլանավորման և կազմակերպման գործառույթների վրա: Անձնական հաղթանակի հասնելու հմտություններին տիրապետողը կանխատեսում է իր վերջնական նպատակը, մշակում է գործողությունների ծրագիր, որը ապահովում է նպատակի իրագործումը:

Հոգևոր չափանիշները մարդու արժեքների այն համակարգն է, որը կապում է նրան կյանքի հավիտենական ճշմարտությունների հետ: Այն շատ անձնական, բայց շատ կարևոր ոլորտ է, այստեղ ինքնակատարելագործումը տանում է անձի լիդերության դրսևորմանը: Յուրաքանչյուր մարդ իր ոգու չափանիշները կատարելագործում է յուրովի: Մեկը այն գտնում է Աստվածաշնչում, որը կարդալով ու աղոթելով, իրեն մաքրված, կատարելագործված է զգում, ուժ է հավաքում, հասկանում է, որ ճիշտ է կողմնորոշվել և կարող է հետագայում էլ ծառայել: Այլը՝ հոգու վերածննդի, նորոգման համար օգտվում են լավագույն գրականությունից կամ երաժշտությունից: Մյուսները հոգեկան բավարարվածություն են զգում բնությունից: Բնությունը միշտ բարեհաճ է այն մարդկանց նկատմամբ, ովքեր կարող են ձուլվել իրեն: Շատ մարդիկ էլ եկել են այն

համոզման, որ առանց ուրիշին ծառայելու, առանց ուրիշներին պիտանի լինելու, միայն ինքն իր համար ապրելը անհիմաստ է, և դա ճիշտ եզրահանգում է: Հոգեկան բավարարվածությունը անընդհատ կատարելագործման կարիք ունի և ժամանակ է պահանջում: Մեծ ռեֆորմատոր Մարտին Լյութերը գրել է. «Ես այսօր այնքան անելիք ունեմ, որ մեկ ժամ պետք է անցկացնեմ ծնկաչոք» [1]: Նրա համար աղոթելը մեխանիկական պրոցես չէր, նրա համար դա ուժի աղբյուր էր, որը արձակում և բազմապատկում էր էներգիան: Բուդդայի հետևորդները դժվարին պայմաններում պահպանում են հանգստություն, որովհետև նրանք իրենց մտքով և սրտով մնում են աղոթքի ազդեցության ներքո: Միտքը նրանում է, որ եթե մարդիկ ժամանակ են տրամադրում կյանքի իմաստի մասին մտածելու համար, ապա այն ինչ բխում է այդ մտածմունքից, հովանոցի նման բացվում է մնացած գործերի վրա: Մեծ խորհրդատու Դեվիդ Մակկեցը ասում է. «Մեծագույն պայքար է ամեն օր մեր հոգու գաղտնարանում: Եթե հաղթում ենք այդ կռվում և կարողանում ենք գլուխ հանել ներքին կոնֆլիկտից, ապա մտքի պայծառություն է առկայծում, և հասկանում ենք թե ինչու ենք ապրում երկրի վրա: Հասկանում ենք համագործակցության կարևորությունը, հոգում ենք ուրիշների բարեկեցության մասին և իսկապես, սրտանց ուրախանում ենք նրանց հաջողություններով» [1]:

Ֆիզիկական, մտավոր և հոգևոր չափանիշների ինքնակատարելագործումը հանդիսանում է անձի ամենօրյա անձնական հաղթանակները: Խորհուրդ է տրվում դրա համար օրական գոնե մեկ ժամ ժամանակ հատկացնել: Մեկ ժամ՝ բայց ամբողջ կյանքում: Չկա առավել արդյունավետ այդ մեկ ժամը անցկացնելու տարբերակ, քան «ամենօրյա անձնական հաղթանակը»: Այն մեծ չափով բարձրացնում է օրվա բոլոր ժամերի արդյունավետությունը, ներառյալ գիշերային քունը, որը դառնում է ավելի խորը և կազդուրող: Այն տալիս է ֆիզիկական, հոգևոր և մտավոր ուժ, որով հաղթահարվում են կյանքի դժվարությունները: Այն կարող է ազդել այլոց հետ հարաբերությունների վրա:

Եթե ֆիզիկական, հոգևոր և մտավոր չափանիշները սերտորեն կապված են մարդու անձնական հաղթանակները պայմանավորող սովորույթների հետ, ապա սոցիալ-հուզական չափանիշները հիմնվում են մարդու հասարակական հաղթանակները ապահովող սովորույթների վրա: Մարդու կյանքի սոցիալական ու զգացմունքային չափանիշները սերտ կապված են միմյանց հետ, որովհետև զգացմունքը զարգանում և արտահայտվում է մարդկանց հետ շփումների արդյունքում: Սոցիալ-հուզական չափանիշների կատարելագործումը կոնկրետ ժամանակի ծախս չի պահանջում, այն կարող է կատարվել ընդամենը այլ մարդկանց հետ ամենօրյա շփումներում: Բայց դրա համար պահանջվում է ջանքեր: Այն խիստ կապված է մարդու անձնական ապահովության զգացողության հետ: Ապահովության զգացումը բնութագրում է մարդու ներդաշնակությունը արտաքին աշխարհի հետ: Անձնական ապահովության զգացումը կարող է հանդիսանալ փոխգործողության արդյունք: Երբ մարդը

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ունակ է հասկանալու ուրիշին, որի հետևանքով չշեղվելով իր տեսակետից, կարող է ընդունել այնպիսի որոշում, որը հաղթանակ կապահովի երկուսին էլ, ապա ապահովության զգացում է ծագում, որը ստեղծագործ փոխգործողության արդյունքում ապահովում է մեծ արդյունավետություն: Անձնական ապահովությունը զգացվում է այն ժամանակ, երբ մարդիկ լսում ու օգնում են այլ մարդկանց: Անձնական ապահովության ամենակարևոր աղբյուրը մարդու աշխատանքն է, երբ մարդու գործունեությունը ապահովում է ցանկալի արդյունք: Անձնական ապահովության զգացողության բարձր մակարդակ է բարեգործությունը, երբ մարդը հոգում է ուրիշի կարիքները առանց ճանաչման ակնկալիքի: Բեռնարդ Շոուն ասել է. «Կյանքի իսկական ուրախությունը համարում եմ ձգտել այնպիսի նպատակի, որը համարում եմ հանճարեղ: Լինել բնության մասնիկը, բայց ոչ փոքր, սողացող, էգոիստ էակ, որը հակված է հիվանդանալու, նեղացած է ամբողջ աշխարհից, որը, նրա կարծիքով պետք է դուրս գար իր պատյանից՝ նրա երջանկությունը ապահովելու համար: Ես այն մտքին եմ, որ իմ կյանքը պատկանում է ամբողջ հասարակությանը և քանի դեռ ես ապրում եմ, իմ գլխավոր առաքելությունն է՝ անել նրա համար ամեն ինչ: Ես ցանկանում եմ մինչև մահս ամբողջությամբ օգտագործել իմ պոտենցիալը: Ես ուրախանում եմ կյանքով, որը ինձ համար արագ վառվող մոմ է, և ես ուզում եմ, որ այն վառվի իմ ձեռքում որքան հնարավոր է պայծառ, մինչև հասնի սերունդներին այն փոխանցելու ժամանակը» [1]: Էլդոն Տանները ասել է. «Ծառայությունը՝ մեր վարձն է այս երկրի վրա ապրելու համար»: Մարդկանց մեծամասնությունը կախված է «սոցիալական հայելուց» [1], նրանց գործունեությունը որոշվում է իրենց շրջապատողների պատկերացումներով ու պարադիգմաներով: Այն կարող է գիտակցված կերպով նպաստել մարդկանց պրոսկտիվության դրսևորմանը, վերաբերվել նրանց ինչպես պատասխանատու մարդկանց, կարող է օգնել նրանց ընտրել այնպիսի գործունեություն, որ դառնան անկախ, հարգարժան անհատականություններ: Գյոթեն ասում է «Եթե մարդու հետ վերաբերվենք այնպես ինչպիսին ինքը կա, նա կմնա այնպիսին ինչպիսին է: Եթե վերաբերենք մարդկանց այնպես, ինչպիսին պետք է լինի, կամ պարտավոր է լինել, ապա նա կդառնա այնպիսին, ինչպիսին պետք է լինի» [1]:

Ինքնակատարելագործման պրոցեսում մարդկանց էության չորս չափանիշները պետք է կատարելագործվեն հավասարակշռված չափով: Մի ուղղությամբ բացթողումը տանում է մնացածների ոչ արդյունավետ զարգացմանը:

Ինքնակատարելագործումը հատուկ է ոչ միայն անհատներին, այլ մարդկանց խմբերին, ընտանիքներին, կազմակերպություններին ու երկրներին: Այսպես, կազմակերպության համար ֆիզիկական չափանիշներ են տնտեսական ցուցանիշները, մտավոր չափանիշներ են հանդիսանում կազմակերպության իմիջը, զարգացման մակարդակը, աշխատողների կարողությունների օգտագործումը: Հոգևոր չափանիշ է կազմակերպության միսիան: Իսկ սոցիալական չափանիշները արտահայտվում են կազմակերպության ներքին ու արտաքին

շահակիցների և հանրության հետ հարաբերությունների բնույթով: Երբ սրանցից մեկի նկատմամբ ոչ բավարար ուշադրություն է դարձվում, դա բացասաբար է անրադառնում ամբողջ կազմակերպության վրա:

Արդյունավետ գործող բոլոր անձիք, կազմակերպությունները, երկրները իրենց առաքելությունը ձևակերպելիս ուշադրության են արժանացնում էական բոլոր չորս կողմերի համաչափ կատարելագործմանը:

Ինքնակատարելագործման հզոր միջոցներ են այն սկզբունքները, որոնք բխում են բնական օրենքներից և մարդը, որպես բնության բանական մասնիկ, չի կարող առանց դրանց կիրառման տևական ժամանակ արդյունավետ գործել: Այդ իսկ պատճառով, եթե մարդիկ ցանկանում են փոխել ինչ որ բան իրենց կյանքում, ապա պետք է սկսեն հենց իրենցից:

Գրականություն

1. Գ. Գևորգյան, Կառավարչական հմտություններ, ուս. ձեռնարկ, Եր., 2013
2. С.Р. Кови, Семь навыков высокоэффективных людей, М., 1997
3. Н.Я. Сацко, Практический менеджмент, Сталкер, 1998
4. А. Яновский, Школа бизнеса и личностного развития (видеоконференции)

Principles of Self-improvement

Gevorgyan Gayane

Yerevan «Haybusak» University, Faculty of Economics

Powerful principles of personal development are principles that follow from the laws of nature, and man as a rational part of nature cannot function effectively without their long-term use. That's why if people want to make a change in their lives, they should start with themselves.

Принципы самосовершенствования

Геворгян Гаяне

Ереванский университет «Айбусак», экономический факультет

Мощные принципы развития личности - это принципы, вытекающие из законов природы, и человек как рациональная частица природы не может эффективно функционировать без их длительного использования. Вот почему, если люди хотят что-то изменить в своей жизни, они должны начать с себя.

ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՍԱՏՈՒՐՅԱՆ Ս., ԱՍԱՏՈՒՐՅԱՆ Լ.

Երևանի «Հայրուսակ» համալսարան, Տնտեսագիտության ամբիոն

Ամփոփում Քննարկված է մրցակցությունը՝ որպես շուկայական տնտեսության հիմնական կարգավորող մեխանիզմ:

Հիմնաբառեր՝ ապրանքային շուկա, տնտեսական մրցակցություն, կարգավորող մեխանիզմ

Ռեսուրսների սահմանափակության պայմաններում, տնտեսվարող սուբյեկտների շահերը հաճախ բախվում են իրար, խթանելով մրցակցային պայքար, ինչն էլ հանդիսանում է հասարակության զարգացման կարևորագույն պայմաններից մեկը:

Տնտեսական հարաբերությունների զարգացման և “ապրանքային շուկա” հասկացության ձևավորման հետ ծնվեց նաև “տնտեսական մրցակցություն” հասկացությունը:

Ներկա փուլում մրցակցությունն ընթանում է առաջին հերթին խոշոր տնտեսվարող սուբյեկտների միջև, ինչպես նաև տնտեսության ոչ գերիշխող դիրք ունեցող հատվածի ձեռնարկությունների և սեփականության տարբեր ձևերի միջև: Մրցակցության հիմնական մեթոդներն են ապրանքների և ծառայությունների որակի բարելավումը, տեսականու արագ թարմացումը, ձևավորումը, երաշխիքների և ծառայությունների մատուցման, գների ժամանակավորապես իջեցումը, վճարման պայմանները և այլն: Երբեմն օգտագործվում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ գաղտնի հակամրցակցային համաձայնությունների կնքումը:

Որպես տնտեսական մեխանիզմի մաս, մրցակցությունը գործում է պահանջարկի, առաջարկի և գների միջոցով: “Ցանկացած շուկա, անկախ դրա կոնկրետ ձևից, հիմնվում է երեք հիմնական տարրերի՝ գնի, պահանջարկի ու առաջարկի և մրցակցության վրա...” [5]. Մրցակցության արդյունքում ձևավորվում է ապրանքների և ծառայությունների գինը: Կատարյալ մրցակցությունը նախատեսում է բավարար քանակությամբ արտադրողների առկայություն, երբ յուրաքանչյուր ձեռնարկության ազդեցությունը գնագոյացման վրա չի կարող որոշիչ լինել: Մենաշնորհների ձևավորման պայմաններում ազատ մրցակցությունը դառնում է մենաշնորհային, կամ անկատար: Անկատար մրցակցությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մրցակիցը հնարավորություն է ունենում միակողմանիորեն ազդել գների վրա: Եթե մենաշնորհը փոխարինի մրցակցությանը, վաճառողները սկսում են ազդել շուկայի վրա և շահարկել գները: Անկատար մրցակցությունը խոշոր ընկերությունների ու փոքր և փոխարինի մրցակցությանը, վաճառողները սկսում են ազդել շուկայի

վրա և շահարկել գները: Անկատար մրցակցությունը խոշոր ընկերությունների ու փոքր և միջին ձեռնարկությունների միջև է: Սա պայքար է շուկաների, հումքի, էներգետիկ աղբյուրների վրա շուկայական իշխանության տարածման համար, շահավետ պայմանագրեր, վարկեր ստանալու, մտավոր սեփականության (արտոնագրեր, լիցենզիաներ և այլն) իրավունքի ձեռքբերման համար: Շուկայական մեխանիզմն առավել արդյունավետ է գործում ազատ մրցակցության պայմաններում: Անկատար մրցակցությունը աստիճանաբար ավելի ու ավելի է հիմնվում արտադրության մեջ, գիտության և տեխնոլոգիաների նոր նվաճումների ներդրման վրա և ուղղված է արտադրանքի որակի բարելավմանը: Տարբերակում են գնային և ոչ գնային մրցակցության տեսակներ: Գնային մրցակցությունը “պայքար” է արտադրողների և սպառողների միջև արտադրության ծախսերի, ապրանքների և ծառայությունների գները կրճատման՝ առանց դրանց որակի և տեսականիների էական փոփոխությունների (օգտագործվում են գների շահարկում, վաճառք և այլն): Ոչ գնային մրցակցությունը արտահայտվում է արտադրության մեջ գիտական և տեխնոլոգիական առաջընթացի նվաճումների ներդրմամբ, ինչը բերում է արտադրանքի որակի բարելավմանը, նպաստում է արտադրատեսակների ընդլայնմանը: Օգտագործվում են այնպիսի գործիքներ, ինչպիսիք են երաշխիքային երկար ժամկետները, վարկերը և այլն: Ոչ գնային մրցակցությունն առավել լիովին արտացոլում է սպառողների հետաքրքրությունները: Անկատար մրցակցության մի այլ տեսակ է՝ անբարեխիղճ մրցակցությունը», որն իրականացվում է հիմնականում ոչ տնտեսական մեթոդներով, ինչպիսիք են պաշտոնատար անձանց կաշառք տալը;

- արդյունաբերական լրտեսություն;
- հակամրցակցային համաձայնությունների կնքումը՝ գնային միասնական քաղաքականության վերաբերյալ;
- մրցակիցների արտադրանքի կեղծիքները՝ ֆիրմային անվանմանը շփոթության աստիճանի նման ֆիրմային անվանման օգտագործումը կամ ֆիրմային անվանման ապորիրների օգտագործումը: Արտադրության տեմպի և ծավալի կարգավորիչի դերը իրականացնում է մրցակցությունը, միաժամանակ այն խթանում է արտադրողին գիտական և տեխնոլոգիական նվաճումների ներդրմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, տեխնոլոգիայի բարելավմանը, աշխատուժի կազմակերպմանը և այլն: Տնտեսության կարգավորման մեխանիզմում մրցակցությունը կատարում է կարգավորման, մոտիվացիայի, բաշխման և վերահսկողության գործառույթներ: Պետական քաղաքականությունը մրցակցության ոլորտում պետք է ուղղված լինի մրցակցային գործառույթների իրականացման խթանմանը:

Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության իրականացման ընթացքում առանձնապես կարևորվում են՝

- ապրանքային շուկայում մեծ թվով մասնակիցների ներկայությունը,

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

կամ որևէ կոնկրետ ապրանքի կամ ծառայության գնորդների և վաճառողների ազատ գործողությունները;

- տնտեսվարող սուբյեկտների մուտքի խոչընդոտների վերացումը ապրանքային շուկա: Մենաշնորհները խոշոր բիզնեսի այն միավորումներն են, որոնք վերահսկողություն են իրականացնում երկրի ոլորտների, շուկաների և տնտեսության վրա ու ապրանքային շուկայում չունեն մրցակից: Տնտեսության մեջ առանձնացվում են մենաշնորհների երկու տեսակ՝ արհեստական և բնական: Հայստանի Հանրապետությունում բացառությամբ նավթի և նավթամթերքի տեղափոխության, տրանսպորտային տերմինալների և նավահանգիստների բնական մենաշնորհների մյուս տեսակները առկա են՝
- խմելու և ոռոգման ջրի մատակարարում խողովակաշարով;
- ջրահեռացում կոյուղագծով;
- երկաթուղու ծառայություններ;
- էլեկտրական էներգիայի տեղափոխման և բաշխման ծառայություններ;
- գազի ներկրում, տեղափոխում և մատակարարում:

Մենաշնորհների առաջացման պատճառներն են արտադրության և կապիտալի կենտրոնացվածության բարձր աստիճանը և համակենտրոնացումները: Որոշ մենաշնորհներ հայտնվում են պետության կողմից ուղղված նպատակային գործողությունների արդյունքում: Ինչպես վերը նշված է, բնական մենաշնորհները ներառում են ջրի, էլեկտրաէներգիայի, նավթի, գազի և երկաթուղային տրանսպորտի ոլորտները: Վերջին տասնամյակներում համաշխարհային պրակտիկայում նկատվում է այս ոլորտներում կառավարության կանոնակարգի կրճատում:

Գերիշխող կամ մենաշնորհ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները, արտադրում են որոշակի ապրանքների գերակշռող քանակություն և հետևաբար, ազդում են գնագոյացման գործընթացի վրա և ստանում են բարձր եկամուտներ (գերշահույթ):

Մենաշնորհների պատմությունն անբաժանելիորեն կապված է հետևյալ գործոնների հետ.

- բաժնետիրական սեփականության իրավունքի աճի գործընթաց;
- բանկային համակարգի կողմից նոր գործառույթների և հնարավորությունների ձեռքբերում;
- ներդրումային համակարգի մասնակցության զարգացում: Մենաշնորհի հիմքը շուկայում տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքն է, ինչը թույլ է տալիս նրան վճռական ազդեցություն ունենալ մրցակցության վրա, գին թելադրել, նվազեցնել արտադրությունը և խոչընդոտել մուտքը շուկա այլ տնտեսվարող սուբյեկտների համար: Մենաշնորհները տնտեսական ռեսուրսների բարձր կենտրոնացվածության պատճառով հնարավորություն են տալիս արագացնել տեխնոլոգիական առաջընթացը:

Այնուամենայնիվ այդ հնարավորություններն իրականացվում են այն դեպքում, երբ այդպիսի զարգացումը նպաստում է գերշահույթների ստացմանը: Պետական մակրոտնտեսական կարգավորման հիմնական գործառույթներից մեկը մրցակցության պաշտպանությունն է: Մրցակցությունը շուկայական տնտեսության մեջ կարգավորող հիմնական մեխանիզմն է: Եթե մենաշնորհը փոխարինում է մրցակցությանը, ապա մենաշնորհի դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները ազդում են շուկայի վրա և շահարկում գները: Մենաշնորհների շահերից ելնելով վերաբաշխվում են նաև բնական պաշարները: Հաշվի առնելով վերոգրյալը անհրաժեշտ է պետական հակամենաշնորհային գործողություններ իրականացնել: Արդյունավետ է միայն այն հակամենաշնորհային օրենքների համակարգը, որի նպատակը մրցակցության պաշտպանությունն ու ամրապնդումն է, արտադրության արդյունավետության բարձրացումը:

Այստեղ կարևոր նշանակություն են ստանում պետական կարգավորման հետևյալ գործառույթները.

ա) եկամուտի և հարստության վերաբաշխում;

բ) ազգային ռեսուրսների կառուցվածքը փոխելու համար ռեսուրսների բաշխման ճշգրտում;

գ) տնտեսության կայունացում (գբաղվածության և գնաճի վերահսկում), ինչպես նաև տնտեսության զարգացման խթանում:

Հայաստանի Հանրապետությունում նպատակահարմար է ներդնել մրցակցությունը պաշտպանելու ուղղությամբ միջոցառումների մի ամբողջ շարք՝ ապրանքային շուկաների մենաշնորհացման առանձնահատկությունների հետ կապված: Այս համակարգը պետք է ներառի հետևյալ միջոցառումները.

1. Կառավարման ապակենտրոնացում;

2. Այն խոչընդոտների նվազեցում, որոնք սահմանափակում են տնտեսվարող սուբյեկտների մուտքը գործող շուկաներ;

3. Նոր տնտեսվարող սուբյեկտների մենաշնորհային շուկաներ մուտքի խթանում;

4. Գործող պետական մենաշնորհային սուբյեկտների տարանջատում;

5. Մենաշնորհային տիպի պետական կազմակերպչական կառույցների վերացում:

Հակամենաշնորհային մարմինը պետք է սահմանի մենաշնորհի և մրցակցության օպտիմալ հարաբերակցությունը և մշակի հակամենաշնորհային կարգավորիչ միջոցառումներ:

Շուկայական տնտեսության մեջ միշտ կա վտանգ, որ մրցակիցները կփորձեն խուսափել պարտադիր սահմանվող նորմերից: Այս առումով կառավարությունը պարտավոր է ընդունել օրենքներ, որոնք կկարգավորեն մրցակցային դաշտը: Հակամենաշնորհային օրենսդրությունը մեծ նշանակություն ունի շուկայական հարաբերությունների զարգացման, մենաշնորհի

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

սահմանափակման և առողջ մրցակցության զարգացման համար:

Հայաստանի Հանրապետությունում հակամենաշնորհային կարգավորման հիմնական սկզբունքները սահմանվում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք), իսկ կարգավորող մարմինն է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով):

Հակամենաշնորհային կարգավորման գործընթացում ամենա կարևոր ուղղություններից է համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության իրականացումը: Մրցակցությունը կարգավորող մարմինը Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, հսկողություն է իրականացնում նաև տնտեսվարող սուբյեկտների միջև տեղի ունեցող համակենտրոնացումների նկատմամբ:

Սակայն համակենտրոնացումների նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման ուղղությամբ առկա են որոշակի խնդիրներ՝ ոլորտը կարգավորող մարմնի համար հասանելի չեն բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների վերաբերյալ տեղեկությունները: Մասնավորապես, բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների վերաբերյալ փոփոխությունները գրանցվում են ռեեստր վարող կազմակերպություններում, հետևաբար բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների, վերակազմակերպումների և վերջիններիս կողմից չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման համար տեղեկատվական աղբյուրները բացակայում են: Ըստ այդմ՝ Հանձնաժողովի տեսադաշտից դուրս են մնում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունում և այլ ռեեստր վարող կազմակերպություններում արժեթղթերով կատարվող գործարքների և այդ գործարքները կատարած անձանց վերաբերյալ տվյալները, և Հանձնաժողովը, ըստ էության, զրկված է նշված գործարքների նկատմամբ վերահսկողության իրականացման հնարավորությունից:

Այս կապակցությամբ մրցակցային դաշտը կարգավորող մարմինը պետք է օրենսդրական փոփոխություններ կատարի, որոնց ընդունման դեպքում բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կդառնա հասանելի և առավել արդյունավետ կդարձնի համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողությունը՝ ինչպես տնտեսվարող սուբյեկտների կողմից նոր գործարքների կայացման ուղղությամբ, այնպես էլ նախկինում չհայտարարագրված համակենտրոնացման գործարքները բացահայտելու ուղղությամբ:

Գրականություն

1. К.Ю. Тотьев. Конкурентное право. Учебное пособие. М.:Юридическая фирма «КОНТРАКТ ИНФРА-М», 2000.-126 с.

2. Т.К. Велби, Конкуренция. Учеб. пособие. – М.: Изд-во Проспект; 2004.-80 с.
3. Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2017 տարեկան գործունեության ծրագիր:
4. Մ.Վ. Միրայեյան, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը ՀՀ- ում, Երևան, Նահապետ, 2005:
5. Մ.Ա.Գևորգյան Տնտեսագիտության տեսություն.-Երևան 1997թ., 324 էջ.

Antitrust Issues in the Republic of Armenia

Asaturyan S., Asaturyan L.

Yerevan «Haybusak» University, Faculty of Economics

The article presents the problems arising in the process of protection of competition, the experience of international regulation of their evaluation, and the issues of regulation of co-concentrations in the Republic of Armenia.

Антимонопольные вопросы в Республике Армения

Асатурян С., Асатурян Л.

Ереванский университет «Айбусак»

В статье представлены проблемы, возникающие в процессе защиты конкуренции, опыт международного регулирования их оценки, а также вопросы регулирования концентрации в Республике Армения

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

(գազամատակարարման ոլորտի օրինակով)

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ., ԴԱՆԻԵԼՅԱՆ Հ.

Երևանի «Հայրուսակ» համալսարան, Տնտեսագիտության ամբիոն

Ամփոփում Քննարկված է ՀՀ հանրային ծառայության գործառույթների իրականացման, պետական ապարատի կազմակերպման և վերջինիս գործունեության ոլորտում միասնական պետական քաղաքականության իրականացման հարցերը: Մասնավորապես գազամատակարարման ոլորտում գործընթացների դիֆարկումը հանգեցրել է նրան, որ «Գազպրոմին» տրված մենաշնորհը նվազեցրել են գազի գնի վրա ազդելու Հայաստանի կառավարության հնարավորությունները և հարցը դարձնում են հայ-ռուսական քաղաքական երկխոսության առարկա:

Հիմնաբառեր՝ հանրային ծառայություն, գազամատակարարում, մենաշնորհ, պետական կառավարում

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հանրային ծառայության կառավարումը իրենից ներկայացնում է պետական մարմինների կողմից գիտակցված, նպատակաուղղված ազդեցություն հանրային ծառայության վրա՝ հանրային ծառայության գործառույթների իրականացման, պետական ապարատի կազմակերպման և վերջինիս գործունեության ոլորտում միասնական պետական քաղաքականության իրականացման համար: Հանրային ծառայության կառավարման մարմինները հատուկ պետական մարմիններ են կամ նրանց ստորաբաժանումներ, որոնց իրավասության շրջանակում է պետական ծառայության համակարգի զարգացման ապահովումը՝ հասարակական զարգացումներին զուգընթաց:

Հանրային ծառայության արդի հիմնախնդիրները հիմնականում համակարգված ձևով ուսումնասիրված են գիտական շրջանակներում: Մասնավորապես, կարելի է առանձնացնել Վ.Վիլսոնի, Ա.Ֆիլիպի, Ն.Բոուզի, Պ.Դրուկեդի, Ս.Ալեքսանի, Զ.Մոնտգոմերիի, Խ.Լունի, Հ.Վոլմանի, և Պ.Միլլեդի, Ս.Օբսերոնի, Հ.Վոլմանի ու Կ.Թուրմայերի աշխատությունները [2]:

Հանրային ծառայությունների ոլորտը սոցիալտնտեսական մեծ նշանակություն ունի: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանց գործունեությունը շոշափում է բնակչության լայն շերտերի շահերը: Այս ծառայությունների գործունեության հետ կապված ցանկացած փոփոխություն անրադառնում է մակրոտնտեսական ցուցանիշների և կենսամակարդակի վրա: Այդ պատճառով հանրային ծառայությունների ոլորտի սուբյեկտների կարգավիճակը ստիպում է պետությանը հիմնավորված կերպով վերահսկել վերջիններիս գործունեությունը և սահմանել պատասխանատվության մեխանիզմներ նրանց կողմից իրականացվող տնտեսական գործունեության համար:

Ազգային տնտեսության համար հանրային ծառայությունների ոլորտում գործող սուբյեկտները հանդիսանալով խոշոր ընկերություններ, և շատ դեպքերում նաև միակ օպերատոր, հնարավորություն ունեն զգալի ռեսուրսների կենտրոնացման միջոցով իրականացնել հետզնման մեծ ժամանակահատված ունեցող և հասարակական առումով կենսական նշանակության ծրագրեր:

Հանրային ծառայությունների ոլորտը ունի ռազմավարական նշանակություն, գործունեության մաշտաբների, հասարակության բարեկեցության ապահովման գործում սեփական գործունեության կարևոր նշանակության պատճառով: Դրա համար էլ, պետությունը, մի կողմից ձգտում է ստեղծել հանրային ծառայությունների ոլորտի կազմակերպությունների համար բարենպաստ բիզնես միջավայր, իսկ մյուս կողմից փորձում է պաշտպանել բնակչությանը հնարավոր անբարեխիղճ վարքագծից՝ իրականացնելով տվյալ ոլորտի կազմակերպությունների գործունեության վերահսկողություն և կարգավորման գործառույթ:

Հանրային ծառայությունների ոլորտը կարելի է ներկայացնել որպես բնական մենաշնորհի հանդիսացող համակարգաստեղծ կազմակերպությունների ամբողջություն, որոնք գործում են ենթակառուցվածքային ճյուղերում, միավորված են ընդհանուր տեխնոլոգիական գործընթացում, թողարկում են հասարակության կենսագործունեության տեսակետից հատուկ նշանակություն ունե-

ցող ապրանքներ և ծառայություններ [1]:

Մենաշնորհ հասկացությունը իր մեջ հաճախ բացասական ընկալումներ ունի, դիտարկվում է որպես մրցակցության սահմանափակման, նոր արտադրողների շուկա մուտք գործելու արգելքների ստեղծման, թողարկվող ապրանքների ու ծառայությունների գնագոյացման վրա արհեստական ճնշման միջոց: Երբ մենաշնորհները երկրի տնտեսությունում ունենում են կարևոր դեր, ապա նման իրավիճակի հետևանքները կարող են հասարակության և տնտեսության համար խիստ վտանգավոր լինել: Դրա համար պետության կողմից պետք է մշակվի հակամենաշնորհային քաղաքականություն:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ մի շարք դեպքերում շուկայում մենաշնորհային իրավիճակը հանդիսանում է տնտեսության տվյալ ճյուղի կայուն զարգացման առավել նպատակահարմար տարբերակը և ամբողջությամբ համապատասխանում է պետության և սպառողների շահերին: Նշված դեպքերում մրցակցությունը կարող է հանգեցնել արտադրական և սպառողական ծախսերի աճին, որը հիմնականում տեղի է ունենում բնական մենաշնորհների դեպքում, որոնց կարգավորումը պետության կարևոր խնդիրներից է: Մենաշնորհների տեսակների մեջ կարևորվում է բնական մենաշնորհը, որի դեպքում առավել նախընտրելի է դառնում մեկ ընկերության կողմից տվյալ ապրանքների և ծառայությունների գծով պահանջարկի բավարարումը: Այս դեպքում գործում է մասշտաբի էֆեկտը, ինչի արդյունքում հնարավորություն է ստեղծվում մեկ ընկերության կողմից քիչ ծախսերով սպասարկել տվյալ ճյուղը:

Ժամանակակից պայմաններում բնական մենաշնորհները ներկայացնում են համակարգաստեղծ կազմակերպություններ, որոնք կազմում են ազգային տնտեսության կենսագործունեության հիմքը: Հանրային ծառայությունների ոլորտին հիմնականում դասվում են այնպիսի ծառայություններ, որոնց մատակարարումների անգամ կարճաժամկետ ընդհատումը կարող է հանգեցնել ամբողջ տնտեսության կենսագործունեության խաթարմանը: Ըստ էության, դրանք ներկայացնում են մենաշնորհներ, որոնց գոյությունը պայմանավորված է գործունեության տեխնոլոգիական առանձնահատկություններով: Բնական մենաշնորհները թողարկում են հասարակության կենսագործունեության համար չափազանց կարևոր արտադրանք, որը փոխարինելի չէ: Խնդիրը կայանում է նրանում, որ այդ ծառայությունների բացակայության պայմաններում մարդու և տնտեսության կենսագործունեությունը անհնար է, օրինակ՝ ջրամատակարարումը: Հանրային ծառայությունների գոյությունը կապված է համապատասխան ենթակառուցվածքների գործունեության հետ, որոնք հիմնականում վերաբերում են ցանցային համակարգերին: Բացի դրանից, տվյալ ոլորտում գործող ընկերություններին հատուկ է մեծ կապիտալատարությունը, հիմնական միջոցների թանկարժեքությունը, ինչը ենթադրում է մեծածավալ ծախսեր, իսկ մյուս կողմից հանգեցնում է ցածր սահմանային ծախսերի: Մյուս կողմից թողարկվող արտադրանքի յուրահատկությունը թույլ է տալիս դիտարկել դրանք, որպես հանրային բարիքներ:

Հանրային ծառայությունները ռազմավարական նշանակություն ունեն

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

պետության անվտանգության ապահովման գործում: Տվյալ ոլորտի կողմից մատուցվող ծառայությունները ազգային տնտեսության կենսագործունեության կարևոր երաշխիք են հանդիսանում:

Հանրային ծառայությունների ոլորտի կազմակերպությունների կողմից արտադրվող արտադրանքը և ռեսուրսները բավարարում են բնակչության զգալի մասի պահանջմունքները և կարևոր նախապայման են հանդիսանում տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար:

Ենթակառուցվածքային ոլորտում հանրային ծառայությունները մեծ դեր ունեն տարածքային զարգացման գործում: Հանրային ծառայության առանձին տեսակներ, օրինակ՝ էներգետիկ ցանցերի առկայությունը հնարավորություն է տալիս ապահովել պետության և հասարակության բնականոն գործունեությունը:

Հանրային ծառայությունները իրականացնում են մակրոտնտեսական գործառույթ: Նրանց կողմից թողարկվող արտադրանքի նկատմամբ պահանջարկի ցածր ճկունության և արտադրության անկման պայմաններում հանրային ծառայությունները որոշակիորեն մեղմում են ներքին պահանջարկի կրճատումը:

Մեծ է հանրային ծառայությունների դերակատարումը բյուջետային գործընթացում: Տվյալ ոլորտի ընկերությունները, շրջանառության մեծ ծավալների հետևանքով հանդիսանում են խոշոր հարկատուներ, հետևաբար, նրանց գործունեության համար պայմանների ստեղծումը նպաստում է բյուջետային մուտքերին:

Հանրային ծառայությունները ունեն սոցիալական մեծ նշանակություն: Հայտնի է, որ հանրային ծառայությունների ոլորտում թողարկվող արտադրանքները ունեն կենսական նշանակություն, և կարևոր տեղ են զբաղեցնում սպառման կառուցվածքում: Այս ոլորտի ընկերությունների ֆինանսատնտեսական կայունությունը կարևոր նախապայման է հանդիսանում բնակչության և տնտեսական կենսագործունեության ապահովման համար:

Հանրային ծառայության ոլորտի առանձնահատկություններից է նաև այն, որ դրանք պետք է ունենան լրացուցիչ արտադրական հզորություններ, որպիսի ճգնաժամային պայմաններում բավարարեն բնակչության պահանջմունքները:

Հանրային ծառայությունները շուկայական տնտեսության պայմաններում ենթարկվում են առևտրայնացման, ինչը պահանջում է, որ պետությունը իր սոցիալական գործառույթի դերը պահպանելու համար իրականացնի սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության միջոցառումներ:

Հանրային ծառայությունների կողմից թողարկվող արտադրանքի և մատուցված ծառայության սակագնային կարգավորումը հանդիսանում է գործարար ակտիվության խթանման հիմնական գործիքներից մեկը:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ ՀԾԿՀ [1]: Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների

ույրտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը,

- կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ,
- նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել
- ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

ՀՀ-ում Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներն են՝

- էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը,
- ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, տեխնիկական արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը,
- հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցման) բնագավառը,
- փոստային կապի բնագավառը,
- տրանսպորտի (երկաթուղային) բնագավառը՝ տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացումը:

ՀՀ հանրային ծառայությունների ոլորտում կարևոր դերակատարում ունի գազամատակարարման համակարգը, որի կառավարումը ըստ ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև «Հայրուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին 2013թ դեկտեմբերի 2-ի համաձայնագրի, մինչև 2043թ դեկտեմբերի 31-ը իրականացնելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է ռուսաստանյան «Գազպրոմ» ՀԲԸ-ի դուստր ընկերությունը: Երբ 2014թ հունվարի 31-ին 12600000 հատ 63 333 900 000 հայկական դրամ արժեքով սովորական բաժնետոմսերի փաթեթը հանձնվեց «Գազպրոմ» ՀԲԸ-ին, վերջինս դարձավ ընկերության բաժնետոմսերի միակ բաժնետերեր: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն բնական գազ է ներմուծում ՌԴ-ից [4]՝ համաձայն «Գազպրոմ Էքսպորտ» ՍՊԸ հետ կնքած պայմանագրի: Հայ-վրացական սահմանից ներկրված գազը գազափոխադրման համակարգի միջոցով տեղափոխվում է գազաբաշխման համակարգ, որտեղից էլ՝ սպառողներին: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն ապահովում է ՀՀ ներքին շուկայում բնական գազի մատակարարումն ու իրացումը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն ձգտում է զբաղեցնել իր տեղը տարածաշրջանային նշանակության գազաէներգետիկ նախագծերում՝ ակտիվ մասնակցություն ապահովելով ներքին և արտաքին շուկաների էներգետիկ ծրագրերում: Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

- բնական գազի փոխադրում, պահեստավորում, բաշխում և իրացում,
- էլեկտրաէներգիայի արտադրություն և իրացում,
- գործող գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի ու ստորգետնյա պահեստարանների վերակառուցում և ընդլայնում,
- գազային ոլորտում օբյեկտների շահագործման հուսալիության և անվտանգության ապահովում [5].

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունն ունի տարածքային սկզբունքով կազմակերպված 15 գազի-ֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղեր (ԳԳՄ), «Ինժեներական կենտրոն», 5 դուստր ընկերություն, ինչպես նաև «Հրազդան-5» և «Ուսումնասպորտային համալիր» հիմնարկները: Այսօրվա դրությամբ Ընկերությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսության առաջատար ընկերություններից մեկը և արձանագրում է լավագույն ցուցանիշներ՝ զբաղեցնելով առաջատար և կայուն դիրք Հայաստանի տնտեսության հանգուցային ճյուղերից մեկը հանդիսացող գազաէներգետիկ ոլորտում՝ զուգահեռաբար ապահովելով նաև մի շարք կապակցված ոլորտների դինամիկ զարգացումը: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հանդիսանում է հանրապետության խոշոր գործատուներից մեկը: «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության գործունեության հիմնական նպատակը նոր կառուցվող տարանցիկ գազամուղների և գազի ստորգետնյա պահեստարանների նախագծման, կառուցման, շահագործման և գործող գազամատակարարման և բաշխման ցանցերի շահագործման և ընդլայնման միջոցով բնական գազի հուսալի, անխափան և անվտանգ մատակարարման ապահովումն է: Ընկերության Որակի քաղաքականության հիմքը կողմնորոշումն է մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ՝ ելնելով յուրաքանչյուր բաժանորդի պահանջմունքներից ու սպասելիքներից: Մատուցվող ծառայությունների որակը և որակի կառավարման համակարգի գործընթացները Ընկերության համար Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում բնական գազի իրացման շուկայի ընդլայնման գլխավոր պայմանն է, ինչպես նաև՝ շահույթ ստանալու հիմքը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում հանրապետության գազաէներգետիկ ոլորտում Ընկերությունն իրականացրել է \$900 մլն ընդհանուր գումարով ներդրումներ: Պետք է հիշել, որ համաձայն 2013 թվականին 30 տարով ստորագրված համաձայնագրի՝ սակագները պետք է լինեն այնպիսին, որ «Գազպրոմ Արմենիա»-ն ծածկի սահմանին գազի գնման ու տեղաբաշխման հետ կապված իր ծախսերը, և ունենա տարեկան միջինում 9% շահութաբերություն: Այս իրավիճակում, երբ Հայաստան առաքվող գազի գինը (\$165՝ 1000 խմ-ի դիմաց) շուրջ 2 անգամ բարձր է քան ՌԴ-ից Եվրոպա առաքվող գազի գինը (\$87՝ 1000 խմ-ի դիմաց) [6], «Գազպրոմ Արմենիա»-ն դիմել է ՀԾԿ-ին՝ գազի նոր սակագին սահմանելու համար:

Այսպիսով, «Գազպրոմին» տրված մենաշնորհները նվազեցնում են գազի գնի վրա ազդելու Հայաստանի կառավարության հնարավորությունները և հարցը դարձնում են հայ-ռուսական քաղաքական երկխոսության առարկա:

Գրականություն

1. ՀՀ օրենքը „Հանրային ծառայությունը կարգավորող մարմնի մասին,, 22.02.2021.
2. Ա Եզեկյան, Հանրային ծառայության տեսա-գործնական հիմնախնդիրները ՀՀ-ում, առ.սեղմնագիր, 2018

3. Հ.Բաղդասարյան, Հանրային ծառայությունների պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, ատ.սեղմագիր, 2017
4. ՀՀ Հանրային ծառայութիւնը կարգավորող հանձնաժողովի կայք, www.psrc.am;
5. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ պաշտոնական կայք, www.armenia.am.gazprom.com:6.
6. www.1in.am 2020-05-18

**Problems of Public Services in Armenia
(on the example of the gas supply sector)**

Gevorgyan Gayane, Danielyan Hrant

YHU, Department of Economics

Solving problems in the sphere of public service for the public administration system of the Republic of Armenia is an issue on the agenda. During this period of fundamental reforms in our country, it is extremely important to improve the public service system.

Only if there is a system of organized and high-quality public service we can solve economic, political and other challenges.

**Проблемы общественных услуг в Армении
(на примере газоснабжения)**

Геворгян Гаяне, Даниелян Грант

ЕУА, Факультет экономики

В повестке дня стоит решение проблем в сфере государственной службы для системы государственного управления Республики Армения. В этот период кардинальных реформ в нашей стране чрезвычайно важно улучшить систему государственной службы. Только при наличии системы организованных и качественных общественных услуг мы можем наладить с экономическими, политическими и другими проблемами.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻՈՆԱԼԻՉՄԸ ԿՈՄՊԵՏԵՆՏԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ Հ.

*Մանկավարժական գիտքի դոկտոր, պրոֆեսոր
Երևանի «Հայրուսակ» համալսարան, Հումանիտար ֆակուլտետ*

Ամփոփում. Հոդվածում քննարկված է մանկավարժական պրոֆեսիոնալիզմի ձևավորման գործընթացը մասնագիտական կոմպետենցիաների զարգացման, դասավանդման գործընթացների կոմպետենցիային մոտեցման և դասավանդման ժամանակակից ռազմավարությունների համատեքստում:

Հիմնաբառեր. կոմպետենցիա, կարողություն, հմտություն, ռազմավարություն, պրոֆեսիոնալիզմ, աշխատաշուկա, ուսուցման մոդելներ:

Կրթության և կրթական տեխնոլոգիաների բովանդակային արդիակա-նացման, կրթական համակարգը համաշխարհային կրթական տարածքին տեղադրելու ճանապարհներից մեկը կրթության կողմնորոշումն է դեպի կոմպետենտային մոտեցումն ու հաստատությունների ուսումնական գործընթացում դրա իրականացման արդյունավետ մեխանիզմների մշակումը:

Իսկ ինչպես ձևավորել կրթության ռազմավարությունը մասնագետի կոմպետենտությունների ձևավորման անհրաժեշտության հաշվառմամբ:

Կրթության գործընթացում ինչպիսի կոմպետենցիաների զարգացումն է կարևոր:

Կոմպետենցիաների էական կարևորումը տեղաշարժեց ժամանակակից աշխատաշուկայի համար մասնագետների պատրաստման կրթական ծրագրերի սահմանները: Նախկինում նրանք որոշում էին այն գործառույթները, որոնք պետք է կատարվեն աշխատանքում, դրանց հիման վրա ստեղծվում էին մասնագրեր, ուսուցման մոդելներ և դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտությունների չափման համար թեստեր, փորձելով համեմատել գործոնային միավորներն աշխատանքի հաջողությունների հետ: Ըստ էության, մասնագիտությունների մոդելներ ստեղծելու ավանդական փորձը սկսվեց աշխատանքի և անձի առանձնացված վերլուծությամբ ու դրանք համատեղելու փորձերով: Այս մոտեցումը բավականաչափ հաջողակ էր աշ-

խատանքի ակադեմիական իրականացման և օպերատիվ գործառնական կատարման հետ կապված կանխատեսումների ժամանակ, սակայն այն թույլ չէր տալիս որոշել, թե ինչն է օգնում մարդկանց գործունեության մեջ հասնել հաջողության անորոշության, ստեղծագործականության, այլ մարդկանց հետ լայն փոխներգործության պայմաններում:

Աշխատանքային կոմպետենցիաների վրա հենված մոտեցումներում, վերլուծությունը սկսվում է աշխատող անձից՝ առանց այդ աշխատանքը պատշաճ կատարելու համար անհրաժեշտ բնութագրերի մասին նախնական եզրակացությունների, այնուհետև հարցազրույցների հիման վրա վարքագծային օրինակներ ստանալու նպատակով, որոշվում է տվյալ աշխատանքում հաջողության ապահովման հետ կապված անձնային հատկությունները: Կոմպետենտային մոտեցման մեթոդը շեշտում է չափանիշների վավերականությունը: Կարևորն այն է, որ այն բերում է աշխատանքի առավել լավ կատարման, այլ ոչ թե մատնանշում է գործոններ, որոնք առավել արժանահավատ նկարագրում են մարդու բոլոր հատկանիշներն այն հույսով, որ դրանցից ոմանք առնչվելու են տվյալ աշխատանքի կատարումը:

Գրագետ հայտնաբերված կոմպետենցիաները ենթատեքստում ընկալվում են (օրինակ՝ դրանք նկարագրում են, թե իրականում ինչ են անում փոքր գյուղական դպրոցներում հաջողակ ուսուցիչները, այլ ոչ թե այն, թե հաջողության համար ինչ է անհրաժեշտ ըստ հոգեբանների և կրթության բնագավառի այլ մասնագետների): Կրթության առավել բարձր որակավորում ունեցող կադրերը, ովքեր իրենց աշխատանքի մեջ հասնում են ամենալավ արդյունքների, անկախ այսօրվա կրթության բարդ համատեքստից, տարիքից, սեռից կամ ժողովրդագրական նախապայշարմունքներից, առանձնացվում են այդ մոտեցմամբ:

Հայտնի միջազգային կազմակերպությունները (UNICEF, UNDP, Եվրոպական խորհուրդ, OECD, Միջազգային ստանդարտների խորհուրդ և այլն) ակտիվորեն ուսումնասիրում են կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցմամբ կրթության տարբեր համակարգերի ինտեգրման հետ կապված խնդիրները:

Եվրոպական կրթության հիմնադրամն իր վերջին փաստաթղթերում «կոմպետենտություն» հակացությունը սահմանել է որպես «գիտելիքները և որակավորումը օգտագործելու ընդունակություն, որը հնարավորություն է տալիս ձեռք բերված գիտելիքները դարձնել գործուն և դրանք կիրառել նոր իրավիճակներին համապատասխան»:

«Կոմպետենտություն» տերմինով արտահայտվում են մի շարք երևույթներ՝ մտավոր գործողություններ (գործընթացներ, գործառույթներ), անձի անձնային հատկություններ, դրդապատճառային հակումներ, արժեքային կողմնորոշումներ (դիրքորոշումներ), միջանձնային և պայմանական փոխներգործակցության առանձնահատկություններ, գործնական կարողություններ, հմտություններ և այլն:

Այն առավել ամբողջովին արտացոլված է Թյունինգ ծրագրի (Tuning

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Project) նախագծում: «Եվրոպայում կրթական կառույցների կարգավորումը» ծրագրի շրջանակներում կոմպետենցիաները բաժանվում են՝ ընդհանուր և կրթության կոնկրետ ուղղություններին հատուկ:

Կոմպետենցիան ներառում է՝

- ճանաչողական կոմպետենցիա,
- գիտելիք և հասկացում,
- գործառույթային կոմպետենցիա (հմտություններ), հատկապես այն, թե ինչ պետք է կարողանա կատարել մարդն աշխատանքային ոլորտում, կրթության կամ սոցիալական գործունեության ոլորտում,
- անձնական և մասնագիտական կարողություններ (ընդունակություններ) [1]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերջին հրապարակումներում կոմպետենցիայի հասկացությունը մեկնաբանում է որպես «գիտելիքների, որակավորումների, արժեքների և հարաբերությունների համախումբ, որն օգտագործվում է ամենօրյա իրավիճակներում»:

Ընդհանուր առմամբ, միջազգային տարբեր կազմակերպությունների փաստաթղթերում մասնագիտական կոմպետենտությունը նշանակում է որոշակի գործառույթներ ակտիվորեն իրականացնելու և մասնագիտության մեջ որոշակի չափանիշների հասնելու ընդունակություն: Կոմպետենցիայի ինդիկատորներ, որպես, առաջարկվում է համարել ձեռք բերված գիտելիքները, որակավորումները, կրթական արդյունքները և գնահատականը, որոնք արտացոլում են անձի աշխատանքային գործունեությունը:

Այնուամենայնիվ, հարց է ծագում՝ ինչ կոմպետենցիաներ են պահանջվում աշխատաշուկայում մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների հաջողության համար:

Կրթական ծրագրերում կոմպետենցիաների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից գործատուները, որպես կանոն, չեն ձևավորում պահանջներ մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների գիտելիքների մակարդակի նկատմամբ, որոնք ապահովում են աշխատանքի հաջողությունը: Նրանք մատնանշում են կրթության թերությունները, որոնք թույլ չեն տալիս հասնել հաջողության: Տնտեսապես զարգացած երկրների գործատուներն այդ թերություններին են դասում գիտելիքներն որոշումներ կայացնելու գործընթացում կիրառելու ընդունակությունը, փոփոխություններին հարմարվելու անկարողությունը և ստեղծագործական ակտիվության բացակայությունը: Գործատուների ընդհանուր ցանկությունն այն է, որ ուսումնական հաստատությունները թողարկեն այնպիսի մասնագետներ, ովքեր կարող են հաջողությամբ աշխատել խմբերում և խմբեր ղեկավարել, հասկանալ նորարարական գործընթացները և տիրապետեն ստեղծագործական ուժի:

Սովորելու ընդունակ և հաջողությամբ աշխատելու մոտիվացված մասնագետների աշխատաշուկայի պահանջարկը հետազոտողների ուշադրությունը

հրավիրում է մասնագիտական ուսումնական հաստատությունների այն ուսանողների բնութագրերի ուսումնասիրության վրա, որոնք դասավանդողների կարծիքով տիրապետում են այդ որակներին:

Այդ որակներով առավել տարբերվող ուսանողները բնութագրվում են հետևյալ ուսումնական կոմպետենցիաներով՝ տեղափոխել.

- նյութի գծային յուրացումից՝ դեպի հիպերտեքստի ուսումնասիրություն,
- հրահանգից՝ կոնստրուկցիայի և բացահայտումների,
- դասավանդողի առաջադրանքները կատարելուց՝ սեփական նպատակադրումներ,
- դասագրքերի նյութերից՝ ուսումնառության նյութեր ինքնուրույն ընտրելուն,
- խիստ վերահսկվող ուսուցումից՝ անձնական պատասխանատվության և ինքնագնահատականի բարձրացման վրա հիմնված ուսումնառության,
- հարկադրական ուսուցումից՝ ուսումնական պահանջմունքի:

Ընդհանուր առմամբ, գործատուների կողմից նշվում են հաջող աշխատանքային գործունեության նախապատրաստված ուսանողների հետևյալ բնութագրերը՝

- *Անկախություն.* պատասխանատու մարդիկ, ովքեր կարող են ինքնուրույն վերլուծել, պլանավորել, կատարել և գնահատել սեփական գործունեությունը:
- *Ինքնակառավարում:* Ինքնորոշված մասնագետներ, ովքեր կարող են բացահայտել աշխատանքի ընթացքում իրենց ինչ է անհրաժեշտ նպատակներ սահմանելու և խնդիրները լուծելու, սեփական ժամանակը կառավարելու և աշխատանքի որակի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու համար ջանքերի գործադման համար:
- *Նորի ձգտում և ինքնկրթություն,* ճանաչողության չափազանց ուժեղ դրդապատճառներ:
- *Համատրություն.* խնդիրների լուծման հարցում: Լավագույն արդյունքների հասնելու համար կարողանում են կիրառել տարբեր ռեսուրսներ, օգտագործել աշխատանքային գործընթացում ծագող դժվարությունների հաղթահարման տարբեր ռազմավարություններ:
- *Առանց հակամարտության ազատ համագործակցության ունակություն:* Սա կարող է հաստատել անհրաժեշտ հարաբերություններ և լուծել սոցիալական խնդիրներ:

Այս բնութագրերը, որոնց վրա կառուցված են մասնագիտական կրթության ժամանակակից կրթական ռազմավարությունները, ընդգրկված են «ինքնակառավարման սոցիալ-կառուցողական կրթության» տեսության մեջ:

Աշխատողի պրոֆեսիոնալիզմի վրա ազդեցության տեսանկյունից կոմպետենցիաների հասկացության զարգացման կարևոր փուլ դարձավ 1990-ականների Քեմպբելլի աշխատանքը (1990թ.): Այդ աշխատանքում ձևակերպված էր

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ոչ միայն աշխատավայրում վարքի հասկացությունը, այլև առանձնացված էր ցուցանիշը գործունեության արդյունքներից: Քեմպեյլի կողմից սահմանվեց, որ «խնդրի կատարումը պահվածքն է աշխատավայրում: Դա այն է, ինչ մարդիկ անում են և ինչն արտացոլվում է իրենց գործողություններում: Յուրաքանչյուր պաշտոնի համար գոյություն ունի կոմպետենտային հիմնական բնութագրեր, որոնք տարբերվում են իրենց ցուցանիշներով և այլ փոփոխականների հարաբերակցությամբ: «Կատարողականը» այն է, ինչ անում են մարդիկ և ինչը կարելի է գնահատել: Այս հասկացությունը ներառում է միայն այն գործողությունները կամ վարքը, որոնք համահունչ են կազմակերպության նպատակներին, և որոնք կարելի է չափել որպես յուրաքանչյուր աշխատողի փորձ և գիտելիք (կամ ընդհանուր նպատակներում դրանց ներդրման մակարդակ): Առաջադրանքների կատարումն այն է, ինչ աշխատողը պետք է կատարի և կատարի լավ: «Կատարողականը» գործողությունների հետևանք կամ արդյունք չէ, դա ինքնուրույն գործունեություն է: «Կատարողականը» բաղկացած է աշխատանքային գործողությունների կազմակերպման համապատասխան նպատակներից, որոնք իրականացվում են անձի կողմից, անկախ նրանից, թե ինչպիսին են դրանք» [2]:

Պրոֆեսիոնալիզմի ժամանակակից մոդելները մշակվում են որոշակի բնագավառի բարձր պրոֆեսիոնալ աշխատողներին բնորոշ հատկությունների ուսումնասիրության հիման վրա:

Որպես հետևանք, դրանք չեն արտացոլում առանձին մարդկանց որակները, այլ, ընդհանուր առմամբ՝ մարդկանց որոշակի դասի որակները: Այլ կերպ ասած, ոչ մի աշխատող չի կարող ունենալ բոլոր որակները ցանկացած պահի և միաժամանակ: Քանի որ պրոֆեսիոնալիզմի ժամանակակից մոդելները չեն հիմնվում այն որակների վրա, որոնք ամբողջապես բնորոշ են մեկ անձին, ուստի դրանք չեն ենթադրում յուրաքանչյուր մասնագետի բոլոր պրոֆեսիոնալ հատկությունների զարգացումը առանձին վերցրած: Այս իմաստով, պրոֆեսիոնալիզմի մոդելավորումը չի կարող դիտարկվել որպես բարձր որակավորմամբ պրոֆեսիոնալ աշխատողների «վերարտադրման» գործընթաց: Այն հարկ է դիտել որպես աշխատողների որակավորման ընդհանուր չափորոշիչների փոփոխման գործընթաց, չափորոշիչները գերազանցելու նրանց ընդունակությունների զարգացում:

Բացի այդ, պրոֆեսիոնալիզմի մոդելները հիմնվում են տվյալ պահին արդյունավետ պրոֆեսիոնալ աշխատանք ներկայացնելու հիմքի վրա: Նույնիսկ մոտ ապագայում պրոֆեսիոնալիզմի ընկալումը կարող է փոփոխվել: Առավել երկար ժամանակ անփոփոխ է մնում միայն քննադատական մտածողությունը, ուսումնական ընդունակությունը, անձային որակները և աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքը: Այս որակներն են հատկապես նշվում գործատուների կողմից որպես աշխատանքում բուհերի շրջանավարտների հաջողության հասնելու անհրաժեշտ պայմաններ:

Եթե համեմատենք Եվրամիության հետազոտողների խմբի (TUNING) կրթության ոլորտի մասնագետների կոմպետենտությունների ուսումնասիրության արդյունքներով բուհերի շրջանավարտների ժամանակակից կազմակերպություններում հաջողությամբ աշխատելու համար անհրաժեշտ հանրագումարային բնութագրերը, ապա կնկատենք, որ դրանք համակցված և ճշգրտված են մանկավարժական մասնագիտությունների աշխատանքի վերաբերյալ:

Շատ դեպքերում, ուսուցման նոր մոդելները կենտրոնանում են մոտիվացիայի, քննադատական մտածողություն զարգացնելու, նորը սովորելու ընդունակության, փորձաքննություն իրականացնելու, որոշումներ կայացնելու և պատասխանատվություն ցուցաբերելու վրա: Այս բնութագրերը մնում են համեմատաբար կայուն յուրաքանչյուր մասնագիտության համար:

Երբ ենթադրվում է առաջադրանքի էության հիմնարար փոփոխություններ, պետք է իրականացվի պրոֆեսիոնալիզմի նոր հետազոտություն: Հետազոտության նոր տվյալները հնարավորություն կտան ստեղծել ավելի ճկուն կրթական ծրագրեր: Այսինքն՝ բարձրագույն կրթությանն այսօր անհրաժեշտ է կրթության նոր մոդել, կառուցված սոցիալական նախագծման սկզբունքների վրա:

Նոր կրթական ռազմավարությունների ներդրումը դյուրին գործ չէ, ավելի շուտ բարդ է, քան ուսումնական ծրագրերի բովանդակության արդիականացումը: Ուսուցման ռազմավարությունը փոխկապակցում է կրթության բոլոր բաղադրիչները, իսկ այդ բաղադրիչները յուրաքանչյուր երկրում միշտ փոխկապակցված են իրապես առկա մշակութային, սոցիալական, տնտեսական և քաղաքական բաղադրիչների հետ և նույնիսկ արտացոլում են բուհի կամ ֆակուլտետի պրոֆիլի առանձնահատկությունները: Բարդությունը կայանում է նրանում, որ, չնայած կոմպետենցիաների բավականաչափ համընդհանուր բնույթին, դրանք ձևավորվում են որոշակի թեմատիկ ոլորտի կրթության միջոցով:

Օրինակ՝ այնպիսի կոմպետենտությունը, ինչպիսին է «ստեղծագործական մտածելակերպ դրսևորելը» ուսումնական ոլորտներում դրսևորվելու են տարբեր ձևով, իսկ մասնագիտության մեջ հաճախ անհրաժեշտ է այդ ընդունակության ինտեգրում և ընդհանրացում կախված լուծման ենթակա խնդիրների դասից: Հաշվի առնելով այդ, կարևոր է, որ կոմպետենցիաների համախումբը համաձայնեցված լինի ուսուցման հետ և իր արտահայտվածությունն ունենա յուրաքանչյուր դասընթացի թեմայում կամ ուսումնական մոդուլում, իսկ ռազմավարությունն ուղղված լինի դրանց ձեռքբերման մակարդակի բարձրացմանը:

Ուսումնական դասընթացի ընդհանուր կոմպետենցիաների օրինակ.

Ուսումնական միավորի/մոդուլի ավարտին ուսանողը պետք է ցուցաբերի առաջնային և երկրորդային աղբյուրներից տեղեկատվության արդյունավետ ընտրության հմտություններ, ներառյալ համակարգչի օգնությամբ տեղեկատվության ընտրություն առցանց որոնման համակարգերում: Կրթության նախագծերը պետք է պարունակեն կոմպետենցիաների բազմաբնույթ համակարգեր,

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

դրանց ձեռքբերումը պետք է կառավարվի ուսանողի մասնակցությամբ: Այսպիսով, այս նախագծերն անպայման պետք է ներառեն սովորողների կողմից կոմպետենցիաների ձեռք բերման և զարգացման մեթոդաբանություն: Այս դրույթն անհրաժեշտ է դարձնում ցանկացած ուսումնական առարկա դասավանդելիս դասավանդողների ներգրավումը հումանիտար ռազմավարությունների կիրառման ոլորտ:

Ուսուցման բնույթը միանշանակ չէ, դասավանդման աշխատանքը բարդ է և պահանջում է դատողություն, գործողություն, իրենց դիտարկումների և հասկացությունների հիման վրա որոշումներ կայացնելու և դրանք վերանայելու ընդունակություն, տարբեր ռազմավարությունների օգտագործելու կարողություն: Դասավանդողի աշխատանքի այս առանձնահատկությունները միշտ էլ հակասություններ են հարուցել մանկավարժական մասնագիտությունների շրջանավարտներին դասավանդման գործընթացին նախապատրաստվելու հարցում:

Մանկավարժական հաստատություններում իրականացվող բարեփոխումների տարիների ընթացքում մշակվել են տարբեր ծրագրեր, մանկավարժական մասնագիտությունների չափորոշիչներ, դասավանդման մեթոդներ, որոնք արդեն շատ շրջանավարտների օգնում են պատրաստ լինել հաջող դասավանդման գործունեության: Միաժամանակ, մանկավարժական կրթության ոլորտում կրթական ռազմավարության վերանայման հարցերն այսօր դառնում են առավել կարևոր և բազմաթիվ առումներով ապահովում ազգային կրթության համակարգի գործառնության ամբողջական հաջողությունը: Մի կողմից, լայնորեն քննարկվում են կրթության բոլոր կառույցների նոր որակի հարցերը և, առաջին հերթին, հանրակրթության, մյուս կողմից՝ տեղի է ունենում բարձրագույն կրթության համակարգի բարեփոխում:

Կրթությունը և մասնագիտական պատրաստությունը Եվրոպական համայնքի քաղաքականության առաջնահերթություններն են: Եվրահանձնաժողովը դասավանդողների կրթությունն ու կրթական հետազոտությունները դիտում է որպես լիսաբոնյան նպատակներին հասնելու «կենսական տարրեր»: Այս դիրքորոշումը բազմիցս հայտարարվել է մադրիդյան հյուպատոսական հանդիպումներում, ինչպես նաև հանձնաժողովի համատեղ զեկույցում: Որպես արդյունք, մանկավարժների կրթությունն ու պրոֆեսիոնալ զարգացումը և կրթական ոլորտի հետ կապված ծրագրերը դարձել են պրոֆեսիոնալիզմի բազմազանության քննարկման առարկա: Չնայած մանկավարժական կրթության արդիականացման բնագավառում ներդրվում է հսկայական ռեսուրսներ, այդուամենայնիվ ուսումնական դասընթացների բովանդակության և կրթության մրցակցող հայեցակարգերի գաղափարների միջև դեռևս հավասարակշռություն հաստատված չէ [3]:

Եվրահանձնաժողովի փաստաթղթերում նշվում է, որ համալսարանական դասավանդողները, որոնք իրենք են կրթական նոր հայեցակարգերի հեղինակ,

նախևառաջ պետք է ցուցադրեն, որ մանկավարժական մասնագիտությունների բնագավառում մասնագետների պատրաստումը կառուցվում է ժամանակակից և արդյունավետ ռազմավարությունների վրա, որոնք կարող են կրթական համակարգի համար ապահովել կադրերի պատրաստումը, դրանով իսկ ազդելով նորացման խնդիրների լուծման վրա:

Մի շարք ուսումնասիրություններ նվիրված են նորարարական կրթության առկա ձևերի ուսումնասիրությանը և ուսուցման հետ կապված գործընթացների տարբեր տիպերին: Իրականացված հետազոտությունները հնարավորություն տվեցին որոշել նորարարական կրթության գործընթացի հիմնական բնութագրերը: Այսպես հաստատվել է, որ կրթության մոդելների նորացման գործընթացը հիմնված է ենթադրյալ և ակնհայտ գիտելիքների փոխանցումների կիրառության վրա [4]: Օրինակ, ավանդաբար ուսանողներին առաջարկվում էր լսել դասախոսությունները և տիրապետել տեսական դրույթներին, հասկացություններին, սկզբունքներին, որոնք անհրաժեշտ են ուսումնական դասընթացի յուրացման համար: Այսօր գիտելիքների յուրացման գործընթացը կազմակերպվում է բազմազան ձևով [5]: Նույնիսկ, եթե գիտելիքները յուրացվում են ավանդական մեթոդներով, դրանց յուրացումը ենթադրում է գնահատման այլ մեթոդներ, օրինակ՝ էսսեների և զեկույցների տեսքով: Գնահատման հիշյալ մեթոդներն ուսանողին հնարավորություն է տալիս իմաստավորել գիտելիքներն ու դրանց հիմքում ընկած տեսական դրույթներն ու սկզբունքները: Այս դեպքում, տեսական գիտելիքները դառնում են բացահայտ ձևավորված: Բացի այդ, գիտելիքների ձևավորման եղանակներն ավելի շատ առնչվում են փորձառական, կառուցողական ուսուցման մոդելներին:

Կրթության ոլորտում նորարարությունը կապված է երկու լիբերալ գաղափարների հետ: Առաջին գաղափարն այն է, որ ցանկացած հասարակություն շահագրգռված է հասարակական կյանքին մասնակցելու նախապատրաստման գործընթացում երիտասարդ սերնդի ներկայացուցիչների քաղաքացիական գիտակցության ձևավորմամբ: Այս գաղափարն արտացոլվում է սոցիալական ուսուցման ռազմավարությունների աճող ուշադրության կենտրոնում: Մարտավարությունը ներառում է ուսանողների մասնակցությունը սոցիալական ուղղվածության նախագծերին, ուսուցման արդյունավետ մոդելների կիրառմանը և ուսումնական գործընթացում մոդելների ընտրությանն ու քննադատական փորձաքննությանը: Երկրորդ գաղափարը կապված է կրթության թափանցիկության ընդլայնման, ՏՀՏ տեխնոլոգիաների ներդրման հետ և ցանցային ուսուցման հետ: Տեխնոլոգիան կարող է հանդիսանալ դասավանդման և ուսումնառության գործընթացների բովանդակության, մեթոդների և վերջնական որակի ամենատարբեր փոփոխությունների կատալիզատոր, առավել հաճախ դասավանդման դասախոսության ձևից անցում կատարելով նախագծերի վրա հիմնված հետազոտությունների: Տեղեկատվական տեխնոլո-

գիաների գաղափարը, որպես փոփոխությունների կատալիզատոր, առավելազույն ընդհանուր է բոլոր հետազոտությունների համար:

Այսպիսով, մանկավարժական կրթության բնագավառում ուսումնառողների արոճեցիկնալիզմի զարգացումը կարելի է ապահովել դասավանդման գործընթացում հանրագումարային կոմպետենցիաների զարգացմամբ, ուսուցման նազմավարությունների մեջառաջանցիկ փոփոխությունների միջոցով:

Գրականություն

1. «Tuning Educational Structures in Europe» Phase 1 (2000–2002); Phase 2 (2003–2004). http://www.relint.deusto.es/Tuning_Project/index.htm.
2. Campbell J. P. Modeling the performance prediction problem in industrial and organizational psychology // Dunnette M. D., Hough L. M. (eds.) Handbook of Industrial and Organizational Psychology, second edition. 1990. Vol. 1. P. 687–732. Palo Alto: Consulting Psychologists Press.
3. ECTS and Diploma Supplement. Brussel, 2004. http://europa.eu.int/comm/education/pro-grammes/socrates/ects_en.html.
4. Պետրոսյան Հ.Հ., Կոմպետենտային մոտեցումը և մասնագիտական կրթության որակի ապահովումը: Մենագրություն: Հեղինակային հրատ.: Եր., 2013.- 264 էջ:
5. Պետրոսյան Հ.Հ., Կոմպետենտությունների ձևավորվածության մշտադիտարկումը շարունակական կրթության համատեքստում: «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Եր., No11, 2017, էջ110-118:

Педагогический профессионализм в контексте компетентного подхода и стратегии обучения

Петросян Г.А.

Ереванский университет “Айбусак», гуманитарный факультет

Рассматривается процесс развития педагогического профессионализма в контексте профессиональных компетенций, компетентного подхода к процессам преподавания и современных стратегий обучения.

Pedagogical Professionalism in the Context of Competent Approach and Teaching Strategies

Petrosyan H. H.

Yerevan “Haybusak» University, Faculty of Humanities

The article discusses the process of pedagogical professionalism in the context of the development of professional competencies, a competent approach to teaching processes, and modern teaching strategies.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ Հ.

Մանկավարժական գիտ դոկտոր, պրոֆեսոր

Երևանի «Հայրուսակ» համալսարան, Հումանիտար ֆակուլտետ

Ամփոփում. *հողվածում Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության բարեփոխումների և ԱՊՀ երկրների փորձի համեմատական վերլուծության արդյունքում ներկայացված է մանկավարժական կրթության զարգացման ուղղությունները:*

Հիմնաբառեր. *կրթական ծրագիր, մանկավարժական բուհ, կրթության աստիճան, կոմպերենցիա, ուսուցիչ, աշխատաշուկա:*

Text-oriented	according to the, and colleagues found that, as a function of (the), are consistent with the, as a result of, as shown in figure, of this figure, on the basis of, as well as the, as well as to, can be found in, can be used to, consistent with the idea, for example the, has been shown to, have been found to, have been shown to, in addition to the, in contrast to the, in line with the, in other words, in response to, in terms of the, in the case of, in the literature, in the next section, in the present, in the previous section, in the sense that, in this article, in this section we, is consistent with the, is shown in figure, is that it is, it can be seen, of the two, on the basis of (the), on the one hand, on the other hand, related to the, such as the, suggests that the, support for the, studies have shown that, that it is, the fact that the, the idea that, the results of the, there is evidence that, these findings suggest that, to account for the, to the fact that, we found that the, with respect to the, with the idea that
Research-oriented	a number of, a great deal of, a recent meta-analysis, a (wide) range of, a set of, a variety of, activation of the, all of the, an important role in, as long as the, as the number of, at the same time, between the two, depends on the, differences in the, effect sizes were, in the context of, a risk factor for, at the end of, at the level of, at the time of, for each of the, from trial to trial, have been used to, in a study of, in a variety of, in a way that, in order to, in the absence of, in the face of, in the form of, in the meta-analysis, in the number of, in the presence of, in the same, in the united states, in this meta-analysis, in which the, is associated with the, is based on the, included in the, individual differences in, it is not, may not be, most of the, of the effects of, number of studies, of individual differences in, of the model, of the number of, of the stimulus, of the target, of the task, of the variance in, one of the most, over the course of, play a role in, part of the, risk factor for depression, some of the, that can be, that there is a, the ability to, the absence of, the absence of a, the amount of, the activation of the, the association between, the basis of the, the comparison of, the degree to which, the difference between the, the distance between the, the distribution of, the effect(s) of, the end of the, the extent to which, the impact of, the importance of, the influence of, the level of, the location of the, the magnitude of the, the nature of the, the presence of a, the processing of, the proportion of, the relationship between, the role of the, the set of, the shape of the, the size of the, the strength of the, the type of, the use of, the value of the, there is no, to be a, to the development of, to the extent that, to respond to, ventromedial prefrontal cortex
Participant-oriented	are likely to be, are more likely to, for a review see, is likely to be, is more likely to, is possible that the, it is important to, it is likely that, it is possible that (the), it is possible to, it may be that, it should be noted, more likely to be, our understanding of the, were more likely to

Although many bundles display rather straightforward functions deducible from their meanings, many others must be considered in context in order to determine their function. Below are examples of each of the functions in context.

Text-oriented

Text-oriented or referential bundles are used to organise the text and guide the reader through it:

1. In addition to the powerful prosocial effects of some forms of rituals, Buddhist contemplative practices of loving kindness may also play a measurable role in well-being, social support, and connection with others
2. These strategies fall into three main categories that vary in their commonness as a function of the behavior targeted.
3. Longitudinal studies provide the most compelling support for the theory.

Research-oriented

1. Research-oriented or referential bundles are concerned with activities and experiences of the writer in the real world. The high number of this type of bundles may be due to the researchers' focus on presenting their writing as 'objective' and 'factual':
2. Effect sizes were coded as nonstressed for subsamples with relatively low stress in comparison to a high stress group in the same study or studies focused on a general population
3. Neuroimaging studies of motor sequence learning further confirmed the role of the sensorimotor striatum in chunk formation, along with a frontoparietal network and the mediotemporal lobes
4. The results indicated that the activation of the insula and putamen was increased in men, but not in women.
5. Participants in this study recorded diaries documenting the extent to which they felt as if they had been transgressed against on a daily basis.
6. Participant-oriented
7. Participant-oriented or stance bundles are focussed on the reader or the writer:
8. The article closes by demonstrating how the three theories relate to each other and contribute to our understanding of prejudice and its reduction.

As it was mentioned above, the function of many bundles can only be determined in context. Thus, even though *support for the* was classified as text-oriented, in some contexts it functions as a referential (research-oriented) bundle. Concordance lines are especially useful for determining the actual function of each token. Figure 2 is an illustration of this. The instances of research-oriented function of the bundle are marked by 'R', and text-oriented function is marked by 'T'.

Figure 2. Concordance lines for support for the

R c) cooperation between groups, and (d) authority support for the contact. All port approved of my
T Longitudinal studies provide the most compelling support for the theory (Binder et al. 2009, Christ
T such, this finding in fact provides further support for the scene construction theory, which
T native possibilities. The discovery provides some support for the idea that a counterfactual is
T to implant such false beliefs, providing strong support for the mentalistic view that an abstract
T the session. Behavioral studies provide further support for the notion that older adults engage
T compensate each other. Some studies provide support for the additivity of different types of
R there is attitudinal support but not behavioral support for the goal of the intervention will
T review studies that have been used as support for the argument that stereotype threat do
T information theory's T) in providing converging support for the theoretical construct of the
T to identification of such stimuli, he found support for the Euclidian metric. Despite the
T in Psychological Bulletin. We are pleased that support for the RMH was found across diverse
T as well as emotion-related measures. Moreover, support for the RMH spanned male and female
T in the punishment-only task that provides support for the utility of the RMH. This
T maze task ($r // .313$) provides even stronger support for the predicted passive avoidance
T though these findings provide robust differential support for the RMH versus low fear model,
T the low fear model. Reflecting concerns about support for the overall low fear model,
T threat processing in an attempt to boost support for the low fear model. Even so,
T the beneficial effect of collaboration, providing support for the idea that reexposure to
R one occurrence of C. Instead of providing support for the right hemisphere's dominance in
R Figure 1. One of these, GEN, reflected direct support for the U.S. entering a war,
R measured beliefs and attitudes that predicted support for the war. For three of these,
R guy" not only triggered a reversal in support for the war, but also led to
T for cognition suggests further (albeit indirect support for the idea that entitlement is associate
T operative). In particular, there is equivocal support for the importance of social support in
T & Buhrmester, 1992). However, there is growing support for the idea that the importance of
T friend support was significant, demonstrating support for the GB model for each support
T with nonstressed comparison group would offer support for the SB model; no significant differences
T SB model; no significant difference would offer support for the GB model (see Table 12 for
T support (see O/A in Table 12) demonstrated support for the GB theory: The association between
T The current study demonstrated consistent support for the general benefits (GB) model, but
T childhood and adolescence. Consistent support for the general benefits model was also
T Overall, these analyses provided continued support for the GB model, but further exploration
R surprising finding is the general lack of support for the inclusion of parent/family involve
R on putative susceptibility markers, this provides support for the differential susceptibility hypoth
R with negative child adjustment, this provides support for the diathesis-stress model. If

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

T with positive child adjustment, this provides
T in the following sections. However, the
T to A than B provides somewhat ambiguous
T threat-related biases. The data provide indirect
T (PTSD) and problematic alcohol use showed
T that depression predicts PE would provide
T allowed us to compare the extent of
T would predict PE, thereby obtaining stronger
T increased. This unifying result provides further
T also expands subjective time – providing further
T Regardless, this literature provides strong
T . . . This principle of learning provides empirical
T presented. Research studies have also found
T dynamics and adaptation effects provided strong
R the optical variable ` provides informational
T attitude strength. Then we discuss some empirical

support for the vantage sensitivity model. The
support for the predictiveness principle offered b
support for the predictiveness principle over the
support for the idea that stimulus visibility mode
support for the sleep dimensional hypothesis.
support for the scar and complication models.
support for the scar/complication models versus
support for the predisposition and pathoplasty
support for the processing principle: attending
support for the processing principle. These
support for the idea that gesture functions, in
support for the efficacy of lifelong access to
support for the association between agitation
support for the integrated utility-based model,
support for the perception of the severity of
support for the proposition that attitude strength

Figure 2 shows several instances of the bundle support for the performing a research-oriented function, though the overwhelming majority of the uses of this bundle are text-oriented. This example illustrates the usefulness of concordance lines for advanced learners: their use in the classroom or in the process of writing can offer many insights.

This section reported on the results obtained from the analysis of lexical bundles in psychology research articles. The next section will summarise the conclusions drawn from the present study.

Conclusion

Lexical bundles play an important role in in academic discourse acting as building blocks and, in many cases, marking the genre and the discipline. This study examined lexical bundles in psychology research articles to describe their frequency, structure, functions and use in this discipline.

126 three-word bundles were found in the corpus, consistent with the expectation that three-word bundles are much more numerous than 4- and 5-word bundles. Interestingly, four-word and five-word bundles were also abundant (115 and 13 respectively). The most favoured bundle in psychology is *as well as*, occurring 407 times in the corpus.

The number of bundles in psychology is comparable to those used in natural sciences ().

At the same time, the high proportion of participant-oriented bundles (15, or 9% of all the bundles) seems to indicate an affinity with social sciences.

The structure of lexical bundles corresponds to the expected patterns of noun phrase and prepositional phrase structures, characteristic of academic discourse (Biber & Barbieri, 2007).

Two bundles were characterised as topic-specific, but were not discarded from the list as they were deemed important for understanding the use of lexical bundles in the discipline of psychology.

The absolute majority of lexical bundles in psychology research articles are noun phrase and prepositional phrase structure, as opposed to a very moderate number of verb phrase structures. This finding supports the view that academic language is predominantly phrasal (Biber & Gray, 2010; Cortés, 2008, Salazar, 2014, etc.).

Certain correlation has been found between form and function of lexical bundles (Salazar, 2014), as is the case of the anticipatory it + verb phrase / adjective phrase which are all participant-oriented.

The function of some lexical bundles may be an arbitrary issue depending on the purposes of the study and the intuition of the analyst. In these cases, concordance lines are particularly useful for determining the function of a particular sequence.

The analysis revealed several lexical bundles related to citation patterns which were discarded as being out of the scope of this study, but may be an interesting topic for further corpus-based research.

The 'standard', accepted use of lexical bundles in psychology indicates expertise and knowledge of the genre and discipline conventions of the discourse community, therefore, research in this field can orient novice researchers to produce more expert-like texts and gain acceptance into the discourse community.

References

1. Ackermann, K., & Chen, Y. 2013. Developing the Academic Collocation List (ACL) – a corpus-driven and expert-judged approach. *Journal of English for Academic Purposes*, 12, 235-247.
2. Ädel, A., & Erman, B. 2012. Recurrent word combinations in academic writing by native and non-native speakers of English: A lexical bundles approach. *English for Specific Purposes*, 31(2), 81–92.
3. Allen, D. 2011. Lexical bundles in learner writing: An analysis of formulaic language in the ALESS Learner Corpus. *Komaba Journal of English Education* 1: 105–127.
4. Altenberg, B. 1998. On the phraseology of spoken English: The evidence of recurrent word-combinations. In A. Cowie (Ed.), *Phraseology* (pp. 101–122). Oxford: Oxford Clarendon Press.
5. Anthony, L. 2010. AntConc (Version 3.4.4) [Computer Software]. Tokyo, Japan: Waseda University. Available from <http://www.antlab.sci.waseda.ac.jp/>
6. Anthony, L. 2015. AntFileConverter (Version 1.2.1) [Computer Software]. Tokyo, Japan: Waseda University. Available from <http://www.laurenceanthony.net/>
7. Balasanyan, D., 2017. Lexical bundles in EAP: a multidisciplinary study of expert

- and novice authors. Unpublished Doctoral dissertation. University of La Laguna.
8. Biber, D. 2006. *University Language: A Corpus-Based Study of Spoken and Written Registers* [Studies in Corpus Linguistics 23]. Amsterdam: John Benjamins.
 9. Biber, D. 2009. A corpus-driven approach to formulaic language in English: Multi-word patterns in speech and writing. *International Journal of Corpus Linguistics*, 14(3), 275–311.
 10. Biber, D., & Barbieri, F. 2007. Lexical bundles in university spoken and written registers. *English for Specific Purposes*, 26, 263–286.
 11. Biber, D., Conrad, S., & Cortes, V. 2003. Lexical bundles in speech and writing: an initial taxonomy. In A. Wilson, P. Rayson, & T. McEnery (Eds.), *Corpus linguistics by the lune: A festschrift for Geoffrey Leech*. 71–92. Frankfurt/Main: Peter Lang.
 12. Biber, D., Conrad, S., & Cortes, V. 2004. If you look at ...: Lexical bundles in university teaching and textbooks. *Applied Linguistics*. 25(3), 371–405. <https://doi.org/10.1093/applin/25.3.371>
 13. Biber, D., Conrad, S. M., Reppen, R., Byrd, P., Helt, M., Clark, V., Cortes, V., Csomay, E., Urzua, A. 2004. Representing Language Use in the University: Analysis of the TOEFL 2000 Spoken and Written Academic Language Corpus.
 14. Biber, D., & Gray, B. 2010. Challenging stereotypes about academic writing: Complexity, elaboration, explicitness. *Journal of English for Academic Purposes*, 9 (1), 2-20.
 15. Biber, D., Johansson, S., Leech, G., Conrad, S., & Finegan, E. 1999. *Longman grammar of spoken and written English*. London: Longman.
 16. Cargill M., & Burgess, S. 2017. *Publishing research in English as an Additional Language. Practices, pathways and potentials*. The University of Adelaide Press.
 17. Chen, Y-H., & Baker, P. 2010. Lexical bundles in L1 and L2 academic writing. *Language Learning & Technology*, 14, #2, 30-49.
 18. Conrad, S., & Biber, D. 2004. The frequency and use of lexical bundles in conversation and academic prose. *Lexicographica*, 20, 56–71. <https://doi.org/10.1515/9783484604674.56>
 19. Cortes, V. 2004. Lexical bundles in published and student disciplinary writing: Examples from history and biology. *English for Specific Purposes* 23, 397-423.
 20. Cortes, V. 2006. Teaching lexical bundles in the disciplines: An example from a writing intensive history class. *Linguistics and Education* 17, 391-406.
 21. Cortes, V. 2008. A comparative analysis of lexical bundles in academic history writing in English and Spanish. *Corpora*, 3(1), 43–57. <https://doi.org/10.3366/e1749503208000063>
 22. Cortes, V. 2013. *The purpose of this study is to*: Connecting lexical bundles and moves in research article introductions. *Journal of English for Academic Purposes* 12, 33-43.
 23. Coxhead, A., & Byrd, P. 2007. Preparing writing teachers to teach the vocabulary and grammar of academic prose. *Journal of Second Language Writing*, 16, 129–147.
 24. Durrant, P. 2009. Investigating the viability of a collocation list for students of English for academic purposes. *English for Specific Purposes*, 28, 157–169. <http://dx.doi.org/10.1016/j.esp.2009.02.002>
 25. Durrant, P., & Schmitt, N. 2009. To what extent do native and non-native writers make use of collocations? *International Review of Applied Linguistics*, 47, 157–177.
 26. Ellis, N. 2002. Reflections on frequency effects in language processing. *Studies in Second Language Acquisition*. 24/2: 297-339.

27. Eriksson, A. 2012 Pedagogical perspectives on bundles: Teaching bundles to doctoral students of biochemistry. In Thomas, J. & Boulton, A. (Eds.). *Input, Process and Product: Developments in Teaching and Language Corpora*, James Thomas & Alex Boulton (eds), 195–211. Brno: Masaryk University Press.
28. Farvardin, M., Afghari, A., Koosha, M. 2012. Analysis of four-word lexical bundles in physics research articles. *Advances in Digital Multimedia (ADMM)*, 1(3), 134–139.
29. Hyland, K. 2008a. *As can be seen*: Lexical bundles and disciplinary variation. *English for Specific Purposes* 27, 4–21.
30. Hyland, K. 2008b. Academic clusters: Text patterning in published and postgraduate writing. *International Journal of Applied Linguistics*, 18(1), 41–62. <https://doi.org/10.1111/j.1473-4192.2008.00178.x>
31. Hyland, K. 2012. Bundles in academic discourse. *Annual Review of Applied Linguistics*, 32(2012), 150–169. <https://doi.org/10.1017/S0267190512000037>
32. Hyland, K. 2016. Academic publishing and the myth of linguistic injustice. *Journal of Second Language Writing*. 31, 58–69.
33. Lillis, T., & Curry, M.J. 2006. Professional academic writing by multilingual scholars. Interaction of literacy brokers in the production of English-medium texts. *Written Communication* 23 (1). 3–35.
34. Moreno, A. I., Rey-Rocha, J., Burgess, S., López Navarro, I., & Sachdev, I. 2012. Spanish researchers' perceived difficulty writing research articles for English-medium journals: The impact of proficiency in English versus publication experience. *Ibérica*, 24, 157–184.
35. Nattinger, J., & DeCarrico, J. (1992). *Lexical phrases and language teaching*. Oxford: Oxford University Press.
36. Nesi, H., & Basturkmen, H. 2006. Lexical bundles and discourse signalling in academic lectures. *International Journal of Corpus Linguistics*, 11(3), 283–304.
37. Oakey, D. 2002. Formulaic Language in English Academic Writing. A corpus-based study of the formal and functional variation of a lexical phrase in different academic disciplines. In R. Reppen, S. M. Fitzmaurice, D. Biber (eds.). *Using Corpora To Explore Linguistic Variation*. (111-130). John Benjamins Publishing Company. Amsterdam/Philadelphia.
38. Pawley, A., & Syder, F. H. 1983. Two puzzles for linguistic theory native like selection and nativelike fluency. In J. C. Richards & R. W. Schmidt (Eds.). *Language and communication* 191–230. London: Longman.
39. Peacock, M. 2012. High-frequency collocations of nouns in research articles across eight disciplines. *Ibérica: Revista de La Asociación Europea de Lenguas Para Fines Específicos (AELFE)*, 23(2012), 29–46.
40. Salazar, D. 2014. *Lexical bundles in native and non-native scientific writing. Applying a corpus-based study to language teaching*. John Benjamins Publishing Company. Amsterdam/Philadelphia.
41. Simpson-Vlach, R., & Ellis, N. C. 2010. An academic formulas list: New methods in phraseology research. *Applied Linguistics*, 31(4), 487–512. <https://doi.org/10.1093/applin/amp058>
42. Sinclair, J. 1991. *Corpus, concordance, collocation*. Oxford: Oxford University Press.
43. Staples, S., Egbert, J., Biber, D., & McClair, A. (2013). Formulaic sequences and EAP writing development: Lexical bundles in the TOEFL iBT writing section. *Journal of English for Academic Purposes*. 214–225. <https://doi.org/10.1016/j.jeap.2013.05.002>
44. Swales, J. M., 1990. *Genre Analysis. English in academic and research settings*. New

- York. Cambridge University Press.
45. Wray, A. 2002. Formulaic language and the lexicon. Cambridge: Cambridge University Press.

**Լեքսիկական փաթեթները հոգեբանության ոլորտի
գիտական հոդվածներում.**

Բալասանյան Դիանա

Լա Լագունայի համալսարան, Տեներիֆե, Իսպանիա

Ամփոփում. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացումը առաջ է բերել լեզվաբանական հետազոտությունների նոր ճյուղ՝ հիմնված տեքստերի հսկայական ծավալների համակարգչային վերլուծության վրա: Արդյունքում հայտնաբերվել են նոր տեսակի դարձվածաբանական կապակցություններ, որոնք սրացել են «Լեքսիկական փաթեթներ» անվանումը: Դրանք երեք, չորս, կամ հինգ բառերից կազմված իմաստաբանորեն անավարտ և թափանցիկ կապակցություններ են, որոնք գործում են իբրև տեքստի կառուցման և կապակցման կարևոր բաղադրիչներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լեքսիկական փաթեթները տվյալ ժանրի և ռեգիստրի տեքստում ամենահաճախ հանդիպող կապակցություններն են, և որ յուրաքանչյուր ժանր, ռեգիստր և գիտական ոլորտ ունի իրեն հատուկ լեքսիկական փաթեթների համակցություն: Փորձառու հեղինակները հաջողությամբ օգտագործում են իրենց ոլորտի լեքսիկական փաթեթները գիտական տեքստերում, մինչդեռ սկսնակ մասնագետների տեքստերը աչքի են ընկնում, ի թիվս այլոց, լեքսիկական փաթեթների ոչ ստանդարտ գործածությամբ:

Տվյալ հետազոտությունը նվիրված է հոգեբանության ոլորտի գիտական հոդվածների լեքսիկական փաթեթների ուսումնասիրությանը: Արդյունքները կարող են օգտակար լինել ոչ միայն լեզվաբաններին, այլև ակադեմիական անգլերեն դասավանդողներին, ինչպես նաև հոգեբանության ոլորտի սկսնակ հետազոտողներին:

Лексические пакеты в научных статьях по психологии

Корпусное исследование

Баласанян Диана

Университет Ла Лагуна, Тенерифе, Испания

Развитие информационных технологий позволило вывести лингвистику как науку на новый уровень, в частности, благодаря возможности

анализировать огромные объёмы текста с помощью специального программного обеспечения. В результате были обнаружены новые фразеологические конструкции, называемые лексическими пакетами. Лексические пакеты – образования из трёх, четырёх или пяти слов, наиболее характерные для данного жанра или регистра. Исследования также показали, что не только каждый жанр и регистр, но и каждая научная дисциплина обладает определённым набором лексических пакетов, которые успешно используются опытными исследователями в письменной академической речи. Нестандартное использование лексических пакетов начинающими часто является одной из характерных черт их академических текстов.

В данной статье рассматриваются лексические пакеты, характерные для научных статей по психологии. Результаты исследования могут быть полезны не только профессиональным филологам, но и преподавателям академического английского языка, а также начинающим исследователям в области психологии.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՎԵՏԱԽՈՒՋՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՀԱՆՅԱՆ Ա.Վ., ՄԽԻԹԱՐՅԱՆ Ի.Ս.

*Երևանի «Հայրուսակ» համալսարան, մանկավարժության և
հոգեբանության ամբիոն*

*Հոգեբանությունն աչքի ընկնող դեր ունի մարտի ժամանակ.
այն թույլ է տալիս նկատել և հասկանալ այնպիսի առանձնա-
հատկություններ, որոնց հետ մենք առնչվում ենք...*

Է. Զախարիս /ամերիկյան հեղափոխություն/

Ամփոփում. Ցանկացած պեղծության համար հեղափոխությունը անվրանգության ապահովման և արդյունավետ կառավարման կարևոր գործիքներից մեկն է: Հեղափոխության հոգեբանական պատրաստվածության ասպարեզում մեծ տեղ է հատկացվում ինքնուրույնաբար գործելու կարողության զարգացմանը: Անձի հուզականային ոլորտը, որպես կանոն, արտակարգ իրավիճակներում ենթակա է տարաբնույթ դեֆորմացիաների. առաջին պլան են մղվում փազնապարհաթափարելու, նյարդային լարվածությունը վերահսկելու, ինքնակարգավորման մեխանիզմները: Ռազմական հեղափոխությունը, բազմակողմանի գիտելիքներ ունենալուց զատ, առաջին հերթին պետք է օժտված լինի հուզական բարձր կայունությամբ: Հոգվածում ներկայացված են ռազմական հեղափոխության մեջ կարևորվող հոգեբանական գործունեության բովանդակային հիմնահարցեր:

Հիմնաբառեր՝ ռազմական հեղափոխություն, տեղեկատվական պատերազմ, ինտերնալություն, նյարդահոգեկան կայունություն, ագրեսիա, իրավիճակային և անձնային փազնապայնություն:

Դեռևս ուրարտական ժամանակաշրջանում (Ք.ա. IX-VII դդ.) հետախուզական գործունեությունը դրված է եղել պետական հիմքերի վրա ու հանդիսացել է պետական գործունեության ուղղություններից մեկը: Հին և Միջնադարյան Հայաստանում անվտանգության հարցերով զբաղվել են ինչպես ամբողջական պետական մարմիններ (նախարարություններ, գործակալություններ), այնպես էլ առանձին պետական պաշտոնյաներ: Ուշադրության կենտրոնում է գտնվել նաև ռազմական և այլ գաղտնիքների պահպանությունը: Կախված գործունեության ոլորտից, ներգրավված ուժերից և միջոցներից, ռազմական հետախուզության տեսակներն են. ցամաքային, օդային, ծովային, տիեզերական, հատուկ, հրետանային, ինժեներական:

Տեղեկատվական պատերազմն իր մոտեցումների մեջ ունի երկու «հենասյուների» վրա հենված սկզբունքայնորեն տարբեր՝ տեղեկատվատեխնիկական և տեղեկատվահոգեբանական (տեղեկատվահումանիտար) մոդելներ: Առաջինի գործիքակազմը կիրճագործողություններն են, իսկ երկրորդինը՝ ներագդմանն ուղղված օպերացիաները: Երկու մոդելների հիմնական նպատակը մարդկանց ուղղորդումն է, բայց տարբեր ձևերով և մեթոդներով: Այսինքն՝ մեր ժամանակներում տեղեկատվական պատերազմները դարձել են օրինաչափ երևույթ: Դրանց նպատակն է ներագդել մարդկության համար կարևորագույն բոլոր ոլորտների վրա: Այդ ոլորտներն են՝ քաղաքական, ռազմական, ֆինանսական, տնտեսական, միջազգային հարաբերություններ և այլն: Օրինակներից են «Փոթորիկ անապատում» գործողության ընթացքում հակառակորդին մոլորության մեջ գցելու նպատակով լայնորեն կիրառվող քողարկման լրակազմերը, այդ թվում սպառազինության և ռազմական տեխնիկայի հիմնական տեսակների և համակարգերի նմանակները: Այս բոլոր դեպքերում մարդու ինքնուրույնությունը թուլանում է, քանի որ նրան դիմակայում են հզորագույն տեղեկատվական «Համակարգեր»՝ ապահովելով դրանց համար բոլոր պահանջվող մեկնաբանությունները: «Տեղեկատվական պատերազմ» նորաճ տերմինով սկսել ենք բնութագրել ներագդման ամենատարբեր օպերացիաներ, որոնք ուղղված են անհատական և զանգվածային մտածողությանը: Լավ կոորդինացված տեղեկատվահոգեբանական գործողությունների հետևանքները կարող են գերազանցել բուն ռազմական գործողությունների արդյունքները: Եթե մարդկությունն անցյալում հենվում էր կրոնի և գաղափարախոսության վրա, ապա այսօր նա տեղեկատվության հետևորդն է, որը նրան ուղղորդում է «Դեպի ճիշտ պահվածք»՝ պատրանք ստեղծելով, որ դա նրա սեփական որոշումն է: Տեղեկատվական աշխատանքները զինված ուժերում կարող են ունենալ ինչպես ինքնուրույն, այնպես էլ օժանդակ նշանակություն: Զուտ տեղեկատվական բնույթ ունեցող որոշակի շրջանակի խնդիրների լուծման համար (հատուկ հետախուզական գործողություն, օպերատիվ քողարկում, հակառակորդի ապատեղեկացում, տեղե-

կատվական պայքար, տեղեկատվական շրջափակում և այլն) այն կարող է ունենալ գլխավոր, այսինքն՝ ինքնուրույն դեր: Բայց հաճախ նրան պարտադրվում է օժանդակ դեր, երբ այն դիտարկվում է որպես տեղեկատվության ապահովում: Հատկապես միավորումների, զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների անձնակազմի ուսուցման և դաստիարակման, զինվորական ղեկավարման համակարգի առումով՝ տեղեկատվական աշխատանքի ամբողջ կառուցվածքը հասկացվում է որպես տեղեկատվական ապահովման համակարգ: Տեղեկատվական-հոգեբանական աշխատանքի էությունը զինծառայողների հոգեբանության և վարքի վրա նպատակաուղղված տեղեկատվական ներգործությունն է, նրանց մեջ բարձր բարոյական ոգի ձևավորելը, անհրաժեշտ հոգեբանական վիճակի պահպանելը, մարտական որակների զարգացնելը՝ երդմանը հավատարիմ լինելու և զինվորական պարտքի դաստիարակման նպատակով:

Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ մարդիկ որքան ինֆորմացիայի մեծ հոսք են ստանում, տվյալ դեպքում՝ պատերազմական իրավիճակի մասին (թշնամու կողմից հարձակումներ, դիվերսիոն փորձեր և այլն), այնքան նրանց մոտ սթրեսի առաջացումն անխուսափելի է դառնում: Եվ դա պատահական չէ. մարդիկ առօրյա կյանքում շատ հաճախ հիմնվում են իրենց կենսափորձի վրա: Սահմանամերձ գոտում ապրող մարդկանց հիշողություններում դեռ թարմ են պատերազմի սարսափելի տեսարանները, որին անձամբ իրենք կամ իրենց հարազատներն են մասնակցել:

Հետախուզական գործունեությունը, այդ թվում արտաքին հետախուզությունը, ազգային անվտանգության մարմինների գործունեությունն է՝ ուղղված արտաքին ու ներքին անվտանգության սպառնալիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալուն և պետության հիմքերն ամրապնդելուն: Տեղեկատվական գործողություններն, ի տարբերություն պարզունակ տեղեկատվական ներազդման գործունեության, ունեն կառուցման բարդ սխեմա, որի մշակումը պահանջում է բազմակողմ և խոր մասնագիտական գիտելիքներ և մոտեցումներ: Մինչդեռ տեղեկատվական ներազդման գործունեության իրականացմանը մասնակցում են նաև տեղեկատվական ոլորտում մասնագիտական գիտելիքներ չունեցող անձինք, օրինակ՝ բլոգերները, սոցիալական խմբերը և այլն: Ցանկացած պետության համար հետախուզությունը անվտանգության ապահովման և արդյունավետ կառավարման կարևոր գործիքներից մեկն է: Ռուս հեղինակներ Վ. Ա. Լիսիչևիչը և Լ. Ա. Շելեպինը ավելացնում են, որ տեղեկատվական պատերազմները «Ռրակապես նոր տիպի պատերազմներ են, որտեղ որպես զենք ծառայում է տեղեկատվությունը, իսկ պայքարն ընթանում է դեպի հասարակական գիտակցության նպատակաուղղված փոփոխումը» [5]: Հետախուզական պատերազմի նպատակն է հավաքել անհրաժեշտ տեղեկություններ՝ պաշտպանելով սեփականը: Ցանկացած հաղթա-

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

նակի գրավականներից է հակառակորդի ռազմավարության ճանաչումը: Հետախուզական գործունեության ամենաբարձր և ամենադժվար տեսակը, որի հաջողություններից կամ ձախողումներից կախված է Ձինված ուժերի և պետության կենսունակությունը, իրականացվում է բոլոր հնարավոր ձևերով և միջոցներով՝ պաշտոնական կամ գաղտնի:

Տարբերում են խաղաղ և պատերազմական պայմաններում կայուն գործող համազգային ռազմական-ռազմավարական հետախուզություն և ռազմաճակատային ռազմական գործողությունների թատերաբեմի ռազմական-ռազմավարական հետախուզություն, որոնք սերտորեն համագործակցում են պատերազմի պայմաններում: Հետախուզական գործունեությունն իրականացվում է արտաքին հետախուզության մարմինների կողմից: Դրանք օրենքով սահմանված կարգով հայթայթում, կուտակում և մշակում են Հայաստանի Հանրապետության կենսական շահերին առնչվող օտարերկրյա պետությունների, կազմակերպությունների և քաղաքացիների գաղտնի պլանների, մտադրությունների, իրական և հնարավոր գործողությունների մասին տեղեկատվությունը ինչպես նաև աջակցում են պետության կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներին [2]:

Հետախուզությանը ներկայացվող հիմնական պահանջներն են.

- 1) նպատակաուղղվածությունը,
- 2) անընդհատությունը,
- 3) ակտիվությունը,
- 4) օպերատիվությունը,
- 5) հավաստիությունը:

Հետախույզների մոտ դժվարությունների հետ բախումը կարող է հանգեցնել նյարդահոգեկան լարվածության, ներանձնային և միջանձնային բախումների, որոնք նրանք ինքնուրույն դժվարանում են լուծել: Հաշվի առնելով զինվորների գործունեության, կենսապայմանների առանձնահատկությունները՝ հրատապ խնդիրներից է նրանց *նյարդահոգեկան կայունության* ուսումնասիրությունը և դրա ապահովումը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել գործունեության արդյունավետությունը, դյուրին դարձնել հարմարման գործընթացը: Ձինված ուժերի մարտունակության կարևոր բաղադրիչներից մեկն է զինվորների և անձնակազմի կայուն բարոյահոգեբանական վիճակը, որը զորքերի բարոյահոգեբանական ապահովման արդյունքն է: Ձինվորական մասնագիտական հատկությունների և բարոյական ոգու կրողն է հետախույզը, ով լուծում է առանձնահատուկ ռազմամասնագիտական խնդիրներ, հրատապ խնդիրներից է նրանց նյարդահոգեկան կայունության ուսումնասիրությունը և դրա ապահովումը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել գործունեության արդյունավետությունը, դյուրին դարձնել հարմարման գործընթացը: Ն.Գ.Բոնդարը հատուկ ուշադրություն է դարձրել իմացական ընդունակու-

թյունների, նյարդահոգեկան կայունության, ագրեսիայի, ենթարկվողության, իրադրային և անձնային տազնապայնության ուսումնասիրություններին: Ն.Գ.Բոնդարը հետազոտելով հոգեբանական պատրաստության բաղադրիչները, եկել է այն եզրակացության, որ գինվորական ծառայությանը հոգեբանական պատրաստությունը ենթադրում է ինտելեկտուալ, բարոյական, շարժառիթային և կամային ոլորտների զարգացման բարձր մակարդակ: Նա հատուկ ուշադրություն է դարձնում իմացական ունակություններին, նյարդահոգեկան կայունությանը, ագրեսիային, իրավիճակային և անձնային տազնապայնությանը [6]:

Տազնապայն առաջանում է այն դեպքերում, երբ չկա (և հնարավոր է չի էլ լինելու) իրական վտանգ մարդու համար, սակայն նա սպասում է դրան, ընդ որում, նա դեռ չի պատկերցնում, թե ինչպես պետք է հաղթահարի այն: Ըստ որոշ հետազոտողների *տազնապայն* իրենից մի քանի հույզերի՝ *վախի, տրիստիայի, ամոթի և մեղքի զգացման համակցություն է*: Յուրաքանչյուր մարդ ունի *տազնապայնության որոշակի մակարդակ*, որն ազդանշանում է կամ նախազգուշացում է մարդուն մոտեցող վտանգի մասին, ակտիվացնում է օրգանիզմի, հոգեկանի ներքին ռեսուրսները մինչև այն ժամանակը, երբ այդ իրադարձությունները տեղի են ունենում: Այն դրդում է մարդուն նպատակաուղղված վարքի, օգնում է հարմարվել նոր պայմաններին: Այս առումով, տազնապայնությունը որպես նորմալ հոգեկան վիճակ, ունի դրական նշանակություն: Մյուս կողմից, տազնապայն զգայությունը բերում է անօգնականության վիճակի, ներգոյնի առաջացման և ակտիվության նվազեցման: Դրանում կայանում է տազնապայնության վիճակի բացասական կողմը: Տազնապայնությունն ունի երկու փոխկապակցված, բայց միևնույն ժամանակ բավական ինքնուրույն ոլորտ՝ օբյեկտիվ, որը դրսևորվում է տարբեր տեսակի ֆիզիոլոգիական հակազդումներում, և սուբյեկտիվ, որը դրսևորվում է անձի ապրումներում: Բարձր տազնապայնության ժամանակ անձը դառնում է խոցելի և անպաշտպան, շրջակա միջավայրը թվում է նրան թշնամական, իսկ ապագան՝ անկանխատեսելի և սպառնալի: Բարձր տազնապայնությունը բերում է կոնֆլիկտային իրավիճակի ընկալման շեմի կտրուկ նվազեցման, կարող է հանգեցնել անձի վարքի շեղումների, ինչպես նաև՝ կարող է դառնալ հոգեմարմնական հիվանդությունների պատճառ: 2. *Սպիլբերգերը տարբերում է տազնապայնության երկու վիճակ՝ տազնապայն և տազնապայնություն* [1]: Տազնապայն անձի հուզական լարվածության հատուկ հոգեկան վիճակ է, որն ի հայտ է գալիս անորոշ, երբեմն չգիտակցված վտանգի կանխատեսման արդյունքում: Անձի սուբյեկտիվ գնահատականից ելնելով կարևոր նշանակություն ունեցող կամ մարդու համար որոշակի սպառնալիք ներկայացնող իրավիճակներն առաջացնում են տազնապայն վիճակ: Սուբյեկտիվորեն, տազնապայն ապրվում է որպես տհաճ հուզական վիճակ՝ տարբեր ուժգնությամբ: Տազնապայն ապրման ինտենսիվությունը համե-

մատական է սպառնալիքի աստիճանին կամ ապրումների պատճառների նշանակալիությանը: Այդ գործոններից կախված է տազնապի վիճակի ապրման տևականությունը: Անձի բարձր տազնապայնությունը մեծացնում է հնարավոր սպառնալի և վտանգավոր իրավիճակների ընկալման շեմը: Տազնապի վիճակն ուղեկցվում է վարքային փոփոխություններով ինչպես նաև մոբիլիզացվում են անձի պաշտպանական մեխանիզմները: Հաճախ անձի մոտ մշակվում են պաշտպանական տիպիկ մեխանիզմներ: Բազմաթիվ հետազոտողներ համարում են, որ տազնապը առաջանում է շատ ավելի վաղը քան կստեղծվի վտանգը իսկ վախը առաջանում է վտանգի դեպքում կամ նրա առաջանալու պահին: Վախի աղբյուր որպես կանոն կարող է համարվել գիտակցված և կոնկրետ բնույթ ունեցող իր (օրինակ՝ չար շուն, առաջիկա քննություն, խիստ ղեկավար և այլն) այն դեպքում, երբ տազնապի աղբյուրը չգիտակցված է և որին չենք կարող տրամաբանական բացատրություն տալ: Տազնապը նաև կարելի է կապել օրգանիզմի ընդհանուր հուզմունքի հետ (մասնավորապես, սիմպաթիկ նյարդային համակարգը) իսկ վախը՝ գործողությունների արգելակման և պարասիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվացմամբ, որը մեծ չափաբաժնի դեպքում կարող է պարալիզացնել մարդուն: Տազնապը կարելի է համարել ապագայից պրոյեկցված իսկ վախի աղբյուրը որպես անցյալի հոգեբանական փորձ: Եվ վերջապես տազնապի աղբյուրը սոցիալապես է պայմանավորված իսկ վախի պատճառը կենսաբանական բնագործերն են: Շատ դեպքերում վախի և անհանգստության միջև նշված բոլոր տարբերությունները չեն բխում փորձարարական մեթոդով, սակայն սահմանվում են նույն հետազոտողների կողմից սահմանումների մակարդակով: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդկանց մեծ մասը (ինչը նշարակում է փորձի մասնակիցների մեծ մասը) շատ տարբեր պատկերացումներ ունեն վախի անհանգստության տարբերությունների մասին (եթե ընդհանրապես պատկերացում ունեն) և կարող են այլ կերպ անվանել նույն զգացումը կամ տարբեր զգացումներ նույն կերպ անվանել: *Տազնապայնությունը մարդու՝ շրջապատող միջավայրից եկող վրանգի աստիճանի սուբյեկտիվ ընկալումն է: Տազնապայնությունն անհատական հոգեբանական հատկություն է, որն արտահայտվում է տարբեր կենսական իրավիճակներում անհանգստություն ապրելու բարձր հակվածությամբ, այդ թվում նաև այնպիսի իրավիճակներում, որոնց օբյեկտիվ բնութագրերը դրան չեն տրամադրում: Տազնապայնության որոշակի մակարդակն անձի ակտիվ գործունեության բնական և պարտադիր առանձնահատկություն է: Յուրաքանչյուր մարդ ունի տազնապայնության իր օպտիմալ կամ ցանկալի մակարդակը. Դա այսպես կոչված օգտակար տազնապայնությունն է: Տարբերակում են անձնային և իրավիճակային տազնապայնություն: Անձնային տազնապայնությունը մեկնաբանվում է որպես կայուն անհատական բնութագիր, որն արտացոլում է սուբյեկտի նախատրամադրվածությունը տազնապին և իրավիճակների*

լայն շրջանակ՝ որպես սպառնացող ընկալելու միտում: Որպես նախատրամադրվածություն՝ անձնային տազնապայնությունն ակտիվանում է որոշակի ազդակների ընկալման դեպքում, որոնք մարդը գնահատում է իր ինքնագնահատականի, ինքնահարգանքի համար վտանգավոր: Իրավիճակային կամ ռեակտիվ տազնապայնությունը, որպես վիճակ բնորոշվում է սուբյեկտիվ ապրվող հույզերով՝ լարվածությամբ, անհանգստությամբ, մտահոգվածությամբ: Այդ վիճակը ծագում է որպես հուզական հակազդում սթրեսային իրավիճակին և կարող է տարբեր լինել ինտենսիվությամբ ու դինամիկությամբ: Շատ բարձր ռեակտիվ տազնապայնությունն առաջացնում է ուշադրության, երբեմն՝ կոորդինացիայի խանգարումներ: Կ. Հորնին գտնում է [8], որ մարդը իր տազնապարհադարձի համար ընտրում է *ռազմավարություն*:

Հետախույզների տազնապայնության մակարդակը միշտ փոփոխական է, քանի որ դա կախված է իրենց գործունեության բնույթից, կատարվող առաջադրանքներից: Մարտական գործողությունների ժամանակ հետախույզի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնք որոշ դեպքերում կարող են նպաստել տազնապայնության մակարդակի բարձրացմանը, իսկ որոշ դեպքերում էլ նվազմանը, և դա կապված է այն բանի հետ, երբ յուրաքանչյուր «ելքի» ժամանակ հետախույզը ապրում է և ֆիզիկական և հոգեբանական լարվածություն: Առաջնահերթ խնդիրը հետախույզի սեփական հույզերի վերահսկումը և կայունության ապահովումն է: Հիմնականում հուզական անկայունություն է դրսևորվում գիշերը, ինչքան էլ հետախույզը հասկանում է, որ գիշերը իր հավատարիմ ընկերն է, որը հնարավորություն է տալիս աննկատ գործել տարածքում, բայց միևնույն է՝ տազնապարհում է, երբ կա վախի զգացողություն, անորոշություն, գերլարվածություն: Դրա համար պետք է ստեղծել հոգեբանական ապահովման ստորաբաժանումներ՝ զինվորականների մարտական ոգին միշտ բարձր պահելու համար, որը այսօր մեր բանակի առաջնահերթ, կարևորագույն խնդիրներից մեկն է:

Հետախույզների մոտ ազդեսիվությունը դիտարկվել է որպես անձնային որակ և կայուն գիծ: Հետախույզության ամբողջ պատմությունը, հատկապես վերջին երկու հարյուրամյակների ընթացքում, վկայում են, որ իսկական հետախույզը, բնավորության ինչպիսի գծեր էլ որ ունենա, աչքի է ընկնում, նախ և առաջ, իր բարձր մտավոր կարողություններով, մասնավորապես, վերլուծական մտքի ունակություններով: Հետախույզությունը հաճախ բնորոշվում է որպես մեծ մտավոր կարողությունների տեր մարդկանց մրցասպարեզ: Հետախույզի ոգին լավագույնս արտահայտվում է նրա հոգեբանական կերտվածքի, հուզական դրսևորման մեջ: Պատերազմների ժամանակ հետախույզի վարքագծում ու բնավորության մեջ գերակա են դառնում այնպիսի հատկանիշներ, որոնք առնչվում են նրա հայրենասիրական ոգուն: Շատ կարևոր է հետախույզի (զինվորի) հոգեկերտվածքի ձևավորման համար իր էթնոսի մշակույթին ծանոթ լինելը, քանի որ ազգի ոգին դրսևորվում է մեր

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

առասպելներում, էպոսում, երաժշտության և սինվոլների մեջ: Հետախույզի դերը մեծ է եղել բանակի կազմավորման և կայացման բոլոր փուլերում: Եվ այսօր էլ օրըստօրե կատարելագործվում է հետախույզների մարտական պատրաստականությունը և վարպետությունը:

Գրականություն

1. Ավանեսյան Հ.Մ., Ստեփանյան Լ.Ս. 'Զինվորի հոգեկան հատկությունների գնահատման և զարգացման մեթոդներ, Երևան, 2007
2. Զամալյան Դ.Վ. 'Ռազմական հոգեբանության հիմունքներ', Երևան, 2008
3. Захариас Э.М. " Секретные миссии", Москва, 1959г.
4. Караян А.Г. "Технологии морально-психологического обеспечения" ,1996г.
5. Караян А.Г. "Психология и война" 2003г.
6. В. Мухин Конфликт у разведчика, Морально-психологическая подготовка войск.2005г.
7. Сыромятников И.В. Организация психологической работы в части в мирное время, 2000г.
8. Хорни К. "Невроз и развитие человека", 1950г.

Psychological Activity in Military Intelligence

Vahanyan A., Mkhitarian I.S.

Yerevan "Haybusak» University, Chair of Pedagogy and Psychology

In the field of psychological training of a scout, a large place is given to the development of the ability to act independently. The emotional sphere of a person, as a rule, is subject to various deformations in emergencies. Self-regulation mechanisms for overcoming anxiety and controlling nervous tension come to the fore. The article presents the substantive issues of psychological activity highlighted in military intelligence.

Психологическая активность в военной разведке

Ваганян А., Мхитарян И. С.

Ереванский университет «Айбусак», кафедра педагогики и психологии

В области психологической подготовки разведчика большое место отводится развитию умения действовать самостоятельно. Эмоциональная сфера человека, как правило, в чрезвычайных ситуациях подвержена различным деформациям. На первый план выходят механизмы саморегуляции для преодоления беспокойства и контроля нервного напряжения. В статье представлены содержательные аспекты психологической деятельности, выделяемой в военной разведке.

**ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ**

ԽՈՒԳԵՅԱՆ Ա.Վ., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.Վ.

*Երևանի «Հայբուսակ» համալսարան,
Մանկավարժության և հոգեբանության ամբիոն*

Ամփոփում. Հողվածում ներկայացվում են ստեղծագործական մտածողության առանձնահատկությունները կրթության դպրոցական տարիքում, ինչպես նաև՝ ՄԽԼՏ տեխնոլոգիայի նկարագիրը, գործիքները և դրա միջոցով աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման մի քանի գործնական մոտեցումներ:

Հիմնաբառեր՝ ստեղծագործական մտածողություն, երևակայություն, Հնարամիտ խնդիրների լուծման տեսության / ՄԽԼՏ՝ Теория Решения Изобретательских Задач -ТРИЗ/ տեխնոլոգիա, գործիքներ, կրթության դպրոցական:

Գիտական և տեխնոլոգիական առաջընթացի այս դարաշրջանում կյանքը դառնում է ավելի բազմազան ու բարդ և դա մարդուց պահանջում է ոչ թե կաղապարված գիտելիքներ, այլ շարժունություն, մտածողության ճկունություն, արագ կողմնորոշում, հարմարում նոր պայմաններին և մեծ ու փոքր խնդիրների լուծմանն ուղղված ստեղծագործական մոտեցումներ: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ գրեթե բոլոր մասնագիտություններում մտավոր աշխատանքի մասնաբաժինն անընդհատ աճում է, ուստի մարդու ստեղծագործական մտածողությունը պետք է դիտվի որպես իր ինտելեկտի կարևոր մաս:

Ստեղծագործական մտածողության մասին իրենց աշխատություններում խոսել են Լ.Ս.Վիգոտսկին, Ա.Ն.Լեոնտևը, Ա.Ռ.Լուրիան, Ս.Լ.Ռուբինշտեյնը [1] և այլք, իսկ ՄԽԼՏ տեխնոլոգիայի միջոցով ստեղծագործական մտածողության խնդիրների շուրջ ուսումնասիրություններ են կատարել Հ.Ս.Ալտշուլլերը, Ա.Գինը, Ս.Գինը: Եթե անցած դարի սկզբներին մի շարք մանկավարժ-մտածողներ ստեղծագործական մտածողությունը վերագրում էին օտված երեխաներին [2], ապա մեր օրերում մտածողության այդ ձևն արդեն հատուկ է բոլորին: Ապացուցվել է, որ ստեղծագործական մտածողությունը կարելի է ուսուցանել. դրա համար կան հատուկ մշակված մեթոդներ և տեխնոլոգիաներ: ՄԽԼՏ տեխնոլոգիան հենց այն է, ինչ կոչված է զարգացնելու երեխայի ստեղծագործական կարողությունները՝ սկսած նախադպրոցական տարիքից:

Ժամանակակից մարդու կրթության մեջ խորհուրդ է տրվում կարողությունները զարգացնել վաղ տարիքից: Ուստի դպրոցում հատուկ ուշադրություն պետք է դարձնել ստեղծագործական մտածողության զարգացմանը: Ուսուցիչների, ծնողների համար այժմ էապես կարևորվում է աճող երեխայի ան-

ձի մեջ զարգացնել մտավոր, հաղորդակցական և ստեղծագործական ունակություններ: Ստեղծագործական մտքի զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում կարևոր տեղ է գրավում: Տարրական դասարաններում մտավոր զարգացման գործընթացում տեղի ունեցող խորը փոփոխությունները վկայում են այն մասին, որ այս փուլում ստեղծագործական զարգացման համար առկա են լայն հնարավորություններ [3]: Ստեղծագործական մտածողությունն անհատականության զարգացման մեջ ստեղծվում է փոփոխություններ ընդունելու պատրաստակամությամբ, բայց, թերևս, մեր օրերում մարդուն ստեղծագործականության է դրդում ժամանակակից աշխարհի՝ սերնդին ներկայացրած պատվերը և պահանջները:

Աշակերտների շրջանում ըստ իրենց գործունեության կարող են լինել ստեղծագործական մտածողության սյուբեկտիվ նորարարություններ: Երեխան կարող է առաջարկել լուծում, որն արդեն հայտնի է, գործնականում օգտագործվել է, բայց նա այդ մասին մտածել է ինքնուրույն, առանց նախնական իմացության [3]: Այսինքն կրտսեր դպրոցականների շրջանում ստեղծագործական մտածողության հաջող ձևավորումը և զարգացումը, երեխայի առջև դրված խնդրի հաջողված լուծումը հնարավոր է ուսուցչի ուղղորդման հիման վրա՝ հաշվի առնելով երեխայի ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները: Երեխայի ստեղծագործական մտածողությունը որոշող հիմնական գործոնը կախված է նրա ունեցած փորձի հարստությունից:

Ուսուցիչը, ով ձգտում է զարգացնել սովորողների ստեղծագործական գործունեությունը, առաջին հերթին պետք է ապահովի դասասենյակում ստեղծագործականության համար բարենպաստ պայմաններ: Նա պետք է նպաստի և խթանի հարցերով, հեռանկարների, գաղափարների տեսքով, միևնույն ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնի խնդիրների և կապերի որոնմանը, առաջադրված այլընտրանքային վարկածներին և դրանց ինքնատիպությանը:

Այսպիսով, կատարված մշակումների արդյունքում մենք կարող ենք առանձնացնել աշակերտների ստեղծագործական կարողությունների հետևյալ բաղադրիչները [4].

- ստեղծագործական մտածողություն,
- ստեղծագործական երևակայություն,
- ստեղծագործական մեթոդների կիրառում ստեղծագործական առաջադրանքների կատարման գործընթացում:

Մտածողության այս որակների զարգացման համար ժամանակակից մանկավարժության մեջ լայնորեն կիրառվում է ՄԽԼՏ տեխնոլոգիան, որը հանրաճանաչ մանկավարժական ուղղություն է, և որի նպատակն է անձի մեջ ձևավորել նորարարական մտածողություն, դաստիարակել ստեղծագործող անհատականություն: ՄԽԼՏ-ն ստեղծվել է անցած դարի 80-ական թվականներին գյուտարար, մանկավարժ Հենրիխ Ալտշուլցերի կողմից [5]: ՄԽԼՏ-ն

տեղծարար տեխնոլոգիա է, որը մեզ սովորեցնում է մտածել այնպես, որ գտնենք, հայտնաբերենք խնդրի լավագույն և արդյունավետ լուծումներ: ՄԽԼՏ-ն նորը ստեղծելու վերահսկելի գործընթաց է, որը համադրում է ճշգրիտ հաշվարկներ, տրամաբանություն, կանխատեսում:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելու մատչելի մեթոդներ են մշակվել ՄԽԼՏ մանկավարժների կողմից, որոնք հետաքրքիր են դարձնում նյութը աշակերտների համար և նրանց մոտ դրական հույզեր են առաջացնում: Այստեղ երեխաներն իրենք են հանդես գալիս որպես ստեղծագործողներ, հետազոտողներ և գյուտարարներ:

Քանի որ դպրոցներում տարրական դասարանների կրթական ծրագիրն իրականացվում է պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ուստի ՄԽԼՏ տեխնոլոգիայի որոշ գործիքներ կարելի ներառել ինտերակտիվ դասեր կազմակերպելու և սովորողների ստեղծագործական երևակայությունը խթանելու համար: Ստորև ներկայացվում են ՀԽԼՏ տեխնոլոգիայի մի քանի գործիքներ [6].

Մտազրոհ

Մտազրոհը հայտնի մեթոդ է, որն օգնում է դուրս բերել սովորողների նախնական գիտելիքները տվյալ երևույթի կամ հասկացության մասին: Գրատախտակի մեջ տեղում գրվում է բառը կամ հասկացությունը, որի շուրջ գրառում ենք սովորողների ասած յուրաքանչյուր միտք. այստեղ սխալ պատասխաններ չկան, պետք է թույլ տանք երեխաներին մտածել, ստեղծագործել և տվյալ երևույթի շուրջ արտահայտել սեփական տեսակետը:

Կախարդական գավազան

Այս գործիքը օգնում է երևակայել և գտնել հետաքրքիր գաղափարներ: Դրա էությունը այն է, որ անհրաժեշտ է պատկերացնել, թե ինչպես ցանկացած առարկա կամ սկսում է ավելանալ, կամ ընդհակառակը՝ նվազել: Երեխային ասում ենք. «Ես մատիտ ունեմ, եկեք պատկերացնենք, որ այն վերածվել է կախարդական գավազանի: Այժմ դու կարող ես մեծացնել կամ փոքրացնել այն ամենը, ինչ ցանկանում ես: Ի՞նչ կցանկանայիր ավելացնել կամ պակասեցնել»:

Պատասխանների օրինակներ.

-Ես ուզում եմ կրճատել ձմեռը և ավելացնել ամառը:

-Ես ուզում եմ ավելացնել հանգստյան օրերը:

Հետո կարող ենք բարդացնել այս խաղը լրացուցիչ հարցերով. «Ինչու՞ ավելացնել կամ պակասեցնել, մեծացնել կամ փոքրացնել: Այնուհետև քննարկել, թե ի՞նչն է լավ ու հարմար այս փոփոխություններում և ի՞նչը՝ վատ:

Լավ-վատ

Կարողանալ գտնել և բացահայտել հակասություններ, քանի որ դա կարևոր

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարողություն է, որովհետև հակասությունների լուծմամբ է, որ սկսվում է նորի ստեղծումը: Դա անելու համար կարող ենք օգտագործել լավ-վատ խաղը: Առաջին մասնակիցը երևակայորեն զանգում է և խոսակցին պատմում ինչ-որ կամ երևույթի լավ լինելը, իսկ հաջորդը շարունակում է բացատրել, թե որ դեպքում դա կարող է վատը լինել, որից հետո նրանք սկսում են քննարկել այդ երևույթի լավ կողմերը: Օրինակ՝ ծնողը, երեխան կամ ուսուցիչը կարող են սկսել. «Դրսում զբոսնելը լավ է, քանի որ կարող ենք գտնել որևէ հետաքրքիր բան»: Երեխան շարունակում է. «Հետաքրքիր մի բան գտնելը վատ է, քանի որ այն փողոցից տուն բերել չի կարելի», հաջորդն ասում է. Եթե ինչ-որ հետաքրքիր բան փողոցից տուն բերել հնարավոր չէ, դա լավ է, որովհետև այդ դեպքում դուք կարող եք գտնել որևէ հետաքրքիր բան տանը, և այլն:

Այո, ոչ

Այս խաղը նախատեսված է դասի խթանման և կշռադատման փուլերում կիրառելու համար: Զարգացնում է տեղին հարցեր կազմելու և դրանք վերարտադրելու ունակություններ:

Դասի սկզբում կարող ենք պահել գաղտնաբառը, որը երեխաները գուշակելու համար պետք է կազմեն հարցեր, որոնց պատասխաններն են՝ այո, կամ ոչ: Օրինակ՝ եթե պահում ենք գիրք բառը, երեխաները պետք է կազմեն հետևյալ հարցերը.

- ուելի՞ք է, այս սենյակում է, ձեռակերտ է, մեզ պիտանի է, կոտրվու՞մ է և այլն:

Կազմել հանելուկներ

Այս գործիքը ևս կարելի է կիրառել դասի խթանման փուլում: Այն օգնում է երեխաներին ստեղծագործական երևակայության և կապակցված խոսքի շնորհիվ կազմել սեփական հանելուկներ: Հանելուկը պետք է սկսել առարկայի 3 հիմնական հանտկանիշների՝ նկարագրումից՝ համեմատման կամ բացառման սկզբունքով, օրինակ՝ արևի մասին հանելուկ կազմելու համար ընտրում ենք արևի ձևը, հետո գույնը, այնուհետև՝ կատարած գործողությունը կամ համը, հոտը.

- կլոր է՝ գնդակի նման, դեղին է՝ կրակի պես, այրում է վառարանի նման:

Նախ... հետո՝ ինչ

Այս խաղը նախատեսված է կանխագուշակման և պատճառահետևանքային կապերի բացահայտման կարողությունների զարգացման համար: Կարող ենք կիրառել կշռադատման փուլում՝ ընկալման ստուգման նպատակով: Խաղը կարող է բարդանալ՝ կախված երեխայի տարիքից: Նախ անվանում ենք նախնական երևույթը, իսկ հաջորդ խաղացողը պետք է շարունակի հաջորդականության շղթան ճիշտ հերթականությամբ, օրինակ՝ նախ աշունը, հետո ի՞նչը, -ձնեռը, հետո ի՞նչը, -գարունը, հետո ի՞նչը, - ամառը: Ըստ տարիքի և թեմայի՝ կարող ենք օգտագործել ավելի պարզ կամ բարդ հասկացություններ:

Ստորև ներկայացնենք դասի պլան՝ ՄԽԼՏ տեխնոլոգիայի գործիքների

կիրառմամբ, որն իրականացվել է մանկավարժական պրակտիկայի շրջանակներում:

Թեման՝ Գոհար Փիլոյան, Կաթիլը [7,3]

Ժամաքանակը՝ 2 դասաժամ

Նպատակը կամ ուսումնառության ակնկալվող արդյունքները՝

ա) Գիտելիքներ

Աշակերտը պետք է իմանա՝

- նոր բառեր և իմաստներ՝ կաշկանդեց, թոթովեց, փարվեց, քչքչաց,
- թռչկոտել, սառցակալել, ագռավ, սառույց, պատճառ, կենդանանալ, բարձրանալ բառերի ուղղագրությունը,
- առանձնացնել բարդ բառեր և արմատներով նոր բառեր կազմելը
- առանձնացնել պարզ, ածանցավոր և բարդ բառերը
- ջրի հատկությունները, բնության մեջ հանդիպող ձևերը:

բ) Կարողություններ և հմտություններ

Աշակերտը պետք է կարողանա՝

- հասկանալով ընթերցել բնագիրը,
- տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել պատմվածքը,
- համեմատել կաթիլի վիճակները,
- ձևակերպել պատմվածքի հիմնական միտքը,
- քննարկել հարցադրման շուրջ,- Ինչ ճամփորդություն կատարեց կաթիլը և ու՞ր վերադարձավ:

Դասի ընթացք՝ Խթանման փուլ.

Մտազրոհի միջոցով բացահայտել աշակերտների մտքում կաթիլ բառի առաջացրած զուգորդումները: Գրատախտակի վրա պատկերել աշակերտների նշած հասկացությունները ներկայացնող գծապատկերը:

Մինչ բնագրի ընթերցումը առաջադրել ՄԽԼՏ հանելուկ՝

Հեղուկ է՝ հյութ չէ, թափանցիկ է՝ ապակի չէ, բուժում է՝ դեղ չէ (կարելի կազմել ցանկացած հանելուկ ջրի մասին):

Իմաստի ընկալման փուլ.

Պարզել, թե աշակերտներն ինչ գիտեին ջրի վիճակների մասին և նրանց նախապատրաստել տեքստը ընթերցելուն:

Կաթիլի մասին բնագրի ընթերցում:

Բնագրային աշխատանք՝ բառային աշխատանք: Բացատրել *կաշկանդել, թոթովել, փարվել* բառերի իմաստները:

Կշռադասարան փուլում աշակերտները պետք է կարողանան

- ձևակերպել պատմվածքի հիմնական միտքը,
- համեմատել և կշռադասել կաթիլի փոփոխությունները,
- իրենց կարծիքը հայտնել այն մասին, թե կաթիլը որտեղից ու՞ր վերադարձավ:

Այս փուլի իրականացման համար կարելի է պատմվածքում նկարագրված

դեպքերը ներկայացնել հաջորդական շղթայով՝ օգտվելով ՍԽԼՏ տեխնոլոգիայի «Նախ, իսկ հետո ինչ» խաղի կիրառումից, աշակերտների մեջ խոսք կառուցելու, զուգորդումներ ստեղծելու և նյութը ավելի հեշտ ու պատկերավոր ընկալելու համար: Նախ ջուրը, իսկ հետո ի՞նչը – կաթիլը, իսկ հետո ի՞նչը – սառույցը, իսկ հետո ի՞նչը – ամպը, իսկ հետո ի՞նչը – անձրևը, իսկ հետո ի՞նչը – կաթիլները:

Տանը հանձնարարել կատարել 2-րդ առաջադրանքը՝ առանձնացնելով պարզ, ածանցավոր և բարդ բառերը և սովորել պատմել պատմվածքը: Պատմվածքը պատմելու համար կարելի է աշակերտներին հանձնարարել օգտվել «Կախարդական գավազան»-ից և դրանով կախարդական գործողություններ կատարել կաթիլի համար:

Այսպիսով, կրթական գործընթացում տարրական դասարանների աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացմանը միտված աշխատանքներն ավելի արդյունավետ կլինեն, եթե կիրառենք ժամանակակից մանկավարժական մոտեցումներ պարունակող մեթոդներ, միջոցներ և տեխնոլոգիաներ՝ նորագույն դասավանդման ձևեր, աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնող համագործակցային դասեր, մտածողությանը, երևակայությանը խթանող հարցադրումներ իրականացնելու միջոցով, քանի որ ստեղծագործականությունը բնորոշ է յուրաքանչյուր անձի: Վերոգրյալի ապացույցն է կազմակերպած և իրականացրած դասը՝ ՍԽԼՏ տեխնոլոգիայի մեթոդների կիրառմամբ, որի ընթացքում աշակերտներն ակտիվորեն մասնակցում էին դասին, հայտնում էին սեփական տեսակետները, թեմայի վերաբերյալ հարցադրումների շուրջ քննարկումներ և կանխատեսումներ էին կատարում, ինչպես նաև ցուցաբերում էին բանավոր խոսքի զարգացման և հարուստ բառապաշարի բարձր ցուցանիշներ:

Գրականության ցանկ

1. С. Л. Рубинштейн, Основы общей психологии, СПб: Питер, 2005. 668 с
2. Л.С. Выготский, Развитие высших психических функций. М.: 2000. 380 с.
3. Հ. Ասատրյան, Տարրական կրթության մանկավարժություն, Երևան, Տիգրան Մեծ, 2017, 200 էջ
4. Чернецкая Н. И. Особенности развития творческого мышления в младшем школьном и подростковом возрасте // Научнометодический электронный журнал «Концепт». – 2012. – №8 (Август). – С. 56–60
5. Г.С. Альтшуллер, И.М. Верткин Как стать гением: Жизненная стратегия творческой личности. Минск: «Беларусь», 1994, <https://trizway.com/info/triz-pedagogy.html>
6. С.И. Гин, Мир фантазии: Методическое пособие для учителей 2-3 классов. М.: «Вита-Пресс», 2002. Source: <https://trizway.com/info/triz-pedagogy.html>
7. Վ.Սարգսյան, Մայրենի 3, Երևան, 2015, 160 էջ
8. А.А. Гин Приемы педагогической техники. М.: «Вита-Пресс», 1999.
9. https://nsportal.ru/nachalnaya-shkola/materialy-mo/2016/03/28/obrazovatel'naya-programma-triz?fbclid=IwAR0eOzIcbUiKEc1gIK8xHN2eCTfq6PS-njL2F5xcwkd_eXM8t0duM3hj2n4

**The Development of Creative Thinking Primary in School by Means
of Modern Technologies**

Khugeyan A., Hovhannisyan G.

Yerevan “Haybusak” University, Chair of Pedagogy and Psychology

The article presents the features of creative thinking in primary school age, as well as the description of TRIZ technology, tools and several practical approaches to the development of pupils' creative thinking.

**Развитие творческого мышления в начальной
школе средствами современных технологий**

Хугеян А., Оганесян Г.

Ереванский университет «Айбусак», кафедра педагогики и психологии

В статье представлены особенности творческого мышления в младшем школьном возрасте, а также описаны инструменты технологии ТРИЗ и несколько практических подходов к развитию творческого мышления школьников.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆԸ

ՍԱՖԱՐՅԱՆ Գ.Հ.

*Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավագիտության ինստիտուտի
Երևանի «Հայբուսակ» համալսարան, իրավաբանական ֆակուլտետ*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ.Ս.

Երևանի «Հայբուսակ» համալսարան, իրավագիտության ասպիրանտ

Ամփոփում. Հանգամանորեն քննարկած են իրավունքի ձևերի (աղբյուրների) հասկացությունը և ընդհանուր բնութագրական հատկանիշները, ինչպես նաև իրավունքի աղբյուրների աստիճանակարգման հետ կապված հարցերը

Բանալի բառեր. Իրավունք, իրավունքի աղբյուրներ, իրավունքի ձևեր, իրավունքի աղբյուրների աստիճանակարգ, իրավական նորմ, իրավագիտություն

«Իրավունքի աղբյուր» հասկացությունը իրավաբանական գրականության մեջ դիտվում է երկու առումով. լայն իմաստով՝ որպես իրավագոյացման պատճառներ ու օրինաչափություններ կամ իրավունքի գենեզիս (ծագումնաբանություն), և նեղ իմաստով՝ որպես իրավունքի նորմերի ամրագրման և գոյության ձև կամ որպես այն աղբյուր, որտեղից իրավաբանը կամ իրավունքի ցանկացած այլ սուբյեկտը քաղում է իրավունքի նորմերը: Գոյություն ունեն իրավունքի աղբյուրի լայն հասկացության երկու տարատեսակ՝ նյութական և գաղափարական: Այս երկրորդ առումը ընդունված է անվանել ձևական – իրավաբանական [1]:

Բացի «իրավունքի աղբյուր» հասկացությունից գիտնականները հաճախակի օգտագործում են «իրավունքի ձև» հասկացությունը: Հեղինակներից ոմանք իրավական նորմատիվ ակտերը, սովորույթները, ավանդույթները և այլն, համարում են իրավունքի ձևեր, մյուսները՝ իրավունքի աղբյուրներ: Միևնույն երևույթների տարբեր անվանումները վկայում են նրանց էությունների արտահայտման բազմազանության մասին: Հարկ է համաձայնվել այն հեղինակների կարծիքի հետ, որոնք հնարավոր են գտնում և՛ այս, և՛ այն հասկացության օգտագործումը՝ նախօրոք պարզաբանելով դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը: Նշված հասկացությունների կապակցությամբ տեսական բանավեճերը դեռևս շարունակվում են [2]:

Իրավունքի աղբյուրների մասին, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլինի խոսել սոցիալական գործոնների առումով, որոնք կանխորոշում են իրավունքի գոյացումը և գործողությունները: Այդպիսիներից են հասարակության կյանքի նյութական, հոգևոր, հոգևոր - մշակութային պայմանները: Իրավունքի աղբյուրների մասին խոսում են նաև իրավունքի ճանաչման առումով: Այդպիսի աղբյուրներ են պատմական հուշարձանները, ազգագրության, հնէաբանության տվյալները և այլն, ինչպես նաև գործող իրավական ակտերը, դատական նախադեպը, իրավաբանական պրակտիկան, դատական պրակտիկան, իրավաբանների գիտական աշխատությունները և այլն:

Ձևական - իրավաբանական իմաստով իրավունքի աղբյուրները՝ այն ավագաններն են, որտեղ պարունակված են իրավական նորմերը, որոնք օգտագործվում են իրավաբանական գործերի լուծման համար: Այդ պատճառով նրանց համար ավելի ճիշտ է օգտագործել «իրավունքի ձև» հասկացությունը:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում պատասխանը այն հարցերին, թե որտեղից է առաջանում իրավունքը և ինչու՞մ է արտահայտվում նրա սոցիալական պայմանավորվածությունը, ինչու՞մ է իրավագիտակցության դերն այդ գործընթացում և ինչից են կախված կամ ինչով են բնորոշվում իրավունքի արտահայտման արտաքին ձևն ու բնույթը:

Իրավունքը, ինչպես և պետությունը, ծագում է կառավարման հասարակության արտադրության բարդացման և կատարելագործման հետ կապված սոցիալական գործընթացների կառավարման, միջանձնային հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունից [3]: Իրավունքը միշտ էլ սոցիալապես պայմանավորված է: Ընդունված է տարբերակել այդպիսի պայմանավորվածության երեք հիմնական ձևեր.

- իրավաբանական ձևը հաղորդվում է արդեն կայացած հասարակական հարաբերություններին, որոնց բովանդակությունը կազմում են կողմերի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, այսինքն իրականորեն ծագած իրավահարաբերությունները, ինչը տեղի է ունենում առաջին հերթին տնտեսական ոլորտում.
- հասարակական զարգացման առաջադիմական միտումների հիման վրա պետությունը կարող է ճանաչել կամ իրավունքի աղբյուրների մեջ ամրագրել դեռ ամբողջովին չձևավորված հարաբերություններ, դրանով իսկ ակտիվորեն նպաստելով նրանց կայացմանը և հասարակական կյանքում հաստատմանը.
- իրավունքի առաջացման անմիջական հիմք է հանդիսանում նաև իրավաբանական պրակտիկան:

Այսպիսով, որպես աղբյուր (բառիս լայն իմաստով) իրավունքն ունի հասարակական հարաբերություններ, որոնց կարգավորման օբյեկտիվ պահանջմունքը ծագում է հասարակական կյանքում և պետք է գիտակցված լինի օրենսդրի կողմից, այսինքն անցնի նրա իրավագիտակցության միջով: Դա

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նշանակում է, որ օրենսդրի մոտ առաջանում են գաղափարներ, հայացքներ, պատկերացումներ, կարծիք է ձևավորվում առ այն, որ սոցիալական կապերի որոշակի համամասնության, հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքի որոշակի տարբերակ պետք է դառնա պարտադիր կանոն, ընդունի համընդհանուր ձև, այսինքն օրենք կամ իրավունքի այլ աղբյուր:

Ըմբռնելով այս պահանջունքը, օրենսդիրը պետության անունից անմիջականորեն ձևավորում է սահմանվող իրավական նորմը կամ էլ ճանաչում է գոյություն ունեցող նորմատիվները, դրանով իսկ տալով դրանց իրավաբանական նորմի որակ:

Օրենսդրի տեսակետը՝ անհրաժեշտության տեսակետն է: Բնորոշելով իրավական նորմի մեջ մարմնավորված անհրաժեշտությունը, հարկ է շեշտել, որ այն կապված է ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ գործոնների հետ: Դրա արտահայտումը պայմանավորված է օրենսդրի համապատասխան կամային ակտերով, նրա գիտելիքներով, վերաբերմունքով, փորձով, հետևաբար նաև իրավագիտակցության՝ որպես իրավական մշակույթի մակարդակով: Համապատասխանաբար իրավունքը դառնում է հասարակական գիտակցության օբյեկտիվացված (արտաքնապես արտահայտված) ձև՝ ընդհանրապես և իրավագիտակցության՝ մասնավորապես, և իրենից ներկայացնում է ռեալ իրականության գործնական գիտակցում, հասարակական կեցության հոգևոր յուրացում: Այսպիսի գնահատականը պետք է ծառայի ընդունման ենթակա իրավական նորմերի կարգավորիչ դերի բացահայտմանը և կանխատեսմանը [4]: Իրավունքը արտահայտում է կոնկրետ մարդկանց, օրինակ պատգամավորների, օրենսդրական կամքը (նրա ուժեղ և թույլ կողմերով), որոնք մշակում են օրենքների նախագծերը, քննարկում և ընդունում են դրանք և իրավունքի այլ աղբյուրները: Իրավունքի աղբյուրների գործողությունը նույնպես պահանջում է հասցեատերերի (իրավունքի սուբյեկտների) կամային վարքաձև, նրանց մտավոր և զգայական-կամային հարաբերությունների ենթարկում իրավական հրահանգավորումներին՝ վարքագծի (գործունեության) մեջ իրագործման ճանապարհով:

Իրավունքը ենթադրում է ոչ միայն օրենսդրության և իրավունքի այլ աղբյուրների մեջ պարունակվող իրավաբանական նորմեր, այլև ֆիզիկական և իրավաբանական անձանց անհատական (սուբյեկտիվ) իրավունքներ, նրանց իրավասություններ: Առաջին դեպքում խոսքը գնում է օբյեկտիվ իմաստով իրավունքի (օբյեկտիվ իրավունքի) մասին, երկրորդ դեպքում՝ սուբյեկտիվ իմաստով իրավունքի (սուբյեկտիվ, անձնական, մասնավոր իրավունքի) մասին: Այս հասկացությունները ընդունված են իրավաբանական գիտության մեջ: Կյանքում ձևավորված և մարդկանց կողմից գիտակցված վարքի կանոնները իրավական նորմերի տեսքով օբյեկտիվանում (մարմնավորվում) են օրենսդրության կամ իրավունքի այլ աղբյուրներում, ինչպես նաև դատական պրակտիկայում և անկախություն են ստանում ցանկացած սուբյեկտից՝

նույնիսկ իշխող խավերից (կլանին, վերնախավին) պատկանող անձանցից, խորհրդարանականներից և այլն:

Հասարակական հարաբերությունների մասնակիցների առկա կամ ռեալ իրավունքները անմիջականորեն պատկանում են յուրաքանչյուր սուբյեկտին (անձին) կամ յուրաքանչյուր կազմակերպությանը, հիմնարկին, ձեռնարկությանը: Նրանք նույնպես հանդիսանում են օրենքի մակարդակի վերահանված պետական կամքի արտահայտություն և իրավունքի նորմերից շատ ավելի ուղիղ կերպով են արտացոլում իրավունքի բնույթը, քանի որ ծառայում են որպես ազատության և, արդարության չափ ու մասշտաբ, այսինքն՝ պետության կողմից ճանաչված և պաշտպանվող հնարավոր վարքաձևի չափանիշներ: Դրան համապատասխան սուբյեկտիվ իրավունքի տակ պետք է հասկանալ.

- իրավունքի սուբյեկտների առկա իրավունքների միասնականությունը,
- նրանց հնարավոր վարքի չափը կամ ազատության մասշտաբը, որը նրանց հնարավորություն է տալիս գործելու իրենց շահերից ելնելով՝ սեփական պահանջմունքները բավարարելու համար,
- այն իրավունքներն ու ազատությունները, որոնք պաշտոնապես ճանաչված են, պահպանվում և պաշտպանվում են պետության կողմից [5]:

Իրավունքի տարաբաժանումը օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքների պայմանավորված է բուն կյանքով: Միշտ պետք է իմանալ, որ իրավունքի մասին է գնում խոսքը՝ որոշակի աղբյուրներում ձևական-իրավաբանական հասկացությամբ պարունակվող իրավական նորմերի, թե՛ հասարակական հարաբերությունների մասնակիցների առկա իրավունքների իմաստով: Այն դեպքում, երբ գործի կամ իրավական տեքստի հանգամանքներից բավականաչափ պարզ է, իրավունքի որ կողմի մասին է խոսքը, «իրավունք» եզրույթը օգտագործվում է առանց «օբյեկտիվ» կամ «սուբյեկտիվ» բառերի: Այլ դեպքերում անհրաժեշտություն է ծագում հստակեցնել, թե որ՝ «օբյեկտիվ», թե «սուբյեկտիվ» իրավունքի հետ գործ ունենք: Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի տարանջատումը ունի ճանաչողական և գործնական նշանակություն: Մի կողմից բացահայտվում է օբյեկտիվ իրավունքի հարաբերական անկախությունը մարդուց, քանի որ մարդիկ ուղղակիորեն կամ անուղղակի մասնակցում են օրինաստեղծության գործին, մյուս կողմից սուբյեկտիվ իրավունքի հարաբերական անկախությունը նրանից, ում այն պատկանում է, քանի որ ցանկացած պետության մեջ իրենց իրավունքներով կարելի է օգտվել ոչ անսահմանափակ ձևով, այլ այնպես, որ դա չվնասի մարդկանց, հասարակությանը և պետությանը: Չի կարելի հաշվի չառնել և այն, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի միջև գոյություն ունեն սերտ կապ, օրգանական կախվածություն և փոխգործություն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է խոսել միասնական իրավունքի երկու՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի մասին, որոնց փոխգործությունից դուրս չի կարող գոյություն ունենալ և կենսագործվել օրենսդրական կամքը:

Վերը տրված է իրավագոյացման գործընթացի ընդհանուր բնութագրումը:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դրա հիման վրա ամեն մի իրավական ընտանիքում և մանավանդ իրավական համակարգում արտահայտվում են այս գործընթացի բազմաթիվ առանձնահատկությունները, որոնք վերջնական հաշվով որոշում են ինչպես իրավաստեղծման սուբյեկտների առանձնահատկությունները, այնպես էլ, առավել չափով, իրավունքի նորմերի ամրագրման և գոյության եղանակները:

Ելնելով իրավունքի նորմերի ամրագրման և գոյության եղանակներից, առանձնացվում են իրավունքների աղբյուրների հետևյալ տեսակներ.

- իրավական սովորույթ,
- դատական նախադեպ,
- նորմատիվ - իրավական ակտ,
- նորմատիվ պայմանագիր,
- իրավունքի ընդհանուր սկզբունքներ,
- իրավական դոկտրին,
- կրոնական աղբյուրներ (Աստվածաշունչ, Ղուրան և այլն):

Վերջապես, նշենք, որ իրավունքի աղբյուրները իրավունքի համակարգի անբաժան և կարևորագույն բաղադրիչներն են:

Գրականություն

1. Марченко М.Н. Источники права. М. 2005, с. 3-4
2. Источники российского права. Вопросы теории и истории. Норма, М. 2011, с. 8-11
3. Четвернин В.А. Проблемы теории права для особо одаренных студентов. М, 2010, с. 22-23
4. Тихоморов Ю.А. Право: прогнозы и риски. Монография. М, 2015, с. 89-90
5. Васев И.Н. Субъективное право, как общетеоретическая категория. М, 2012

Понятие источников права и общая характеристика

Сафарян Г. Г., Арутюнян Л. С.

Ереванский университет «Айбусак», Юридический факультет

В статье обстоятельно рассматриваются понятия и общие характеристики источников права, а также вопросы иерархии источников права

The concept of Sources of Law and General Characteristics

Safaryan G., Harutyunyan L.

Yerevan «Haybusak» University, Faculty of Law

In this article, the authors discuss in detail the concept of forms (sources) of law, general characteristics, as well as issues related to the grading of sources of law.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ 1863 ԹՎԱԿԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

ՍԱՖԱՐՅԱՆ Գ.Հ.

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

*ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավագիտության ինստիտուտ
Երևանի «Հայրուսակ» համալսարան, իրավաբանական ֆակուլտետ*

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Դ.

Երևանի «Հայրուսակ» համալսարան, իրավագիտության ասպիրանտ

Ամփոփում Քննարկված են Արևմտահայերի 1863 թվականի Ազգային Սահմանադրության իրավաքաղաքական գաղափարների համահունչ լինելը XIX դարի առաջադեմ մտածողների գաղափարներին: Յուր է տրված Ազգային Սահմանադրության հայեցակարգի հիմքում ընկած ժողովրդավարության, սուվերենության, ազգի ինքնորոշման, մարդու իրավունքների, այդ համատեքստում կանանց իրավունքների գաղափարները: Բացահայտված է Սահմանադրության բովանդակությունը որպես կարևոր իրավաբանական փաստաթուղթ արևմտահայերի կյանքը կարգավորելու գործում:

Առանցքային բառեր Ազգային Սահմանադրություն, բնական և պոզիտիվ իրավունք, ժողովրդավարություն, ազգ, սուվերենություն, ինքնորոշում:

Արևմտահայերի 1863 թվականի Ազգային Սահմանադրությունը նշանակալի դեր ունի հայ սահմանադրագիտության զարգացման գործում, ուստի արդիական է ցանկացած քննարկում այդ կարևոր իրավական և քաղաքական փաստաթղթի շուրջ, հատկապես, գաղափարական հենքի առումով:

Արևմտահայերի 1863 թվականի Ազգային Սահմանադրության հեղինակների իրավաքաղաքական հայացքները ձևավորվել էին XIX դարի առաջադիմական գաղափարների հիման վրա: Նրանց հայացքների հիմքում ընկած էր բնական իրավունքի տեսությունը: Աշխարհայացքային այդպիսի հիմքի ընտրությունը պատահական չէր և չի կարող բացատրվել սոսկ մոդայիկ ուսմունքին հետևելու ցանկությամբ: Բնական իրավունքի տեսությունը քաղաքական մտքի ծագման հենց սկզբից անցնում է մարդկության և հատկապես Եվրոպայի մտավոր զարգացման միջով: Առանձնապես այն տարածված էր XVII-XVIII դարերում, որն էլ իրավացիորեն անվանում են բնական իրավունքի դարաշրջան [1]:

Բնական իրավունքի գաղափարն ի սկզբանե առաջ է քաշվել որպես պետության կողմից ստեղծած դրական /պոզիտիվ/ իրավունքի հակոտնյան, ընդ որում՝ բնական իրավունքը ինքնիստինքյան չի կարող կատարել այն գործառույթները, որոնք բնորոշ են դրական իրավունքին՝ կարգավորել հասարակական հարաբերությունները և հանդես գալ իբրև մարդկանց վարքագծի

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

իրավաբանական իրավաչափության կամ անիրավաչափության գնահատման անմիջական չափանիշ:

Համաձայն այս տեսության, դրական իրավունքը լինելով իշխողների կամքի արտահայտություն, երկրորդական, ածանցյալ, արհեստական և իր որակներով բացասական բնույթ ունի: Այն միշտ առավելապես արտահայտում է հասարակության առանձին մասերի շահերը և հաճախ շեղվում է հասարակության անդամների պատշաճ վարքագծի վերաբերյալ իդեալական պատկերացումներից, հակադրվում է դրանց, խոչընդոտում է հասարակության առաջադիմական զարգացմանը: Սակայն այդպիսի քննադատությունը չի կարող հանգեցնել դրական իրավունքի կործանմանը և դրա փոխարինումը մեկ այլ բանով: Հասարակությունն ավելի կատարյալ կարգավորիչ չի կարողացել ստեղծել, քան դրական իրավունքն է: Նրա փոխարինման անհնարինությունն էլ պայմանավորում է դրական իրավունքի կողքին նաև բնական իրավունքի վերաբերյալ հայացքների ձևավորումը: Համաձայն որի բնական իրավունքը իրենից ներկայացնում է սկզբունքների համակցություն, որը ստեղծվել է անմիջականորեն բնության կողմից, առանց մարդկանց մասնակցության, պայմանավորված է հասարակության կենսագործունեության օբյեկտիվ պայմաններով, իրերի բնական ընթացքով և այլն: Մարդիկ, հասարակությունը ապրում են բնության մեջ, բնական պայմաններում, որոնք կախված չլինենով մարդկանց կամքից, ընդհակառակը, իրենք են մարդկանց վարքագծին օբյեկտիվ օրինաչափություններ պարտադրում, որոշում են նրանց միջև ձևավորված հարաբերությունների հիմքերը, դրանց մեջ առանձնացնելով կարևորագույն նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպես մարդկանց ազատության չափը, արդարությունը, սեփականությունը, իր ճակատագիրը որոշելու ժողովրդի իրավունքը և այլն:

Բնական իրավունքը փիլիսոփայական և քաղաքական մտքի պատմության մեջ ձևավորել է մի գաղափար, ըստ որի, անհրաժեշտ է հասարակությունը կազմակերպել առողջ բնականության և գիտության պահանջներին համապատասխան, կապելով դրական իրավունքը մարդկային կեցության բնական հիմքերի հետ: Բնական իրավունքը մի կողմից քննադատում է դրական իրավունքին, մյուս կողմից՝ ձևավորում է որոշակի իդեալական սկզբունքներ և պատկերացումներ, համամարդկային արժեքներ, որոնք ձգտում է մարմնավորել դրական իրավունքի /օրենսդրության/ մեջ: Այդպես եղավ բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանում, այդպես է նաև մեր օրերում, երբ ետխորհրդային հասարակություններն ու պետությունները փորձ են անում ձևավորվել բնաիրավական տեսությունների հիման վրա: Սրանումն է բնական իրավունքի կարևոր մեթոդաբանական դերը:

Արևմտահայերի 1863 թվականի Ազգային Սահմանադրության հեղինակները ձգտում էին օգտագործել բնաիրավական գաղափարները ավանդական հասարակությունից լիբերալ քաղաքակրթության անցնելու համար: Ընդ

որում, հասարակության ժողովրդավարական վերափոխման գործում նրանք ելնում էին ոչ միայն լուսավորության դարաշրջանում արտահայտված գաղափարներից, այլև այն բանից, թե ինչպես էին դրանք մարմնավորվել առաջավոր երկրների պետական շինարարության մեջ: Նրանց համար անմիջական ուսումնասիրման օբյեկտներ էին ամերիկյան ժողովրդավարական պետականության կազմավորումը և հատկապես Ֆրանսիական հեղափոխության հետևանքով ձևավորված սահմանադրական իրավական սկզբունքները: Այդ գաղափարներով են տոգորված Սահմանադրության բոլոր գլուխները, սակայն իրենց խտացված արտահայտությունը դրանք գտել են Սահմանադրության «Հիմնական սկզբունքներում»:

Եվրոպայում ձևավորված քաղաքական ռեժիմները հիմնվում էին ժողովրդի սուվերենության հայեցակարգի վրա: Ժողովրդի սուվերենությունը նշանակում է ժողովրդի իշխանություն, որի ժամանակ իշխանության աղբյուրը և կրողը հանդիսանում է ժողովուրդը, որը մասնակցում է պետական իշխանության իրականացմանը: Պետության և ժողովրդի սուվերենության հարաբերակցության մեջ ժողովրդի սուվերենությունը առաջնային է: Ժողովրդի սուվերեն կամքը պարտադիր է բոլոր պետական մարմինների, պաշտոնատար անձանց, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների համար:

Ազգային Սահմանադրության հայեցակարգի հիմքում նույնպես ընկած է ժողովրդավարության գաղափարը: Այդ փաստաթղթի հեղինակները հետևում էին ժողովրդավարության վերաբերյալ Եվրոպայում ձևավորված դասական պատկերացումներին: Այս հարցում մեծ էր նրանց վրա ժան ժակ Ռուսոյի տեսության ազդեցությունը, որը բնական իրավունքի նշանավոր տեսաբաններից է: Ռուսոն պնդում էր. քանի որ մարդիկ ծնվում են ազատ և որևէ մեկը իշխանություն չունի մյուսի վրա, ապա օրինական իշխանության հաստատման համար մի միջոց գոյություն ունի՝ հասարակական պայմանագիրը: Պայմանագրի հետևանքով յուրաքանչյուրը մյուսների հետ համատեղ ենթարկում է իր անձը ընդհանուր կամքի ղեկավարությանը, մնալով ամբողջի անբաժանելի մասը: Պայմանագրի կնքած այդ անձանց համակցությունը կազմում է ժողովուրդը: Օտարելով իր իրավունքները հօգուտ պետության, մարդը բնական ազատության փոխարեն ստանում է քաղաքական ազատություն, որը նշանակում է, որ բոլորը հավասարություն են ձեռք բերում օրենքի առջև: Ժողովուրդը հանդես է գալիս իբրև սուվերենության կրող: Ժ.ժ.Ռուսոյի կարծիքով, սուվերենությունը դա բացարձակ, անկախ և անօտարելի իշխանությունն է, որին ուղղություն է տրվում ընդհանուր կամքի միջոցով: Սուվերենը ժողովուրդն է, ուստի պետության համար միակ ընդունելի ձևը դեմոկրատիան է: Ռուսոյի տեսությունը ներթափանցված է հեղափոխական ոգով: Քանի որ պետությունը ծագում է պայմանագրի ուժով, ապա կառավարության կողմից իշխանության բռնազավթման դեպ-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

քում մարդիկ իրավունք ունեն խզել պայմանագիրը և ստեղծել այնպիսի ժողովրդավարական կարգ, որը կհամապատասխանի հասարակական պայմանագրի պահանջներին և որի ժամանակ մարդիկ կպահպանեն իրենց ազատությունները:

Հասարակական պայմանագրի վերաբերյալ այս գաղափարներն իրենց մարմնավորումն են գտել Արևմտահայերի 1863 թվականի Ազգային Սահմանադրության Հիմնական սկզբունքների «Ա» կետում. «Ազգին ամէն մէկ անհատը առ Ազգը պարտաւորութիւններ ունի, Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամէն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի, դարձեալ ամէն մէկ անհատ իրաւունքներ ունի ազգէն եւ ազգն անհատներ էն: Ուստի Ազգն ու ազգայինք փոխադարձ պարտէօք կապուած են իրարու հետ, անանկ որ մէկին պարտաւորութիւնքը միւսին իրաւունքն են» [2]:

Սահմանադրության հեղինակները «ժողովուրդ» տերմինի փոխարեն օգտագործում են «ազգ» տերմինը: Այն համարժեք է «ժողովուրդ» հասկացությանը, միաժամանակ օժտված է իմաստային ավելի մեծ ծանրաբեռնվածությամբ, նկատի ունենալով հայ էթնիկական տարրի ամբողջությունը:

Բնաիրավական տեսությունից բխում է, որ սուվերեն իրավունքները արժատավորված են ազգի բուն էության մեջ, բնորոշ են նրան, սակայն բացահայտվում և իրականացվում են միայն որոշակի սոցիալական պայմաններում: Սուվերենությունը բնորոշ է ազգերին՝ ինչպես ազատ և լիիշխան, այնպես էլ՝ ճնշված: Ինքնստիճյան վերցրած ժողովրդի ճնշված լինելու հանգամանքը չի վկայում նրա մոտ ազգային սուվերենության բացակայության մասին: Մի ազգը կարող է ճնշել մյուսներին, սակայն չի կարող նրան զրկել ազգային սուվերենությունից, որը հանդիսանում է նրա քաղաքական, մշակութային, լեզվային և այլ ինքնուրույնության պոտենցիալ հնարավորություն: Եթե ազգը գոյություն ունի իբր իրողություն, ապա նա չի կարող օժտված չլինել դրանք կենսագործելու որոշակի իրավունքներով ու ձգտումներով: Ազգային սուվերենությունը ազգի արտաքին, ձեռքբերովի հատկանիշը չէ, այլ ներքնապես նրան բնորոշ հատկություն:

Եվրոպական պետություններում ազգային սուվերենությունն արտահայտվեց սուվերեն պետությունների ձևավորմամբ: Իսկ Արևմտյան Հայաստանում դրա իրականացման միակ հնարավոր ձևը ազգային - մշակութային ինքնավարությունն էր:

Միաժամանակ ազգը դիտվում է իբրև իրավաբանական անձ, որը տարբերվում է այն կազմող անհատներից: Այստեղից բխում է, որ ազգի սուվերեն կամքը չի կարող ի հայտ բերվել որպես անհատական կամքերի պարզ գումար, իբրև ողջ ազգի ընդհանուր կամք: Այդ տեսության համաձայն ազգն արտահայտում է իր կամքը ներկայացուցիչների միջոցով, ընդ որում, այդ ներկայացուցիչներին ընտրելը քաղաքացիների իրավունքը չէ, այլ ամբողջության մեջ վերցրած ազգի իրավունքն է: Ոչ ոք չի կարող ձայնի իրավունք

պահանջել այն բանի ուժով, որ ինքը ժողովրդի մասն է, միայն ազգը կարող է որոշել, թե իր քաղաքացիներից ով է ավելի արժանի և պիտանի իր ներկայացուցիչներին ընտրելու համար: Այդպիսի իրավաբանական կառուցվածքը հնարավորություն էր տալիս սահմանափակելու բնակչության ընտրական իրավունքը տարբեր ցենզերի միջոցով:

XVII-XIX դարերում ձևավորված պետություններում ժողովրդավարությունը մեկնաբանվում էր իբրև մեծամասնության կամքով որոշումների ընդունում: Քաղաքացիների ձայները դիտվում էին իբրև հավասար: Որոշումներ ընդունելու ժամանակ կարևոր նշանակություն ուներ նրանց ձայների քանակը: Այդ գաղափարն ամրապնդված է Սահմանադրության հիմնական սկզբունքների «Զ» կետում. «Երեսփոխանական Վարչութեան ... ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ»:

Ժ.Ժ. Ռուսոն կողմ էր անմիջական ժողովրդի իշխանությանը, և գտնում էր, որ սուվերենությունը չի կարող փոխանցվել մասնավոր անձի: Այն միշտ պատկանում է ժողովրդին և չի կարող ներկայացվել այլ պետական մարմնի կողմից: Չնայած անմիջական ժողովրդավարության վերաբերյալ այս հայացքների արտաքին գրավչությանը, պրակտիկայում այն կիրառել անհնարին էր ինչպես Ռուսոյի ժամանակ, այնպես էլ այժմ:

Պետության պրակտիկ շինարարության տեսանկյունից ավելի իրատեսական էին Շ. Լ. Մոնտեսքյոյի հայացքները: Նա առաջ էր քաշել ներկայացուցչական կառավարման գաղափարը և գտնում էր, որ օրենսդիր իշխանությունը ազատ պետության մեջ պետք է պատկանի ամբողջ ժողովրդին, քանի որ իրեն ազատ համարող ամեն մարդ պետք է ինքը կառավարի իրեն: Բայց, քանի որ մեծ պետություններում դա անհնար է, իսկ փոքր պետություններում կապված է մեծ անհարմարությունների հետ, ապա ժողովուրդն իր ներկայացուցիչների միջոցով պետք է անի այն, ինչը չի կարող անձամբ անել:

Այսպիսով, ազգային սուվերենության գաղափարի հետ կապվում է ներկայացուցչության գաղափարը: Սահմանադրության միջոցով ազգը որպես իշխանության սկզբնական և միակ աղբյուր հանձնում է այդ իշխանության իրականացումը տարբեր անհատների կամ հիմնարկների, որոնք այնուհետև դառնում են ազգի անունից իշխանություն կրողներ և իրականացնողներ: Սակայն սուվերենությունը որպես ազգին ներհատուկ հատկություն չի փոխանցվում իր կողմից ձևավորված ազգային ինքնավարության մարմիններին:

Ներկայացուցչական կառավարման գաղափարն ամրապնդված է Սահմանադրության Հիմնական սկզբունքների «Գ» կետում. «Զազգը փոխանորդաբար ներկայացնող, եւ այս փոխադարձ պարտեաց կանոնաւոր կատարմանը տեսուչ ու մատակարար կարգեալ իշխանութիւնը ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ կը կոչուի, որում յանձնուծ է Հայոց ներքին գործերու տնօրէնութիւնը» [3]:

Բնաիրավական տեսության կարևոր բաղկացուցիչներից է մարդու իրավունքների հայեցակարգը: Մարդու բնական և անօտարելի իրավունքների

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

վերաբերյալ հայացքները զարգացվել են Հուգո Գրոցիուսի, Ժ.ժ.Ռուսոյի, Զ.Լոկի, Շ.Լ.Մոնտեսքյոի աշխատություններում, որոնք իրենց պրակտիկ մարմնավորումը ստացան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունների ժամանակ: Դրանք ամրապնդվեցին Եվրոպական երկրների օրենսդրության մեջ և հատկապես Ֆրանսիական 1789 թվականի «Մարդու և Քաղաքացու իրավունքների հռչակագրում»: Վերջինս ամրապնդում էր, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և իրավունքներով հավասար: Ցանկացած քաղաքական միության նպատակն է ապահովել մարդու բնական և անօտարելի իրավունքները՝ ազատությունը, սեփականությունը, անվտանգությունը, ճնշմանը դիմադրություն ցույց տալը: Հռչակագիրն ամրապնդում է անմեղության կանխավարկածը, խղճի ազատությունը, կարծիքների ազատ արտահայտումը, մամուլի ազատությունը, քաղաքացիների անձնական և այլ իրավունքների երաշխիքները: Այդ ժամանակվանից սկսած մարդու իրավունքները դարձան հասարակության զարգացման գլխավոր կողմնորոշիչներից մեկը:

Մարդու բնական իրավունքները հանդիսանում էին իբրև պետության իշխանության սահմանափակիչներ և հիմք էին հանդիսանում պետության և անձի միջև փոխհարաբերությունների հաստատմանը: Մարդու իրավունքների հարցում դասական լիբերալիզմին բնորոշ է անհատապաշտական մոտեցումը, որի համաձայն՝ անձը առաջնայնություն ունի պետության և հասարակության նկատմամբ: Հասարակությունն իր բնույթով ատոմիստական է, այն կազմող յուրաքանչյուր անձ անկախ և ինքնուրույն է ուրիշներից, իրավաբանորեն հավասար է այլ անձանց: Ահա այդպիսի ինքնավար անհատը հակադրվում է հասարակությանը, պետությանը և ցանկացած այլ անձի: Անձը հասարակության մեջ ազատ ընտրության հնարավորություն ունի և իրականացնում է իր ձգտումներն ու շահերը հասարակությունից ու պետությունից անկախ և հակառակ այլ անձանց շահերի: Հասարակությունը պարտավոր է պետության և այլ սոցիալական ինստիտուտների միջոցով բարենպաստ պայմաններ ստեղծել առանձին մարդու ազատության համար, սակայն իրավունք չունի խախտելու նրա ինքնուրույնության սահմանները: Այդ անհատապաշտության հետևանքը հասարակության ծայրահեղ բևեռացումն է և հավասարության սկզբունքի խախտումը: Այդ սկզբունքից բխում է, որ մարդը հասարակության առջև ոչ մի պարտականություն չունի, քանի որ դա ունեւձգում է նրա ինքնավարության դեմ:

Սահմանադրության հեղինակները ելել են նույն անհատապաշտական մոդելից: Սահմանադրության «Հիմնական սկզբունքներում» խոսելով ազգի և անհատի փոխհարաբերությունների մասին, նրանք անհատ ասելով նկատի ունեին նույն ինքնավար, եսասեր սուբյեկտին, որոնց համակցությունը կազմում է ազգը: Անհատներն իրար հետ իրավահավասար են, չնայած «Հիմնական սկզբունքներում» չի օգտագործված հավասարություն բառը: Սակայն ազգային պետության բացակայության պայմաններում այդպիսի ծայրահեղ ան-

հատապաշտության հոչակումը կպայթեցնեն ազգային ինքնավարության կառույցը: Անհասկանալի էր, թե ինչը պետք է ստիպեր անձին ենթարկվել ազգային ինքնավարության մարմիններին: Այդ պատճառով էլ Սահմանադրության հեղինակները հրաժարվել են ծայրահեղ անհատապաշտությունից, փորձել են կոմպրոմիս գտնել ազգի և անհատի փոխհարաբերություններում: Այդ կոմպրոմիսն արտահայտված է «Հիմնական սկզբունքների» «Ա» կետի այն դրույթում, որ ազգը և ազգի անդամները փոխադարձ պարտականություններով կապված են իրար հետ:

Սահմանադրության «Հիմնական սկզբունքների» «Բ» կետում ավելի հստակեցվում է ազգի առջև անհատի պարտականությունը. «Ազգայնոց պարտականությունն է՝ ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իրաքանչիւր իր կարողութեան չափովը, ազգին խնդրած ծառայութեանցը յօժարական յանձնառու ըլլալ, եւ անոր ըրած տնօրէնութեանցը սիրով հնազանդիլ: Ազգայնոց այս պարտաւորութիւնքը ազգին իրաւունքն էն»:

Սահմանադրությունը չի հոչակում ներկայիս ըմբռնմամբ մարդու հիմնական իրավունքների դասական ցանկը: Նրանում բացակայում են մարդու անձնական իրավունքները, քաղաքական իրավունքներից նշված է միայն ընտրելու և ընտրվելու իրավունքը: Սահմանադրության հեղինակները նկատի են ունեցել այն հանգամանքը, որ այդ իրավունքները այս կամ այն չափով կարգավորված էին այլ փաստաթղթերում: Այդ պատճառով էլ նրանց հիմնական ուշադրությունը կենտրոնացված է սոցիալ-մշակութային իրավունքների վրա: Բացի այդ, կանոնադրության հիմքում ընկած է մարդու իրավունքների այնպիսի հայեցակարգ, ըստ որի, առաջնայինն ազգի իրավունքն է, որը հանդիսանում է որպես հավաքական իրավունք, իսկ մարդու իրավունքը աճանցյալ է, կենսականը ազգի իրավունքն էր: Այդ է պատճառը, որ սահմանադրական ամբողջ կառույցը հիմնվում է «ազգ» կատեգորիայի վրա: Այսպես. Ազգային սահմանադրության Հիմնական սկզբունքների «Գ» կետում ասված է. «Ազգին պարտականությունն է՝ ազգայնոց բարոյական, մտաւորական եւ նիւթական պիտոյիցը հոգ տանիլ, Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը անարատ պահել, մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտլեաց ուսումը՝ ամէն աստիճանի թէ մանչ եւ թէ՛ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնքը պայծառ պահել, հասոյթներն օրինաւոր կերպով աւելցնել, եւ ծախքերն իմաստութեամբ տնտեսել, ազգին ծառայութեանը մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը բարւոքել եւ ապագան անդորրել, կարօտելոց խնամք տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վեճերն արդարասիրութեամբ խաղաղել, եւ վերջապէս ազգային յառաջդիմութեան անձնանուէր աշխատիլ:

Ազգին այս պարտաւորութիւնքը ազգայնոց իրաւունքն էն» [4]:

Սահմանադրության հիմնադիրների կարծիքով Ազգային վարչությունը, եթե հասարակության անդամների շահերն է արտահայտում, ապա հա-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

սարակության հանդեպ պետք է ունենա պարտավորություններ: Այդ միտքը «Հիմնական սկզբունքներում» ձևակերպված է հետևյալ կերպ. «Երեսփոխանական Վարչութեան հիմը՝ Իրաւանց ու Պարտեաց սկզբունքն է, որ արդարութեան սկզբունք է»:

Սահմանադրության հեղինակները [3] ուշադրություն են դարձրել նաև կնոջ ազատության ու հասարակական կյանքում նրա տեղի և դերի ըմբռնման խնդրին⁴: Լուսավորականության հիմքի վրա նրանք առաջ էին քաշում կնոջ ազատությունները ընդլայնելու, կրթելու ու դաստիարակելու պահանջներ:

Դրա վկայությունն է Սահմանադրության «Հիմնական սկզբունքներում» ամրագրված կնոջ կրթության իրավունքը [5]:

Գրականություն

1. Ալաօյաճյան Ա.Ա., Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը, «Ընդարձակ օրացույց Ս.Փրկչեան հիանդանոց», Կ.Պոլիս, 1910:
2. Գաբրիելյան Հ.Հ., Հայ փիլիսոփայության մտքի պատմություն, հատ. 3, Երևան, 1957:
3. Խաչատրյան Հ., Սաֆարյան Գ., Արևմտահայերի «Ազգային սահմանադրությունը» և նրա պատմական նշանակությունը, «Հայաստանի պետության և իրավունքի տեսության և պատմության հիմնահարցեր», Երևան, 1998:
4. Վարդանյան Հ.Գ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Երևան, 1967:
5. Ազգային Սահմանադրություն Հայոց, Կ.Պոլիս, 1860:

Правовые и политические идеи национальной конституции западных армян 1863 года

Сафарян Г., Григорян А. Д.

Ереванский Университет “Айбусак”, юридический факультет

Правовые идеи армянской общины Конституции 1863 года соответствуют политико-правовым идеям прогрессивных мыслителей XIX века. Показаны идеи демократии, суверенитета, национального самоопределения, прав человека и в этом контексте прав женщин, которые лежат в основе концепции Национальной конституции. Содержание Конституции было раскрыто как возможный правовой документ, регулирующий жизнь западных армян

The Legal-Political Ideas of the National Constitution of the Western Armenians of 1863

Safaryan G., Grigoryan A. D.

Yerevan “Haybusak” University, Faculty of Law

The legal ideas of the Western-Armenians of the National Constitution of 1863, which are in line with the legal-political ideas of the progressive thinkers of the XIX century, were discussed. The ideas of democracy, sovereignty, national self-determination, human rights, and in that context women’s rights, which are the basis of the concept of the National Constitution, are shown. The content of the Constitution as a possible legal document in regulating the life of Western Armenians.

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՍՈՒՆ Ս.

Քաղաքագիտության թեկնածու, դոցենտ

Երևանի «Հայքուսակ» համալսարան, իրավաբանական ֆակուլտետ

Ամփոփում Քննարկված են վարչական իրավունքի՝ որպես իրավունքի ճյուղի կարգավորման առարկա հանդիսացող պետական կառավարման, գործադիր իշխանության կազմակերպման և գործունեության ոլորտում ծագող հարաբերությունները: Ցույց է տրված վարչական իրավունքի կողմից կարգավորվող բնագավառի էության ըմբռնման համար սահմանադրությամբ ամրապնդված պետական կառավարում և գործադիր իշխանություն եզրույթների հարաբերակցության հարցի կարևորությունը:

Առանցքային բառեր վարչական իրավունք; գործադիր, օրենսդիր, դատական իշխանություն, ՀՀ Սահմանադրություն:

Պետական կառավարում եզրույթն օգտագործվում է երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով պետական կառավարումը պետական ողջ ապարատի կազմակերպական ներգործությունն է հասարակական հարաբերությունների վրա: Լայն առումով պետական կառավարմանը մասնակցում են իշխանության երեք ճյուղերն էլ՝ օրենսդիր գործադիր և դատական:

Նեղ իմաստով պետական կառավարումը պետական գործունեության տեսակ է: Պետական կառավարում ասելով հասկանում ենք իշխանությունների բաժանման հիման վրա պետության կառուցակարգում առանձնացված հատուկ համակարգի՝ գործադիր իշխանության համակարգի նպատակաուղղված ազդեցությունը հասարակության, նրա կառուցվածքների ու մարդկանց նկատմամբ, նրանց գործունեությունը կարգաբերելու նպատակով: Գործադիր իշխանությունը կառավարչական ներգործություն է իրականացնում երեք խոշոր ոլորտներում՝

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

տնտեսական (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ և կապ և այլն), սոցիալ մշակութային (կրթություն գիտություն, մշակույթ, սոցիալական հարցեր) և վարչաքաղաքական (պաշտպանություն, անվտանգություն, հասարակական կարգի պաշտպանություն, արտաքին գործեր): Վարչական իրավունքի առարկայի մասին մենք խոսում ենք պետական կառավարման հենց այս նեղ իմաստով:

Պետական կառավարման տեղը և դերը պայմանավորված են հետևյալ հատկանիշներով:

1. Պետական կառավարումը միասնական պետական իշխանության մյուս ճյուղերից իր գործառույթներով, իրավասությամբ, իրականացման ձևերով և մեթոդներով տարբերվող իշխանության գործադիր ճյուղի գործունեության կոնկրետ տեսակ է:

2. Պետական կառավարումը իբրև նպատակաուղղված կառավարչական ազդեցություն դրսևորվում է իբրև գործադիր կարգադրիչ գործունեություն: Պետական կառավարման մարմինների իրավակիրառ գործունեությունը ներառում է ինչպես գործադիր այնպես էլ կարգադրիչ գործունեությունը: Նրանց գործունեության գործադիր բնույթն արտահայտվում է նրանում, որ գործադիր մարմինները պարտավոր են կատարել օրենքները և այլ նորմատիվ ակտերը և դրանով իսկ ապահովել ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքների իրականացումը: Օրենքների գործադրման ժամանակ պետական կառավարման մարմինները իրավունք ունեն ընդունել օրենքների գործադրման տրամաբանությունից բխող հրամաններ, որոշումներ, որոնք անհրաժեշտ են արդյունավետ կառավարման համար: Այդ գործունեությունը, որ նրանք իրականացնում են իրենց անունից, իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում անվանում են կարգադրիչ գործունեություն: Օրինակ, անհատ ձեռնարկատիրոջը լիցենզիա տալու, քաղաքացուն գրանցելու, հարկային, մաքսային և այլ մարմինների կողմից հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ և այլն:

3. Պետական կառավարումը միաժամանակ իրավաստեղծ գործունեություն է: Իրավաստեղծ գործունեությունը կայանում է նրանում, որ պետական կառավարման մարմիններն իրենց իրավասության շրջանակներում ինքնուրույնաբար մշակում և ընդունում են իրավունքի մյուս սուբյեկտների (կառավարման օբյեկտների) համար պարտադիր վարքագծի կանոններ, վերահսկում են այդ կանոնների պահպանումը և ինքնուրույնաբար իրականացնում են վարչական իրավապաշտպան գործունեություն:

4. Պետական կառավարումն իրականացվում է գործադիր իշխանության հատուկ մարմինների կողմից որոնք կազմում են պետական կառավարման մարմինների համակարգը: Գործելով պետության անունից և նրա հանձնարարությամբ և իրականացնելով պետական կառավարման գործառույթներ այդ մարմինները օժտվում են պետական իշխանական բնույթի

լիազորություններով և գործում են նրանց համար նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավասության շրջանակներում:

5. Պետական կառավարումը հիմնվում է կազմակերպվածության սկզբունքի վրա, այլ կերպ ասած նրան բնորոշ է կազմակերպական ձևերի բազմազանությունը, որոնց համակցությունը ապահովում է կառավարման ողջ մեխանիզմի նպատակաուղղված և կայուն գործառնությունը: Պետական կառավարման մարմինների կազմակերպական գործունեությունը ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործառնությունների իրականացում: Գործադիր իշխանության մարմինները համակցում են ներքին կառավարումը, այսինքն, ինքնակազմակերպումը (կառավարման մարմնի կառուցվածքի ստեղծում, որակյալ ծառայողների նախապատրաստում և այլն), արտաքին կառավարման, այսինքն, կառավարման համապատասխան սուբյեկտների կողմից կառավարման արտաքին գործառնությունների իրականացման կառավարման օբյեկտների վրա ազդեցության հետ: Պետական կառավարման կազմակերպական էությունը, հետևաբար, կայանում է նրանում, որ նրա միջոցով համակարգվում է մարդկանց համատեղ գործունեությունը, ապահովվում է առաջադրված նպատակների իրականացումը, կանոնակարգվում են պետական կառավարման սուբյեկտների և օբյեկտների միջև կապերը: Այսպես, օրենքները գործադրելով պետական կառավարման մարմինները կազմակերպում են ճանապարհային երթևեկությունը, բնակչությանը ապահովում են մթերքներով, բժշկական օգնությամբ, կազմակերպում են զանգվածային միջոցառումներ, նախապատրաստում են երիտասարդներին զինվորական ծառայության և այլն:

6. Պետական կառավարումը ենթաօրենսդրական գործունեություն է, որն իրականացվում է «օրենքների հիման վրա և ի կատարումն օրենքի»: ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի համաձայն «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձիք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով»: Այդ գործունեությունը չպետք է հակասի նաև իրենց՝ գործադիր մարմինների կողմից ընդունված ակտերին: Այլ կերպ ասած այդ գործունեությունն իրականացվում է այդ մարմինների իրավասության շրջանակներում:

7. Պետական կառավարումը որպես նպատակաուղղված կառավարչական ներգործություն օբյեկտիվորեն ենթադրում է որոշակի գործառնությունների իրականացում:

Պետական կառավարման գործառնությունները պայմանավորված են պետության նպատակներով և գործառնություններով: Քանի որ պետական կառավարման կազմակերպական հիմքը գործադիր իշխանության մարմիններն են, հետևաբար, գործադիր իշխանության գործառնությունները պայմանավորված են պետական կառավարման գործառնություններով: Գրականության մեջ նշվում են գործադիր իշխանության հետևյալ հատկանիշները.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Գործադիր իշխանությունը իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա կառուցված պետական իշխանական մեխանիզմի անօտարելի բաղադրամասն է:

Գործադիր իշխանությունը իրենից ներկայացնում է միասնական պետական իշխանության հարաբերականորեն ինքնուրույն ճյուղ, որը սերտորեն համագործակցում է օրենսդիր և դատական ճյուղերի հետ: Գործադիր իշխանության ինքնուրույնությունն արտահայտվում է միայն գործառույթային իրավասության իմաստով: Հետևաբար, գործադիր իշխանությունը կարելի է բնութագրել որպես ենթահամակարգ միասնական պետական իշխանության շրջանակներում:

2. Գործադիր իշխանությունը, որպես իշխանական լիազորությունների ցանկացած դրսևորում վարքագծի, գործունեության վրա ազդելու, ուրիշներին իրեն ենթարկելու իրավունք և հնարավորություն է: Գործադիր իշխանությունը ինչպես և իշխանական լիազորությունների ցանկացած դրսևորում կարող է ա) որոշակի ազդեցություն գործել մարդկանց, մարմինների, հիմնարկների վրա, բ) ուրիշների ենթարկել իր կամքին: Գործադիր իշխանության տարբերիչ առանձնահատկությունն է հանդիսանում այն, որ իշխանությունն իրականացվում է պետականորեն կազմավորված հասարակության մեջ տարբեր (կոլեկտիվ և անհատական) օբյեկտների նկատմամբ, որպես իրավակիրառական բնույթի պետական գործառույթ:

Միասնական պետական իշխանության ճյուղ հանդիսանալով գործադիր իշխանությունը չի կարող նույնացվել պետական գործունեության տեսակի հետ: Այդպիսի գործունեությունը ոչ թե իշխանություն է այլ միայն նրա պրակտիկ իրականացման ձևը:

3. Գործադիր իշխանությունը կազմակերպված ինստիտուտ է: Քանի որ գործադիր իշխանությունն է պրակտիկորեն կազմակերպում օրենքների գործադրումը, անհրաժեշտ է, որ այդ մեխանիզմն ինքը պատշաճ կազմակերպված լինի: Գործադիր իշխանությանը բնորոշ հատկանիշները պայմանավորում են նրա կազմակերպական ձևը: Այն իրենից ներկայացնում է միասնական աստիճանակարգված պետական համակարգ: Գործադիր իշխանության բազմամակարդակ մեխանիզմի միասնականությունը պետության միասնության կարևոր հիմքն է: Ի տարբերություն իշխանության մյուս ճյուղերի գործադիր իշխանությունը բնութագրվում է կազմակերպական միասնությամբ, նրա ստորադաս օղակները ենթարկվում են վերադասին, այն բաժանվում է աստիճանակարգված մակարդակների: Գործադիր իշխանության համակարգը կառուցվում է ուղղահայաց (ենթակարգության) և հորիզոնական հարաբերությունների հիմքի վրա, որտեղ գերակշռող դեր են խաղում ուղղահայաց հարաբերությունները, այսինքն կառավարման սուբյեկտների վարչական և կարգապահական իշխանությանը խիստ ենթակայության հարաբերությունները:

4. Գործադիր իշխանությունն ունի որոշակի սուբյեկտային արտահայտություն, այսինքն մարմնավորվում է գործադիր իրավասությամբ օժտված հատուկ

սուբյեկտների մարմինների գործունեության մեջ: Այդպիսի մարմիններ են՝ ՀՀ նախագահը, կառավարությունը, նախարարությունները, կառավարության առընթեր մարմինները, տարածքային կառավարման մարմինները և այլն: Այդպիսին է իշխանությունների բաժանման պարտադիր պահանջներից մեկը: Դրան համապատասխան պետական իշխանական կառուցակարգում գործադիր իշխանությունը հանդես է գալիս գործադիր մարմինների միջոցով:

Գործադիր իշխանությունը որպես պետական իշխանության ճյուղ, ամեն օր և անմիջականօրեն, ըստ տնօրինման առարկաների և ըստ լիազորությունների ծավալի, իրականացնում է պետական կառավարման խնդիրների և գործառույթների մեծ մասը:

5. Գործադիր իշխանությունը բնութագրվում է նրանով, որ անմիջականորեն նրա տնօրինման տակ են գտնվում պետական իշխանության առավել էական ատրիբուտները՝ ֆինանսները, հաղորդակցության կարևորագույն միջոցները: տեղեկատվական- տեխնիկական և կազմակերպական-տնօրինչական մեթոդները, իրավական, գաղափարախոսական միջոցները: Բացի դրանից, գործադիր իշխանության անմիջական տնօրինության տակ են գտնվում զինված ուժերը, մասնավորապես, բանակը, ոստիկանությունը, անվտանգության մարմինները, մասնագիտացված հարկադրանքի մարմինները: Գործադիր իշխանության սուբյեկտները օգտագործում են իրենց փաստական և իրավական հնարավորությունները արտադատական, վարչական հարկադրանք իրականացնելու համար: Հարկադրական ուժի վրա հիմնվելը, վարչական կարգով ֆիզիկական, կազմակերպական և հարկադրանքի այլ տեսակների իրականացման հնարավորությունը գործադիր իշխանության կարևոր հատկանիշ է:

6. Գործադիր իշխանությունը զսպումների և հակակշիռների մեխանիզմի համաձայն վերահսկվում է օրենքով սահմանված կարգով: Իր գործառույթներն իրականացնելիս այն ինքնուրույն է, չի ենթարկվում մյուս իշխանություններին, սակայն վերջիններս կարող են նրան վերահսկել: Գործադիր իշխանությունը կարող են վերահսկել օրենսդիր մարմինը, դատական մարմինները, վերահսկիչ պալատը և այլն: Կարևոր վերահսկողական լիազորություններ է պատկանում նաև ՀՀ նախագահին:

7. Պետական գործունեության հատուկ տեսակի մեջ արտահայտվող գործադիր իշխանությունը իր էությամբ իրավակիրառական, իրավակատարողական է: Դա նրա սկզբունքային հատկությունն ու նշանակությունն է: Գործադիր իշխանության կողմից իրավակիրառումը տեղի է ունենում երկու ասպեկտներով. ա) այն ունի դրական բնույթ, այսինքն, ուղղված է օրենքների կատարմանը, իր ազդեցության տակ գտնվող տնտեսական, մշակութային և այլ օբյեկտների բնականոն և արդյունավետ աշխատանքի ապահովման համար. բ) ազդեցությունն ունի բացասական բնույթ, երբ գործադիր իշխանության մարմինները հարկադրանք են կիրառում օրենսդրությունը խախտողների նկատմամբ:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Շարադրված դրույթներն անհրաժեշտ հիմք են հանդիսանում պետական կառավարման և գործադիր իշխանության հարաբերակցության հարցը լուծելու համար: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ գործադիր իշխանությունը քաղաքական իրավական կատեգորիա է, իսկ պետական կառավարումը կազմակերպահրավական: Կյանքի իրավունք ունեն այդ երկու պետահրավական կատեգորիաներն էլ:

Պետական կառավարում տերմինը պրակտիկ կազմակերպական իրավական իմաստ ունի: Պետական կառավարումը գործադիր իշխանության իրականացման ձև է, այսինքն գործադիր իշխանության իրականացմանն ուղղված գործունեություն է: Այն երբեմն անվա նում են նաև գործադիր կարգադրիչ գործունեություն: Գործադիր իշխանություն տերմինը ավելի նեղ է, քան պետական կառավարում տերմինը, քանի որ այն աճանցյալ է պետական կառավարում տերմինից: Նրա գործառության արդյունավետությունն ուղղակիորեն կախված է պետական կառավարման համակարգի կազմակերպման մակարդակից: Դրա հետ մեկտեղ գործադիր իշխանությունը պայմանավորում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ընթացքում իրականացվող իշխանական լիազորություն ների ծավալն ու բնույթը: Գործադիր իշխանության մարմինները կազմում են պետական կառավարման կազմակերպական կառուցվածքի հիմքը և անմիջական կառավարչական ներգործություն են իրականացնում տարբեր հասարակական գործընթացների, մարդկանց վարքագծի և գործունեության վրա: Գործադիր իշխանությունն իրականացվում է կառավարման և կառավարչական ընթացակարգերի միջոցով: Հետևաբար պետական կառավարումն պրակտիկորեն իրականացվում է նա իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված պետական իշխանության համակարգի շրջանակներում: Որպես միասնական պետական իշխանության դրսևորում իրական բնույթ է ստանում պետական ապարատի հատուկ օղակներում, որն այժմ անվանում են գործադիր մարմիններ, իսկ ըստ էության պետական կառավարման մարմիններ են: Այդ պատճառով էլ իբրև գործադիր կարգադրիչ գործունեություն ըմբռնվող պետական կառավարումը չի հակադրվում գործադիր իշխանության իրականացմանը, որն ըմբռնվում է որպես իշխանության այդ ճյուղի սուբյեկտների գործունեություն:

Գրականություն

1. А.П.Алехин, А.А. Кармолицкий Административное право России: Учебник.-М.: Зерцало, 2007.
2. Административное право: Учебник / Под ред. Л.Л. Попова. - М.: Юристь, 2008.
3. Д.Н. Бахрах, Административное право России. - М.: Норма, 2006.
4. Д.Н., Бахрах, Б.В.Россинский, Ю.Н. Стариков, Административное право. Учебник для вузов.- М.: Норма, 2004, 768 с.
5. Ю.М. Козлов, Административное право. Учебник. М.: Юристь. 2004.

On Some Issues of State Governance

Grigoryan S.S.

Yerevan “Haybusak” University, Faculty of Law

The relationships in public administration, organization and activities of executive power are regulated by the norms of administrative law. As a result, it's very important to clarify the relationship between terms of executive power and public administration determined by RA Constitution.

О некоторых вопросах государственного управления

Григорян С.С.

Ереванский Университет “Айбусак”, юридический факультет

Предметом (объектом) регулирования норм административного права являются отношения в сфере государственного управления, организации и деятельности исполнительной власти. В этой связи важное значение имеет выяснение соотношения понятий «исполнительная власть» и «государственное управление», закрепленное Конституцией РА.

«ԳՈՒՅՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՂԵՑԻԿ Մ.

իրավագիտության թեկնածու, դոցենտ

Երևանի «Հայրուսակ» համալսարան, իրավաբանական ֆակուլտետ

Ամփոփում. Քննարկված են գույք հասկացության հետ կապված որոշ հարցեր: Գույքը, մասնավորապես, մեզ շրջապատող առարկաներն են, մարդկային գործունեությանը սպեղծված իրերը, որոնք օժտված են որոշակի հատկություններով և կարող են բավարարել մարդկանց ինչ-ինչ պահանջմունքներ: Համաձայն քաղաքացիական իրավունքի՝ գույքը այն նյութական և հոգևոր օբյեկտն է, որի շուրջ ձևավորվում են քաղաքացիական իրավահարաբերություններ: Վերլուծված է գույքը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ:

Առանցքային բառեր. ՀՀ քաղաքացիական իրավունք, օբյեկտ, գույք, օրենք, իրավունք, ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:

Ներկա շուկայական հարաբերությունների պայմաններում անհրաժեշտություն է առաջացել նորովի մեկնաբանել “գույք” հասկացությունը և նրա հետ կապված քաղաքացիական հարաբերությունները իրավական հարթության մեջ:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքացիական օրենսգիրքը “գույք” եզրույթը մեկնաբանում է տարբեր իմաստներով: Առավել հաճախ՝ դրանք մեզ շրջապատող առարկաներն են՝ իրերը, որոնք կարող են բավարարել մարդկանց որոշակի պահանջմունքներ: Գույքը ոչ միայն անշունչ առարկաներն են, այլև շրջանառությանը ենթակա կենդանիներ: Գույք են համարվում նաև էներգիայի առանձին տեսակները (էլեկտրական, ջերմային և այլն):

Գույքը ենթակա է դասակարգման, որի արդյունքում առանձնացվում են նրա առանձին տեսակները: Այդ դասակարգումը կարևոր իրավական նշանակություն ունի: Ելնելով շրջանառությունից, գույքը բաժանվում է երեք խմբի.

- անսահմանափակ շրջանառությամբ,
- սահմանափակ շրջանառությամբ,
- շրջանառությունից հանված:

Ընդ որում, շրջանառություն ասելով հասկանում ենք այն գործարքները և իրավաբանական փաստերը, որոնք հանգեցնում են գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը: Ընդհանուր կանոնի համաձայն, գույքը համարվում է *անսահմանափակ շրջանառությամբ*, եթե այլ բան սահմանված չէ օրենսդրությամբ: Այն կարող է ազատորեն օտարվել կամ անցնել մեկ անձից մյուսին համապարփակ իրավահաջորդության կարգով (ժառանգում, իրավաբանական անձի վերակազմակերպում) կամ այլ եղանակով /«Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 133, կետ 1/»: *Սահմանափակ շրջանառությամբ* է համարվում այն գույքը, որը կարող է պատկանել շրջանառության սուկ որոշ մասնակիցների կամ կարող է շրջանառության մեջ գտնվել հատուկ թույլտվությամբ: Այդպիսի գույք է զենքը, զինամթերքը, պայթուցիկ նյութերը, թունավոր նյութերը և այլն: Օրինակ, հրազենը կարող է վաճառվել միայն հատուկ թույլտվություն ունեցող անձանց կողմից:

Շրջանառությունից հանված է համարվում այն գույքը, որի շրջանառության մեջ գտնվելը արգելված է օրենքով: Այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը գործարքներով կամ այլ եղանակով չի կարող փոխանցվել մեկ սուբյեկտից մյուսին: Օրինակ, ընդերքը, պետական արգելանոցները, արգելավայրերը և այլն:

Անշարժ և շարժական գույք

Այդպիսի բաժանումը պայմանավորված է գույքի օբյեկտիվ հատկանիշներով: Որպես կանոն, անշարժ գույքը գտնվում է միևնույն տեղում, օժտված է անհատական հատկանիշներով և անփոխարինելի է: «Քաղաքացիական օրենսգրքի համաձայն անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին վնաս պատճառելու, կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ

նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության:

Անշարժ չհամարվող գույքը կոչվում է շարժական գույք:

Նշված դասակարգման իրավաբանական նշանակությունը կայանում է նրանում, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ծագում, փոփոխվում և դադարում են հատուկ կարգով, որը սովորաբար պահանջում է գրավոր ձև, նոտարական վավերացում և գրանցում պետական կադաստրում: Գրանցման ենթակա են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը հիպոթեքը, սերվիտուտները և օրենքով նախատեսված դեպքերում այլ իրավունքները: Շարժական գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են գրանցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Բաժանելի և անբաժանելի գույք

Բաժանելի է համարվում այն գույքը, որը հնարավոր է մասերի բաժանել առանց գույքի նշանակությանը վնասելու: Մասերից յուրաքանչյուրն իրականացնում է նույն գործառույթները ինչ որ ամբողջը: (օրինակ, սննդամթերքը, վառելիսյուղը): Անբաժանելի է համարվում այն գույքը, որը չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոփոխման կամ ենթակա չէ բաժանման օրենքի ուժով (օրինակ ավտոմեքենան, անասունը): Այս դասակարգումը կարևոր նշանակություն ունի ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի բաժանման ժամանակ: Մասնավորապես, եթե ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքն անբաժանելի է, ապա այն կտրվի սեփականատերերից մեկին իսկ մյուսին կհատուցվի նրա բաժնի արժեքը /ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 197/: Բացի այդ, եթե պարտավորության առարկան անբաժանելի է, ապա պարտավորությունը համարվում է *համապարտ* և առաջանում է համապարտ պատասխանատվություն /ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 361/:

Անհատապես և տեսակային հատկանիշներով որոշվող գույք

Անհատապես որոշվող գույք է համարվում այլ գույքից իրեն ներհատուկ հատկանիշներով առանձնացված գույքը: Այդ ասելով հասկանում ենք կոնկրետ իրը, որը բնութագրվում է միայն իրեն ներհատուկ անհատական հատկանիշներով, ձևով, գույնով, գտնվելու վայրով, համարով և այլն, որը հնարավորություն է տալիս գույքն առանձնացնել նմանատիպ այլ գույքից: Անհատապես որոշակի գույքի մեջ հնարավոր է առանձնացնել եզակի գույքը, որը գոյություն ունի մեկ օրինակով (նկարչի կոնկրետ նկարի բնօրինակը): Տեսակային հատկանիշներով որոշվող գույք է համարվում նույն տեսակի այլ գույքին ներհատուկ հատկանիշներով օժտված և թվով, քաշով ու չափով որոշվող գույքը (օրինակ մեկ պարկ կարտոֆիլ, 10 ավտոմեքենա և այլն):

Այդ դասակարգման իրավաբանական նշանակությունը դրսևորվում է.

1) քաղաքացիաիրավական մի շարք պարտավորությունների սահմանա-

զատման համար (օրինակ վարձակալության, պահատվության պայմանագրերի առարկա կարող է լինել միայն անհատապես որոշվող գույքը, իսկ փոխառության պայմանագրի առարկան միայն տեսակային հատկանիշներով որոշվող գույքը)։

- 2) պարտավորությունների կատարման համար: Անհատապես որոշված գույքը կարող է հարկադրական կարգով պահանջվել (քաղ.օր. 414 հոդված): Այն համարվում է իրավաբանորեն անփոխարինելի՝ դրանց ոչնչացման կամ կորստի դեպքում չի թույլատրվում պարտավոր անձից պահանջել տրամադրելու նույն տեսակի մեկ այլ գույք: Տեսակային հատկանիշներով որոշվող գույքը փոխարինելի է: Այդ պատճառով դրանց ոչնչացումը պարտավոր անձին չի ազատում պարտավորության կատարումից՝ նույն տեսակի այլ գույք տրամադրելուց:

Սպառվող և չսպառվող գույք

Սպառվող է համարվում այն գույքը, որը մեկ անգամյա օգտագործումից դադարում է գոյություն ունենալ կամ կրում է էական փոփոխություններ (օրինակ հումքը, վառելանյութը, սննդամթերքը, կիսաֆաբրիկատները և այլն): Չսպառվող է համարվում այն գույքը, որն օգտագործման ընթացքում չնայած մաշվում է, սակայն իր հատկությունները պահպանում է երկար ժամանակ (օրինակ բնակելի շենքերը, մեքենաները, հաստոցները կահույքը և այլն): Գույքի նման բաժանման իրավական նշանակությունը կայանում է նրանում, որ պայմանագրի առանձին տեսակների առարկա կարող են լինել միայն չսպառվող գույքը:

Օրինակ՝ վարձակալության, գույքի անհատույց օգտագործման պայմանագրերը, քանի որ վարձակալը պարտավոր է վերադարձնել նույն գույքը և ոչ թե մեկ ուրիշը: Ընդհակառակը, փոխառության պայմանագրով չի կարելի հանձնել չսպառվող իր:

Գլխավոր գույք և պարկանելիք

Այս բաժանման իմաստը կայանում է նրանում, որ երկու և ավելի իրերի ընդհանուր տնտեսական նշանակությունը նրանց կարող է կապել այնպես, որ դրանցից մեկը կախված լինի մյուսից և չկարողանա գոյություն ունենալ ինքնուրույն, այն դեպքում երբ մյուսն ինքնուրույն նշանակություն ունենա: Այդպիսի կապի մեջ գտնվող իրերը միմյանց հարաբերում են իբրև *գլխավոր գույք և պարկանելիք*: Պատկանելիք համարվում գլխավոր գույքի սպասարկման համար նախատեսված և դրա հետ ընդհանուր նշանակությամբ կապված գույքը (օրինակ գլխավոր գույք է նկարը, պատկանելիք շրջանակը և այլն):

Նշված դասակարգման իրավական նշանակությունը կայանում է նրանում, որ պատկանելիքը հետևում է գլխավոր գույքի ճակատագրին, եթե այլ բան

նախատեսված չէ պայմանագրով: Օրինակ, ջութակը վաճառելիս նրա հետ պետք է տրվի պատյանը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Բաղադրատարր գույք

Սա գույքի առանձին տեսակ է, որը բաղկացած է տարասեռ տարրերից, բայց կազմում է միասնական ամբողջություն և օգտագործվում է միասնական նշանակությամբ (օրինակ, կահույքը, գրադարանը կամ հավաքածուն): Այդպիսի գույքը հանդես է գալիս իբրև որոշակի պարտավորության (օրինակ առուվաճառքի) միասնական օբյեկտ, սակայն բաղկացուցիչ տարրերը կարող են օտարվել նաև առանձին-առանձին: Բաղադրատարր գույքի առնչությամբ կնքված գործարքի գործողությունը տարածվում է դրա բոլոր բաղադրիչների վրա, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Օրենսդրությունը հատուկ առանձնացնում է նաև գույքի այնպիսի տեսակներ, ինչպես *պտուղները, արտադրանքը և եկամուտները*: Պտուղներ ասելով սովորաբար հասկանում ենք գույքից առանձնացած նրա օրգանական զարգացման արդյունքները, օրինակ, կովի կաթը, ոչխարի բուրդը, հավի ձուն, պտղատու ծառերի բերքը և այլն:

Արտադրանքն այն ամենն է, որը ստացվել է գույքի արտադրական օգտագործման արդյունքում (պատրաստի արտադրանք, կիսաֆաբրիկատ, հետագա մշակման համար նախատեսված նյութ):

«Եկամուտ» եզրույթը երկու նշանակություն ունի: Լայն առումով եկամուտ ասելով հասկանում ենք ամբողջ հասույթը՝ ներառյալ պտուղներն ու գույքն ապօրինի օգտագործողից ստացած դրամական միջոցները: Նեղ իմաստով՝ եկամուտն այն դրամը կամ այլ նյութական արժեքներն են, որոնց ստացումը պայմանավորված է պարտավորական իրավահարաբերությունների առկայությամբ: Մասնավորապես, եկամուտ համարվում գույքը վարձակալության հանձնելու դիմաց ստացված վարձավճարը, ավանդի համար վճարվող տոկոսները և այլն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 144 հոդվածի համաձայն, գույքի օգտագործման արդյունքում ստացվածը (պտուղները, արտադրանքը եկամուտները) պատկանում է այդ գույքն օրինական հիմքերով օգտագործող անձին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ այդ գույքի օգտագործման մասին պայմանագրով:

Գրականություն

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150008>
2. Տ.Կ. Բարսեղյան, ՀՀ քաղաքացիական իրավունք, հ.2, Երևան, 2001
3. Ս.Գրիգորյան, Գ.Գրիգորյան, Իրավագիտություն, Երևան, 2014
4. Ս.Գրիգորյան, Գ.Գրիգորյան, Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 2019
5. Globalization and National Financial Systems, Edited by James A. Hanson, Patrick Honohan, Giovanni Majnoni, A cooperation of The World Bank and Oxford University Press, March 2003. U.S. Securities and Exchange Commission.

О некоторых вопросах понятия имущества

Григорян Г.М.

Ереванский Университет “Айбусак”, юридический факультет

Обсуждаются некоторые вопросы, связанные с понятием «имущество», в частности, объекты вокруг нас или объекты, созданные в результате человеческой деятельности, которые наделены определенными свойствами и удовлетворяют потребности людей. Имущество анализируется как один из объектов гражданского права. Согласно гражданскому праву, объектом является материальная и духовная ценность, вокруг которой формируются гражданские правоотношения.

Regarding Property on Some Questions

Grigoryan G.M.

Yerevan “Haybusak” University, Faculty of Law

Some issues related to the concept of property are discussed, in particular, the objects around us, or objects created by human activity, which are endowed with certain properties that can satisfy some of the needs of people. Property as an object of civil law is analyzed. According to civil law, the object is the material good care around which civil legal relations are formed.

ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ., ՍԱՀԱԿՅԱՆ Ս.

Երևանի «Հայբուսակ» համալսարան, իրավաբանական ֆակուլտետ

Ամփոփում. Քննարկված են վարձակալության պայմանագրի կնքման արդյունքում ծագող պարտավորությունները: Վերլուծված են քաղաքացիական իրավունքում գույքի օտարմամբ ծագող պարտավորությունների հետ գոյություն ունեցող գույքի ժամանակավոր օգտագործման հանձնելիս ծագող պարտավորությունները: Դրանք իրավաբանորեն ձևակերպում են ապրանքափոխանակության փոփոխական հարաբերությունների առանձին խումբ, որի շրջանակներում մասնակիցների փոփոխական և այլ պահանջմունքները բավարարվում են նյութական բարիքների ժամանակավոր փոխանցման շնորհիվ:

Առանցքային բառեր՝ վարձակալության պայմանագիր, քաղաքացիական օրենսգիրք, պարտականություններ, պատասխանատվություն:

Վարձակալության պայմանագրով գույքի սեփականատերերը թույլատրում են այլ անձանց որոշակի պայմաններով շահագործել իրենց պատկանող գույքը, պահպանելով միաժամանակ գույքի նկատմամբ սեփականության կամ այլ իրային իրավունքը: Սեփականատիրոջ կողմից գույքը ուրիշի օգտագործմանը հանձնելն իրականացվում է պայմանագրի հիման վրա: Վարձակալության պայմանագրին է նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլուխը:

Վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք: Ընդ որում, վարձակալած գույքի օգտագործման արդյունքում վարձակալի ստացած պտուղները, արտադրանքը և եկամուտները նրա սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Պայմանագիրը կոնսենսուալ է, հատուցելի, երկկողմանի:

Վարձակալության պայմանագրով վարձակալին կարող է տրվել կամ միայն օգտագործման իրավունքը (օրինակ, որոշակի ժամանակով մարզադահլիճն օգտագործելու իրավունքը) կամ տիրապետելու և օգտագործելու իրավունքը (երբ իրը հանձնվում է վարձակալի տիրապետմանը): Վերջին դեպքում վարձակալը համարվում է տիտղոսային տիրապետող:

Պայմանագրի փարրերը

Վարձակալության պայմանագրի կողմերն են՝ վարձատուն և վարձակալը: Վարձատու կարող են լինել գույքի սեփականատերը, ինչպես նաև գույքը վարձակալության հանձնելու համար օրենքով կամ սեփականատիրոջ կողմից լիազորված անձինք: Որպես այդպիսիք, իրենց իրավասությունների շրջանակներում, կարող են հանդես գալ քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները՝ քաղաքացիները, իրավաբանական անձիք, պետությունը և համայնքները:

Պայմանագրի առարկան են շարժական և անշարժ, անհատապես որոշակի և չսպառվող իրերը: Վարձակալության կարող են հանձնվել հողամասեր և մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները: Պայմանագրի առարկա չեն կարող լինել շրջանառությունից հանված իրերը, իսկ սահմանափակ շրջանառությամբ գույքը կարող է լինել վարձակալության առարկա միայն օրենքի, այլ իրավական ակտերի պահպանմամբ:

Վարձակալության պայմանագրում պետք է նշվեն տվյալներ, որոնք թույլ են տալիս որոշակիորեն սահմանել այն գույքը, որը որպես վարձակալության օբյեկտ հանձնվում է վարձակալին: Սա նշանակում է, որ պայմանագրի առարկա կարող է լինել միայն անհատապես որոշակի գույքը, որը իրավաբանորեն անփոխարինելի է: Պայմանագրի դադարման դեպքում վարձատուին պետք է վերադարձվի նույն գույքը բնական մաշվածության հաշվառմամբ:

Պայմանագրի առարկան պայմանագրի էական պայմանն է: Պայմա-

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նագրում պետք է նշվի, թե ինչ գույք է տրվում վարձակալության (անվանումը, բնութագիրը, իսկ անշարժ գույքի դեպքում՝ նաև գտնվելու վայրը): Վարձակալության հանձնաժողովի մասին հստակ տվյալների բացակայության դեպքում վարձակալության առարկայի մասին պայմանը համարվում է չհամաձայնեցված, իսկ համապատասխան պայմանագիրը՝ չկնքված: Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր: Վարձակալության պայմանագիրը կարող է կնքվել ինչպես որոշակի, այնպես էլ անորոշ ժամկետով: Եթե վարձակալության ժամկետը պայմանագրում որոշված չէ, ապա վարձակալության պայմանագիրը կնքված է համարվում անորոշ ժամկետով: Այդ դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու վարձակալության պայմանագրից, այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ, իսկ անշարժ գույքի վարձակալության դեպքում՝ երեք ամիս առաջ տեղեկացնելով: Օրենքով սահմանված առավելագույն ժամկետը գերազանցող ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը համարվում է առավելագույն ժամկետին հավասար ժամկետով կնքված: *Պայմանագրի կարևոր պայման է վարձավճարը, սակայն, ՀՀ քաղ. օր. այդ պայմանը էականների թվին չի դասում: Միակ բացառությունը շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրն է, որը պետք է նախատեսի վարձավճարի չափ (ՀՀ քաղ.օր 658 հոդվ.):* Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետները որոշվում են վարձակալության պայմանագրով: Եթե պայմանագրով դրանք որոշված չեն, ապա կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները: Վարձավճարը սահմանվում է վարձակալության հանձնված ամբողջ գույքի կամ դրա յուրաքանչյուր բաղկացուցիչ մասի վերաբերյալ՝

- 1) պարբերաբար կամ միաժամանակ վճարվող որոշակի կայուն գումարով,
- 2) վարձակալված գույքն օգտագործելու արդյունքում ստացված արտադրանքի, պտուղների կամ եկամուտների համար սահմանված բաժնով,
- 3) վարձակալի կողմից որոշակի ծառայություններ մատուցելով,
- 4) վարձակալի կողմից պայմանագրով պայմանավորված գույքը վարձատուի սեփականությանը կամ վարձակալությանը հանձնելով,
- 5) վարձակալված գույքը բարելավելու համար պայմանագրով նախատեսված ծախսերը վարձակալի վրա դնելով: Կողմերը վարձակալության պայմանագրով կարող են նախատեսել վարձավճարի մատնանշված ձևերի համակցություն կամ դրա այլ ձևեր (քաղ.օր. 616 հոդվ.):

Օրենքով կարող են նախատեսվել վարձակալության առանձին տեսակների, ինչպես նաև գույքի առանձին տեսակների վարձակալության համար վարձավճարի չափի վերանայման նվազագույն ժամկետներ:

Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

Վարձատուն պայմանագրի համաձայն կրում է հետևյալ պարտականությունները, որոնց համապատասխանում են վարձակալի իրավունքները:

1. Վարձատուի հիմնական պարտականությունն է՝ պայմանագրով նախատեսված գույքը հանձնել վարձակալի տիրապետմանն ու օգտագործմանը կամ միայն օգտագործմանը: Նա պարտավոր է գույքը վարձակալին տրամադրել վարձակալության պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում: Այլ կերպ ասած, գույքը պետք է լինի սարքին վիճակում և պիտանի լինի պայմանագրով նախատեսված վարձակալության նպատակով օգտագործման համար: Վարձատուն պատասխանատվություն է կրում վարձակալության հանձնված գույքի օգտագործմանը լրիվ կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունների համար, եթե նույնիսկ վարձակալության պայմանագիրը կնքելիս նա չի իմացել այդ թերությունների մասին: Այդպիսի թերություններ հայտնաբերելիս վարձակալը իր ընտրությամբ իրավունք ունի՝

- 1) վարձատուից պահանջել անհատույց վերացնելու գույքի թերությունները կամ համաչափորեն իջեցնելու վարձավճարը, կամ հատուցելու գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը,
- 2) վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը,
- 3) պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

Վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության հանձնված գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի են եղել վարձակալին, կա՛մ պետք է վարձակալի կողմից հայտնաբերվելին գույքը զննելիս կա՛մ պայմանագիր կնքելիս, կա՛մ գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:

Գույքը վարձակալության է հանձնվում դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն), եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Եթե այդպիսի պատկանելիքները և փաստաթղթերը չեն հանձնվել, իսկ վարձակալը առանց դրանց չի կարող գույքն օգտագործել իր նշանակությանը համապատասխան կամ զգալի չափով զրկվում է այն բանից, ինչը կարող էր ակնկալել պայմանագիրը կնքելիս, նա կարող է վարձատուից պահանջել իրեն տրամադրելու պատկանելիքներն ու փաստաթղթերը կամ լուծելու պայմանագիրը և հատուցելու իր կրած վնասները: Եթե վարձատուն վարձակալության պայմանագրում նշված ժամկետում, իսկ եթե պայմանագրում այդպիսի ժամկետ սահմանված չէ՝ ողջամիտ ժամկետում, վարձակալին չի տրամադրել վարձակալության հանձնված գույքը, վարձակալն իրավունք ունի նրանից պահանջել տրամադրելու այդ գույքը և հատուցելու կատարման

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ձգձգման հետևանքով իրեն պատճառված վնասները, կամ պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու պայմանագիրը չկատարելու հետևանքով իրեն պատճառված վնասները:

2.Վարձակալության պայմանագիրը կնքելիս վարձատուն պարտավոր է վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող գույքի նկատմամբ երրորդ ան-ձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին: Վարձատուի կողմից այդ պարտականությունը չկատարելը, վարձակալին իրավունք է տալիս պահանջել նվազեցնելու վարձավճարը կամ լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

3.Վարձատուն պարտավոր է իր հաշվին կատարել վարձակալության հանձնված գույքի հիմնական վերանորոգումը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ վարձակալության պայմանագրով: Հիմնական կապիտալ վերանորոգման տակ օրենքն ի նկատի ունի վարձակալված գույքի բաղկացուցիչ հիմնական մասերի այնպիսի վերականգնումը, առանց որի գույքն անհնար է օգտագործել իր նշանակությանը համապատասխան: Հիմնական վերանորոգումը կատարվում է պայմանագրով որոշված ժամկետում, իսկ եթե պայմանագրով այն որոշված չէ կամ առաջացել է անհետաձգելի անհրաժեշտությամբ, ապա՝ ողջամիտ ժամկետում: Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու պարտականության խախտումը վարձակալին իրավունք է տալիս իր ընտրությամբ՝

1) կատարել պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգում և վարձակալից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին,

2) պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը,

3) պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները: Վարձակալի վրա դրված են մի շարք պարտականություններ, որոնք համապատասխանում են վարձատուի իրավունքներին.

1.Վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճարը (վարձավճարը), որը կարող է սահմանվել վարձակալության հանձնված ամբողջ գույքի կամ դրա յուրաքանչյուր բաղկացուցիչ մասի վերաբերյալ: Վարձավճարը կարող է վճարվել՝

1) պարբերաբար կամ միաժամանակ վճարվող որոշակի կայուն գումարով,

2) վարձակալված գույքն օգտագործելու արդյունքում ստացված արտադրանքի, պտուղների կամ եկամուտների համար սահմանված բաժնով,

3) վարձակալի կողմից որոշակի ծառայություններ մատուցելով,

4) վարձակալի կողմից պայմանագրով պայմանավորված գույքը վարձատուի սեփականությանը կամ վարձակալությանը հանձնելով,

5) վարձակալված գույքը բարելավելու համար պայմանագրով նախատեսված ծախսերը վարձակալի վրա դնելով:

Կողմերը վարձակալության պայմանագրով կարող են նախատեսել

վարձավճարի մատնանշված ձևերի համակցություն կամ դրա այլ ձևեր: Վարձավճարի չափը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ պայմանագրով նախատեսված ժամկետներում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Վարձակալն իրավունք ունի պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում (օրինակ, տարերային աղետի դեպքում), վարձակալության պայմանագրով նախատեսված օգտագործման պայմանները կամ գույքի վիճակը վատթարացել են: Եթե գույքի վիճակը վատթարացել է վարձակալի մեղքով, նա այդպիսի պահանջ ներկայացնելու իրավունք չունի: Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում վարձատուն իրավունք ունի նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով:

Վարձակալը պարտավոր է վարձակալված գույքն օգտագործել վարձակալության պայմանագրի պայմաններին համապատասխան, իսկ եթե այդ պայմանները որոշված չեն, ապա՝ գույքի նշանակությանը համապատասխան: Եթե վարձակալը գույքից օգտվում է վարձակալության պայմանագրի պայմաններին կամ գույքի նշանակությանն անհամապատասխան (օրինակ, գրասենյակի համար նախատեսված տարածքն օգտագործում է որպես պահեստ), վարձատուն իրավունք ունի պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները: Վարձակալը պարտավոր է գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել գույքը պահպանելու ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ վարձակալության պայմանագրով: Ընթացիկ վերանորոգում կատարելու պարտականությունը օրենքով կամ պայմանագրով կարող է դրվել վարձատուի վրա (օրինակ, վարձույթի պայմանագրով): Բացի դրանից, օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքում վարձակալը պետք է կատարի վարձակալված գույքի հիմնական վերանորոգումը (օրինակ, առանց անձնակազմի տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագրով): Վարձակալության պայմանագիրը դադարելու դեպքում վարձակալը պարտավոր է վարձատուին վերադարձնել գույքն իր կողմից ստացված վիճակում՝ բնականոն մաշվածության հաշվառմամբ կամ պայմանագրով նախատեսված վիճակում: Եթե վարձակալը չի վերադարձրել վարձակալված գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամկետի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը: Եթե վարձակալված գույքը ժամանակին չվերադարձնելու համար պայմանագրով նախատեսված է տուժանք, վնասները կարող են գանձվել տուժանքից զատ ամբողջ արժեքով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Վարձակալված գույքն օգտագործելով վարձակալը յուրացնում է այդպիսի օգտագործման արդյունքները:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վարձակալած գույքի օգտագործման արդյունքում վարձակալի ստացած պտուղները, արտադրանքը և եկամուտները նրա սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Վարձակալն իրավունք ունի վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության, վարձակալության պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, վարձակալած գույքը հանձնել անհատույց օգտագործման, վարձակալության իրավունքը գրավ դնել կամ որպես ավանդ ներդնել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում միայն վարձատուի համաձայնությամբ: Նշված դեպքերում, բացառությամբ ենթավարձակալության, վարձատուի առջև պայմանագրով պատասխանատվություն է կրում վարձակալը:

Վարձակալության ընթացքում հաճախ գույքը բարելավվում է, փոփոխվում է հին սարքավորումը, նոր արտադրություն է ստեղծվում և այլն: Վարձակալած գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով: Եթե վարձակալն իր միջոցների հաշվին և վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, պայմանագիրը դադարելուց հետո վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով: Վարձակալի կողմից առանց վարձատուի համաձայնության վարձակալած գույքից կատարած անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Վարձակալած գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարված ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են վարձատուի սեփականությունը: Ենթավարձակալության պայմանագիրն ածանցվում է վարձակալության պայմանագրից և նրա նկատմամբ կիրառվում են վարձակալության պայմանագրի մասին կանոնները: Ենթավարձակալության պայմանագիրը չի կարող կնքվել վարձակալության պայմանագրի ժամկետը գերազանցող ժամկետով, ենթավարձակալին տրվող իրավունքների ծավալը չպետք է գերազանցի վարձակալին տրված լիազորությունների ծավալը, վարձակալության պայմանագրի վաղաժամկետ դադարման հետ մեկտեղ դադարում է ենթավարձակալության պայմանագիրը, եթե վարձակալության պայմանագիրը համարվում է առոչինչ, ապա առոչինչ է համարվում նաև դրան համապատասխան կնքված ենթավարձակալության պայմանագիրը: Գույքը ժամանակավորապես ենթավարձակալության հանձնելիս վարձակալը հանդես է գալիս որպես վարձատու, իսկ ենթավարձակալը որպես վարձակալ:

Վարձակալության պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո կողմերը կարող են կնքել նոր պայմանագիր: Նոր ժամկետով վարձակալության պայմանագիր կնքելիս դրա պայմանները կողմերի համաձայնությամբ կարող

են փոփոխվել: Եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատրուի առարկությունների բացակայությամբ, շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով: Եթե պայմանագրով նախատեսված է վարձակալած գույքը գնելու վարձակալի իրավունքը, նա իրավունք ունի գնելու այն՝ պայմանագրով նախատեսված գումարը վճարելու պայմանով: Ընդ որում, կողմերն իրավունք ունեն պայմանագիր կնքելիս պայմանավորվել նախապես մուծված վարձավճարները գնի մեջ հաշվարկելու մասին: Օրենքով կարող են սահմանվել վարձակալած գույքը գնելու արգելքներ: Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի, հիմք չէ վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Անշարժ գույք վարձակալած քաղաքացու մահվան դեպքում վարձակալության պայմանագրով նրա իրավունքները և պարտականությունները փոխանցվում են ժառանգին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Վարձատուն իրավունք չունի մերժելու այդպիսի ժառանգին պայմանագրի կողմ դառնալու մնացած ժամկետում, բացառությամբ, եթե պայմանագիր կնքելը պայմանավորված է եղել վարձակալի անհատական հատկանիշներով: Վարձակալության պայմանագիրը դադարում է քաղ.օր. 27 և 30 գլուխներով նախատեսված ընդհանուր հիմքերով: Միաժամանակ, քաղ.օր. 622, 623 հոդվածներում նախատեսված են պայմանագրի դադարման հատուկ կանոններ: Վարձատրուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, օրենքով սահմանված դեպքերում:

Գրականություն

1. Ա. Մխիթարյան Լիզինգը և դրա առանձնահատկությունները, -Եր, 2013թ.
2. Cuming R. C. C. Model Rules for Lease Financing: A Possible Complement to the UNIDROIT Convention on International Financial Leasing // Uniform Law Review.1998.V.3, p371.
3. Симонова М.Н., Аренда, лизинг, прокат, М., Статус –Кво, 2001.
4. Лещенко М.И., Основы лизинга, М., Прогрес-МТ, 2000.
5. Финансовая аренда /лизинг/ в России. Обзор рынка 2005-2006, М., Международная финансовая корпорация, 2006.
6. Киркоров А., Методы определения эффективности финансового лизинга по сравнению с кредитом, Лизинг ревью, 2000, н.5/6.
7. Касатонов В.Ю., Морозов Д.С., Проектное финансирование: организация, управление риском, страхование, М., Анкил, 2001.

Понятие и особенности арендного соглашения

Григорян Г., Саакян С.

Ереванский Университет “Айбусак”, юридический факультет

В результате заключения договора аренды возникают обязательства в связи с передачей имущества в пользование. В гражданском праве, помимо обязательств, возникающих в связи с отчуждением имущества, существуют также обязательства, возникающие в связи с временной передачей имущества. Они юридически образуют отдельную группу экономических отношений товарной биржи, в рамках которой экономические и другие потребности их участников удовлетворяются за счет временного перемещения материальных благ.

Understanding and Features of the Rental Agreement

Grigoryan G., Sahakyan S.

Yerevan “Haybusak” University, Faculty of Law

Because of concluding a lease agreement, obligations arise in connection with the transfer of the property for use. In civil law, in addition to liabilities arising from the alienation of property, there are liabilities arising from the temporary transfer of property. They legally form a separate group of economic relations of trade, in the framework of which the economic and other needs of their participants are met due to the temporary transfer of material goods.

**ՓԱԽՍՏԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ**

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.

Քաղաքագիտության թեկնածու, դոցենտ

Երևանի Հայրուսակ համալսարան, Իրավաբանական ֆակուլտետ

ՏԵՐՈՅԱՆ Ա.

ԵՀՀ Իրավաբանական ֆակուլտետ, ասպիրանտ

Ամփոփում. Քննարկված են փախստական հասկացության կարգավորումները ազգային և միջազգային օրենսդրությամբ: Վերլուծված են փախստական, քաղաքացի, օտարերկրացի, քաղաքացիություն չունեցող անձ, ապաստան, ապաստանի իրավունք հասկացությունները, փախստականների իրավունքները կարգավորող փաստաթղթերի

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ 2020

ամբողջությունը, միգրացիայի հետ կապված ներկայիս զարգացումները և հիմնախնդիրները:

Առանցքային բառեր. փախստական, միջազգային իրավական ակտեր, միգրացիա, քաղաքացիություն չունեցող անձ, պարտականություն, ապաստանի իրավունք:

Ըստ ՄԱԿ ՓԳՀ-ի «Համաշխարհային միտումներ» տարեկան զեկույցի, որը հետևում է բռնի տեղահանմանը ամբողջ աշխարհում կառավարությունների տրամադրած տվյալների հիման վրա, «Ներքին տեղահանման մոնիտորինգի կենտրոնի» գործընկերների և կազմակերպության սեփական հաշվետվությունների 2016թ. տարեվերջի դրությամբ 65.6 միլիոն անձ է տեղահանվել՝ համեմատած դեռ տասներկու ամիս առաջ արձանագրված 65.3 միլիոնի: Արդեն երկրորդ տարին է, որ այս թիվը հատում է 60 միլիոնի շեմը: Ընդհանուր 65.6 միլիոնից 2.8 միլիոնը զարգացած արդյունաբերական երկրներից են, այդ մարդիկ 2016թ. տարեվերջյան տվյալներով սպասում էին ապաստան ստանալու որոշմանը, 22.5 միլիոնը փախստականներ են ամբողջ աշխարհում և 40.3 մլն. այն անձինք են, ովքեր ստիպված են եղել լքել իրենց տները, սակայն մնացել են իրենց երկրի սահմաններում: «Համաշխարհային միտումներ» զեկույցում տեղ գտած երկրներից մի քանիսը առանձնանում են. Սիրիան 4.9 միլիոնով, Աֆղանստանը՝ 2.7 , Սոմալին՝ 1.1, և կազմում են ամբողջ աշխարհում ՄԱԿ ՓԳՀ մանդատի տակ գտնվող փախստականների կեսը: Մինչդեռ Կոլումբիան՝ 6.9, Սիրիան՝ 6.6, Իրաքը 4.4 միլիոնով ունեն ամենաբարձր ցուցանիշը ներքին տեղահանության ենթարկված մարդկանց շրջանում: Եմենը 2015թ.-ին ամենամեծ ներքին տեղահանություն առաջացրած երկիրն է՝ 2.5 միլիոն մարդ կամ բնակչության 9 տոկոսը: Եվ հատկապես նրանց մոտ 80%-ը կազմում են կանայք և երեխաներ, որոնք կարիք ունեն իրենց հիմնական իրավունքների պաշտպանության, հատկապես մարդու արժանապատիվ գոյության իրավունքի: Այստեղից էլ երևում է Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ի խոսքերի արդարացիությունը, որը փախստականների խնդիրը անվանեց «մեր ժամանակի ամոթալի վերքը»:

Հայաստանի Հանրապետությունում գտնվող փախստականների, ապաստան հայցողների հիմնական մասը Սիրիայից, Իրաքից, Իրանից, Աֆրիկյան պետություններից (Կոտո'իվուար, Մալի, Կոնգո), Ուկրաինայից են: Արցախում տեղի ունեցած ապրիլյան պատերազմից հետո մեծ էր նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից տեղահանված մեր հայրենակիցների քանակը (2000-ից ավելի անձ):

Ըստ ՄԱԿ ՓԳՀ-ի Հայաստան ներկայացուցչության 2017թ տվյալների՝ Հայաստանում կա մտահոգության առարկա հանդիսացող 18606 անձ, որոնցից 3349-ը՝ փախստականներ, 71-ը՝ ապաստան հայցողներ, 14573-ը՝ փախստականի նման իրավիճակում հայտնված անձինք (Սիրիայի Արաբական Հանրապետությունից տեղահանված անձինք՝ 14.000, Լեռնային Ղարաբաղից

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստան տեղահանված անձինք՝ 573), 613-ն էլ՝ քաղաքացիություն չունեցող անձինք:

Փախստականները և ապաստան հայցողները համարվում են առավել խոցելի և իրենց իրավունքների պաշտպանության տեսանկյունից առավել ուշադրություն պահանջող, քանի որ, որպես կանոն, նրանք համապարփակ տեղեկացված չեն իրենց կարգավիճակից բխող իրավունքների մասին: Մեկ այլ խնդիր է նրանց ինտեգրումը տվյալ երկրի հասարակությանը, որտեղ նրանք հարկադրաբար տեղափոխվել են: Դեպքեր են լինում, երբ նրանք, թողնելով ամբողջ ունեցվածքն իրենց հայրենի երկրում, սոցիալական ծանր իրավիճակում են հայտնվում հյուր ընկալող երկրում:

Ախջազգային հանրությունը մեծ ջանքեր է գործադրում ինչպես փախստականների կարգավիճակի խնդիրները լուծելու ուղղությամբ՝ միջազգային և տարածաշրջանային համաձայնագրեր մշակելով, փախստականների պաշտպանության մեխանիզմների ստեղծմամբ, ազգային օրենսդրության կատարելագործմամբ և այլն, այնպես էլ փախստականների թիվը պակասեցնելու ուղղությամբ: Չնայած գործադրվելիք միջոցներին՝ փախստականների թիվը գնալով աճում է: Այս փաստն առաջացնում է նոր խնդիրներ, որոնք ենթադրում են ինչպես այդ խնդիրների տեսական, գիտական ուսումնասիրություն, այնպես էլ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն:

Այդ հանգամանքներով է պայմանավորված տարբեր պետությունների և միջազգային կառույցների կողմից փախստականների, ապաստան հայցողների և հարկադրաբար տեղահանված այլ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորող իրավական ակտերի ընդունումը:

Միավորված ազգերի կազմակերպության 1951 թվականի Փախստականների կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիան և նրա 1967 թվականի արձանագրությունը համարվում են փախստականների իրավունքների պաշտպանության հիմնական միջազգային փաստաթուղթերը: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել, այնուհետև ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 4-ից:

«Սահմանադրությամբ ամրագրված անձի հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն առնչվում է ոչ միայն «քաղաքացիներին, այլ յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ փախստականներին և ապաստան հայցողներին: Այդպիսի իրավունքներից են կյանքի, անձնական ազատության, մտքի, խղճի, կարծիք արտահայտելու և այլ հիմնարար իրավունքներ: Հայաստանի Հանրապետությունում ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը «Փախստականների և ապաստանի մասին» «Օրենքն է, որն ընդունվել է 2008 թվականի նոյեմբերի 27-ին: Այս օրենքով սահմանվում են փախստականի ճանաչման, ապաստանի տրամադրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև այդ անձանց իրավունքներն ու պարտականությունները:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1 կետի համաձայն՝ փախստական է համարվում օտարերկրացին, ով ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ: Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ փախստական է համարվում նաև այն օտարերկրյա քաղաքացին, ով ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

Համաձայն Սահմանադրության 52-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք»: Այս սահմանադրական դրույթից բխում է, որ յուրաքանչյուր ոք, անկախ նրանից՝ ՀՀ քաղաքացի է, թե այլ երկրի քաղաքացի կամ, առհասարակ քաղաքացիություն չունեցող անձ, իրավունք ունի դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում աջակցություն ստանալու նպատակով: Այս անձանց շրջանակի մեջ են մտնում նաև փախստականները, ապաստան հայցող անձինք և իրենց հայրենիքից հարկադրաբար տեղափոխված անձինք:

ՄԱԿ-ը, մյուս միջազգային կազմակերպությունները և պետությունները, որոնք զբաղվում են փախստականների հարցերով, մեծ ջանքեր են գործադրում բարելավելու փախստականների պաշտպանության ուղղված իրավական ակտերը, ինչպես նաև հետևում են, որ փախստականները կարողանան տեղավորվել և պաշտպանություն ստանան այն երկրի կողմից, որից ապաստան են խնդրում: Հաշվի առնելով ներկայիս պատերազմական իրավիճակը Մերձավոր Արևելքում՝ փախստականների հոսքերը գնալով ավելի են շատանում, և այդ իսկ պատճառով նոր իրավական ակտեր ընդունելու և նոր ծրագրեր մշակելու պահանջարկը ավելի է մեծանում:

Գրականություն

1. ՀՀ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը
2. ՄԱԿ-ի 1951 թվականի կոնվենցիա
3. ՄԱԿ-ի լրատվական բաժին «Յուրաքանչյուր 113 մարդուց մեկը ազդակիր է», Ժնև, 20 հուլիսի 2016թ.
4. Тодорович И., Моргун Ю. ООН и права беженцев // Белорус.журн. междунар. права и междунар. отношений. 2004. № 3.
5. Համացանցային կայքեր. www.un.am , www.evolutio.info. www.arlis.am

Регулирование проблем беженцев в национальном и международном законодательстве

Григорян С., Тероян С.

ЕУА, юридический факультет

Право беженцев является институтом права человека — самостоятельной отраслью международного права, хотя кодификационный процесс в области прав беженцев начался ранее, чем регламентация прав человека на международном уровне.

Международно-правовой механизм защиты прав беженцев является частью механизма международной защиты прав человека и функционирует в двух направлениях: разработка конвенций и деклараций, закрепляющих международные обязательства в области прав беженцев, и контрольная деятельность международных органов за соблюдением государствами международных обязательств по правам человека.

The Refugee Concept Regulations under National and International Law

Grigoryan S., Teroyan S.

Yerevan “Haybusak” University, Faculty of Law

The right of refugees is an institution of human rights law – an independent branch of international law, although the codification process in the field of refugee rights began earlier than the regulation of human rights at the international level.

The international legal mechanism for the protection of the rights of refugees is part of the mechanism for the international protection of human rights and operates in two ways: the development of conventions and declarations securing international obligations in the field of refugee rights and the monitoring activities of international bodies in respect of States’ compliance with international human rights obligations.



ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԻՏԱՄԵԹՈԴԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ 2020
YEREVAN "HAYBUSAK" UNIVERSITY SCIENTIFIC AND SCIENTIFIC-METHODOLOGICAL JOURNAL

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ECONOMICS
PEDAGOGY AND PSYCHOLOGY
JURISDICTION**

EDIT PRINT
43 D. Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am